տեսակ

#6(71)
2021

քաղաքի
ամսագիր

ереван / yerevan

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

«Անտարեսը»

► Ստեղծում է
ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ

- գրքեր
- ձեռնարկներ
- դասագրքեր

► Ձգտում է ձևավորել
ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ

- մթնոլորտ
- մրցակցություն
- հասարակություն

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ մթնոլորտը ձևավորվում է այն մարդկանց միջոցով, որոնք կարևորում ու ձեռք են բերում ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ գրքեր:
Ձևավորի՛ր մթնոլորտ:

Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26
antares@antares.am / www.antares.am

Վահան Սրբեմեկյան

Ի անգամ բարի մարդիկ մեր խմբագրություն բերեցին ու ինձ հանձնեցին տիեզերագնացի ոտնահետքով բետոնի սալիկ։ Շատ զարմացա, չհասկացա՝ ինչ անել դրանով։ Պարզվեց՝ ինձ հրավիրում են Հայպետհրատի շենք։ Բայց ոչ թե գրքի շնորհանդեսի, այլ Թույն էլեկտրոնային փարթիի (որը ես, սակայն, չէի կարող լիարժեք գնահատել, քանի որ կեսգիշերին արդեն աչքերս կպնում էին, մինչդեռ ամենահետաքրքիրը սկսվելու էր դրանից շատ հետո)։ Հաջորդ անգամ, երբ խմբագրություն բերեցին պահածոյացված գունազարդ գուլպաների զույգ, արդեն գրեթե չզարմացա։ Ոչ էլ զարմացա նրանից, որ տժժալու համար պետք էր գնալ շարժիչների նախկին գործարան։ Ամեն ինչ տրամաբանական է. էլեկտրոնային մյուզիքը նոր ժամանակների շարժիչն է։
Ինչևէ, անվերջ զարմանալու փոխարեն ուշադիր զննեցի ֆեյսբուքիս լրահոսը, հետո նայեցի շուրջս, հետո ստուգեցի ամսվա իրադարձությունների ցանկը ու հասկացա, որ Երևանում տիրում է ռեյվը։ Հենց այսպես, դանդաղ, բայց վստահ քայլերով էլեկտրոնային երաժշտությունը դարձավ կարևորագույնը Երևանում։ Պարահրապարակի են վերածվում ամենատարբեր տարածքները՝ կրկեսից ու Հայֆիլմից մինչև Գրքի պալատն ու Մանկական երկաթուղին։ Հետո տժժիկները տեղափոխվում են Սևանի ափեր ու Դիլիջանի անտառներ (ու ինչքան հեռու, ասում են, ավելի լավ)։ Ու նույնիսկ էական չէ, որ բազմահազար հանդիսատես լինի, արդեն կարևոր է, որ լինի թեմայից հասկացող ու թեման գնահատող զանգված։ Թեմայից ինձնից շատ ավելի գլուխ հանող ռեյվասեր երևանցիներն այլևս պարտադրված չեն գնալ Թբիլիսի՝ այնտեղի հանրահայտ ակումբներում տժժալու համար, այստեղ էլ է լավ, ավելին, հարևան երկրից են շատերը գալիս Երևան հերթական Վիյալոբոսի կամ Պոլոկորպի ռիթմերն ըմբոշխնելու համար։ Ամենադեմք արտասահմանցի դիջեյների գալուստն արդեն չի զարմացնում, մյուս կողմից էլ՝ տեղացի արտիստներն էնքան են հմտացել, որ մենակ իրենք էլ հերիք են։
Իսկ ինչպե՞ս ստացվեց, որ այսպես ստացվեց։ Շատ պարզ. պատմականորեն էլեկտրոնային տժժիկները (ռեյվ, փարթի, իվենթ՝ անվանեք ինչ կուզեք) եղել են առօրյայից գոնե ժամանակավորապես կտրվելու ցանկացողների ապաստարան։ Այստեղ մարդիկ մնում են մեն-մենակ երաժշտության ռիթմերի հետ, որոնց օգնությամբ թոթափում են կենցաղային խնդիրներն ու, եթե կեսից չեն հանձնվում, լուսաբացին տուն են գնում մի քիչ ավելի հանգիստ, ուրախ ու ազատ։
Համենայն դեպս, էդպես են ասում իմացող ռեյվերները։ Ես, կողքից նայելով, կարող եմ միայն ենթադրել, որ այս ամբողջ մշակույթն իրոք գոնե մի փոքր ավելին է, քան պարզապես դկցկ-դկցկի տակ պար գալը։ Միայն դրանով հաստատ չէր դառնա նոր ժամանակների շարժիչը։

Գլխավոր խմբագիր
Արտավազդ Եղիազարյան

ՔԱՂԱՔԱՄԵՋ

04 Կինո
Աշնանային ծիրանահավաք
Ոսկե ծիրան կինոփառատոնը վերադառնում է, այս անգամ՝ հոկտեմբերին:

06 Արվեստ
Ինչպես Նյու Յորքում
Մոնիկան Ջիթողլյանի՝ Զրվեժում կառուցված նոր արվեստանոցը նաև ցուցասրահ է:

ՌԵՅՎ

10 Խորհուրդ
9 խորհուրդ նորելուկ ռեյվագնացներին
Ինչպես պատրաստվել ու ինչին ուշադրություն դարձնել իսկական պեխնո իվենթին գնալուց առաջ:

14 Հուշեր
«Ոնց որ այլ մոլորակում հայտնված լինեի»
1990-2000-ականների երևանյան ակումբային կյանքը:

18 Սեփական փորձ
«Մենք օգնում էինք պոկվել իրականությունից»
Երևանի մի քանի կարևորագույն ակումբների ու նախաագծերի հիմնադիրների փորձը:

20 Իմ Երևան
Արամ Չախոյան
Ռադիոհաղորդավար և էլեկտրոնային երաժշտության զարգացողի Երևանը:

22 Առաջամարտիկ
Էլ հաուս, էլ բրեյքբիթ, էլ տրանս, էլ թեքնո
Հայկական էլեկտրոնայինի առաջամարտիկներ՝ X-Phobos:

24 Հավասարություն
Paws
Հայաստանի հայտնի կին դիզեյներից մեկի՝ Anais Paws-ի իրարամերժ փորձառությունը:

26 Մուտք
Դուք դեմք եք
Ինչու է կարևոր ֆեյս ֆընթրոլը և ինչ առավելություններ ունեն այդ գործում կանայք:

28 Համաշխարհային փորձ
Գառնին՝ երեք անկյունից
Ինչպես Գառնիի դահարը դարձավ ռեյվի դարաձգ:

30 Համաշխարհային փորձ
Եռացող կաթսայատունը
Լեգենդար Boiler Room-ի երևանյան թողարկումը:

32 Աջակցություն
Իդրամ. տեխնո ժամանցի տեխնո աջակիցը
Էլեկտրոնային վիճարումների հավելվածի ակտիվ մասնակցությունը տեխնո իվենթներին:

34 Դպրոց
Ռեյվի պալատ
Ինչպես նախկին Գրքի պալատում բացվեց Երևանի ամենաառաջադեմ ակումբներից մեկը:

36 Հանրահռչակում
Kitchen-ի ներքին խոհանոցը
Ինչու ոլորտը չի կարող վարգանալ առանց լեյբլների. բացատրում են Kitchen Recordings-ի հիմնադիրները:

40 Այլընտրանք
Pierre Rambal-Cochet
Ինչու է Rambalkoshe-ն զնգում ֆայնի ու վիտրալի միզև եղած սահմանները:

44 Փառատոն
Շոշափելի ուրվական
Ինչպես մոսկվայի պրոմոթերները Երևանում կազմակերպեցին Ուրվականն ու Սինթպոպիումը:

48 Փառատոն
Alteration
Ինչու հենց «Այրարատ» կինոթատրոնի շենքում շուրջ երեք շաբաթ թնդաց Alteration փառատոնը:

52 Խոշոր պլան
Կոմպոզիտորների միություն
Ժամանակակից երևանյան անդերգրաունդի կարկառուններին:

56 Անդերգրաունդ
Ասք Բոհեմնոցի մասին
Մի հեքիաթ մի քանի ընկերների կողմից ստեղծված Բոհեմնոց կոչվող անդերգրաունդ համայնքի մասին:

60 Այնտեղ
Տեխնո ապստամբներ
Ինչու է ռեյվ մշակույթը հատկապես վարգանում ծանր միջավայրում գտնվող վայրերում. պատմական ակնարկ Դեթրոյթի, Բեռլինի ու Լոնդոնի մասին:

64 Կադրերի բաժին
Audiovision փառատոն ՆՓԱԿ-ում, 2004 թ.
Մի պեխնո դրվագ Երևանի պատմությունից:

Շապիկ՝
Արեգ Մովսիսյան

ԵՐԵՎԱՆ #6(71) | 2021

Գլխավոր խմբագիր՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Արտ-տնօրեն՝
ՆՈՆՆԱ ԻՍԱՋԱՆՅԱՆ
Թողարկող խմբագիր՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Գրական խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Սրբագրիչ՝
ՀԱՍՄԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ
Ֆոտոմշակում՝
ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էջադրում՝
ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հեղինակներ՝
Մարգարիտ Միրզոյան, Հասմիկ Բարխուդարյան, Շուշանիկ Փափազյան, Միքայել Զոլյան, Ելեն Բաբալյան, Վահան Ստեփանյան, Արտավազդ Եղիազարյան

Լուսանկարներ և պատկերազարդումներ՝
Վահան Ստեփանյան, Հարություն Մալխասյան, Էլիզա Մխիթարյան, Նարեկ Ալեքսանյան, Էդ Թադևոսյան, Գևորգ Զատիկյան, Միքայել Նազարենկո, Կիրա Կաչալինա, Բիայնա Մահարի, Գևորգ Հովհաննիսյան, Աննա Մկրտչյան, Մերի Անդրասյան / Հետք Մեդիա Գործարան

Թողարկման խորհրդատուներ՝
Նոնա Իսաջանյան, Վահան Ստեփանյան

Տառատեսակ
Arek Armenian by Rosetta

«Քաղաքի ամսագիր» ՍՊԸ
Տնօրեն՝
Արտավազդ Եղիազարյան

Հայաստանի Հանրապետություն, 0014, Երևան, Պարույր Սևակ 8
էլ. փոստ՝ evnmag@gmail.com
Առցանց՝ evnmag.com

facebook.com/YerevanCityMagazine

instagram.com/evnmag

© 2011-2021 **«ԵՐԵՎԱՆ»**

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«ԵՐԵՎԱՆ» ապրանքային նշանի իրավատեր է հանդիսանում Արտավազդ Եղիազարյանը:

Համարը տպագրության է հանձնվել՝ 17.09.2021

Տպագրված է Անտարես տպագրատանը, 0009, Երևան, Մաշտոցի 50ա/1

Տպաքանակ՝ 5000 օրինակ

Ամսագիրը ղեկավարվում է «Զանգվածային լրատվության մասին» և «Գովազդի մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ:

Ամսագրի նյութերը վերատպվում են միայն իրավատիրոջ գրավոր համաձայնությամբ: «ԵՐԵՎԱՆ» ամսագրին հղում կատարելը պարտադիր է:

«ԵՐԵՎԱՆ» ամսագրի ստեղծման գաղափարը պատկանում է «Երևան Փրոդաքշն» ՓԲԸ-ին:

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

Աջակցվում է ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի ազակցությամբ

spell

creative marketing agency

let us spell it out for you

SOCIAL MEDIA MARKETING

SEO & PPC

WEB DEVELOPMENT & MOBILE APPS

UI/UX

BRANDING

DESIGN SERVICES

PRINT & DIGITAL MEDIA

CONTENT WRITING

PODCAST PRODUCTION

CONSULTING

PUBLIC RELATIONS

E-COMMERCE

SPELL.AM +374 55 387887



Աշնանային ծիրանահավաք

2021 թվականին վերադառնում է Ոսկե ծիրան կինոփառատոնը: 18-րդը սովորական հուլիսյան շոգի փոխարեն կանցնի հոկտեմբերյան գովի ներքո, իսկ հիմնական հարթակն առազին անգամ կդառնա Կինոյի տունը: Ու չնայած ֆոմիդային սահմանափակումները դեռ չեն ավարտվել, արդեն նորից կարող ենք սպասել մեծ հյուրերի՝ Փոլ Շրեդերից մինչև Նադավ Լապիդ: Եվ, իհարկե, լիքը կինո: Սպասվող իրադարձությունների մասին պատմում է փառատոնի ծրագրերի տնօրեն Կարեն Ավետիսյանը:

↑ Այս ծիրանի գլխավոր հյուրերից մեկը՝ Փոլ Շրեդերը

2020-ից հետո

2020-ին տակնուվրա եղավ աշխարհը, իսկ հետո նաև մենք՝ կրկնակի, եռակի, հազարակի, չնայած եղան մարդիկ, որոնք նախորդ տարվա նոյեմբերին փառատոնի փոքրիկ թողարկման անցկացումը պատերազմի օրերին համեմատեցին պետերբուրգյան բլոկադայի օրերին Շոստակովիչի նվագարկման հետ: Ունեցանք, ինչ ունեցանք, ապրեցինք, ինչ ապրեցինք, վերապրեցինք, ինչ կարողացանք, հասանք 2021, որը լավագույնս բնորոշում է «հետ» նախդիրը՝ «հետպատերազմական», «հետհամաճարակային», «հետքաղաքական-ճգնաժամային» ու միանգամից հասկանում ենք, որ դրանցից գրեթե բոլորի դեպքում էլ «հետ» լինելը դեռ ցավոք հարցական է ու հարաբերական:

Այսպես 2021-ին Ոսկե ծիրանը վերադառնում է ամբողջական փառատոնային թողարկման անցկացման պատրաստակամությամբ, որի մի մասը կլինի նաև «հետպատերազմական տրավմայի» ընկալումը, հետազոտումը: Ցավոք, պատերազմը նույնպես համամարդկային է և ունիվերսալ, այնպես որ՝ Վիետնամ, Պաղեստին, թե Ուկրաինա, բոլորը կգտնեն հետպատերազմական նյարդն ու մտազբաղ զուգահեռները 18-րդ Ոսկե ծիրանի ֆիլմերից շատերում:

Շրեդերը, Լապիդը և Մունդրուկոն

Հետպատերազմական համախտանիշի բոլոր ժամանակների մեծագույն ֆիլմերից մեկի՝ «Տաքսիստի» հեղինակը՝ մեծ կինեմատոգրաֆիստ Փոլ Շրեդերը, կլինի գալիք Ոսկե ծիրանի պատվավոր հյուրը: Նա հեղինակել է նաև նույն Սկորսեզեի «Կատաղած ցուլը», «Քրիստոսի վերջին գայթակղությունը», ինչպես նաև երկու տասնյակից ավելի արդեն սեփական ռեժիսորական ֆիլմեր՝ 70-ականներից մինչ օրս՝ վաղուց դասական «Ամերիկյան ժիգոլոյից» մինչ «Խաղանենգը», որն այս տեքստին զուգահեռ Վենետիկի կինոփառատոնի մրցույթային ծրագրում է: Շրեդերը «Նոր Հոլիվուդի», ուրեմն ինչ-որ առումով նաև ժամանակակից կինո-

← «Գունդայի» գլխավոր հերոսը

← Կաննի հաղթող Ջուլիա Դյուկորնոյի ֆիլմը նույնպես կհասնի Երևանի

↙ Կինոյի կան կինոյին կարոտ դահլիճը

↓ Գասպար Նոեի հերթական աղմկահարույցը



լեզվի, կինոդրամատուրգիայի նահապետներից մեկն է, որն ի տարբերություն իր նահապետ սերնդակիցներից շատերի՝ շարունակում է լինել թարմ ու մարտական մարզավիճակում:
Մեկ այլ սերնդի, այլ մտածելակերպի և այլ տեսլականների ջատագով, իսրայելցի աշխարհահռչակ ռեժիսոր, Բեռլինի Ոսկե արջի դափնեկիր, Երևանում նախորդ տարի ցուցադրված «Հոմանիշներ» ֆիլմի հեղինակ Նադավ Լապիդը կլինի Երևանում, ավելին՝ վերջերս տեղի ունեցած Կաննի 74-րդ կինոփառատոնի ժյուրիի հատուկ մրցանակակիր «Ահեղի ծունկը»՝ նրա նոր ֆիլմը, կբացի 18-րդ Ոսկե ծիրանը:
Թատրոնի և կինոյի հունգարացի վարպետ Կոռնել Մունդրուցոն (այս տարվա Օսկարին ընդառաջ հաստատ դիտել եք իր ողբերգական «Կնոջ մասերը», իսկ դրանից մի քանի տարի առաջ, գուցե, Ոսկե ծիրանի մրցույթում՝ «Սպիտակ աստվածը») իր երևանյան վարպետության դասով կմիավորի կինեմատոգրաֆիկ և թատերական հանրությունը, իսկ 2021-ին կյանքից հեռացած Բերտրան Տավերնյեի «Կեսգիշերին մոտ» ֆիլմը՝ կինոյի և ջազի հանրությունը:

Ավելի մեծ կարածաշրջան

Պատերազմը և աշխարհաքաղաքական փոփոխություններն անդրադառնում են նաև փառատոնային ծրագրերի վրա. այս տարի հասկացանք, որ այլևս անհնար է անել տարածաշրջանային ծրագիր բացառապես մեր հարևան երկրների մասնակցությամբ ու ընդլայնեցինք տարածաշրջանի սահմանները մինչև Առաջավոր Ասիա՝ այդպիսով ունենալով Իսրայել, Սիրիա, Պաղեստին, Լիբանան, Հորդանան, Իրաք ու մի շարք այլ երկրներ, որոնց համատեքստերի հետ իրականում ունենք բազում ընդհանրություններ:

Անկախության կինո

2021-ը նաև հոբելյանից առաջ Հայաստանի 3-րդ Հանրապետության 30-ամյակն է, որի շրջանակում կդիտենք Դավիթ Սաֆարյանի «Կորսված դրախտ», Վիգեն Չալդրանյանի «Տեր ողորմեա», Հարություն Խաչատրյանի «Վերադարձ ավետյաց երկիր» ֆիլմերը՝ 3 լիամետրաժ ֆիլմ՝ նկարահանված 1991 թվականին, որոնց վերնագրերի շարադասությունը խոսում է իրենց փոխարեն:

Ահեղահեղ ու ծուռ

Ընթացքի մեջ է Ծուռ ծիրանը՝ ժանրային, սահմանային, շոկային ֆիլմերի ցուցաշարը, որում այս տարի ընդգրկված կլինի Ոսկե արմավենու ճյուղի դափնեկիր «Տիտանը», Վերհուվենի «Բենեդետան» և այլ անակնկալներ, այդ թվում և մեր հայրենակիցներից: Սկանդալային ֆիլմերի շարքը կշարունակի ռումինացի Ռադու Ժուդեի Bad Luck Banging or Loony Porn՝ Բեռլինի գլխավոր մրցանակակիր ֆիլմը, որի վերնագրի թարգմանության վրա գլուխ ենք ջարդում մինչ օրս, իսկ օրինակ Գասպար Նոեի VORTEX-ը սկանդալի փոխարեն հանդիսատեսի համար կլինի միանգամայն անսպասելի անակնկալ:
Էկոօրակարգը շեշտադրելու է Վիկտոր Կոսակովսկու փառահեղ «Գունդան»՝ վավերագրական բայոփիքը խոզի, կովի և հավի և իհարկե ինքներս մեր մասին: Ոսկե ծիրանի լավագույն հյուրերից Լեոս Կարաքսն այս տարի իր փոխարեն Երևան կգործուղի «Անետին» (ծավալուն մյուզիքլ, որտեղ Ադամ Դրայվերն ու Մարյոն Կոտիյարը երգում-պարում են Սփարքս եղբայրների գրած երաժշտության ներքո), իսկ ամենահայտնի կենդանի իրանցի կինոգործիչ Ասղար Ֆարհադին՝ «Հերոսին»:

Լույսը՝ թունելի վերջում

Վիզուալ արշավի հեղինակը ֆրանսաբնակ գրաֆիկ դիզայներ ու գրաֆիկական վեպերի հեղինակ Վահրամ Մուրադյանն է, որն այս տարի նաև հասցրել է հեղինակել Կաննի կինոփառատոնի զուգահեռ ծրագրերից մեկի պաստառը: Արշավի հայեցակարգն էր՝ պատկերել 2020-2021 թվականների տարանցիկ իրավիճակը, մեր՝ անվերադարձ գնացած անցյալի ու առայժմ չեկած, ոչ այնքան հայտնի ապագայի արանքում գտնվելը: Մուրադյանի պատկերած չորս ազդագրերում (հիմնական և առանձին ծրագրերի համար) խավարը կարծես անցյալում է, իսկ թունելի վերջում արդեն երևում է լույսը, բայց դրան դեռ պետք է հասնել: Մյուս կողմից էլ՝ լույսը կինոէկրանից հորդող կինոն է մութ դահլիճում:
Ի դեպ, կինոէկրանի մասին. այս աշնանը, ի տարբերություն նախորդ տարիների, առավել ակտիվ կլինի Երևանի «Կինոյի տունը»՝ որպես փառատոնի հիմնական տարածք ու ջերմ միջավայր ապահովող ապաստարան կինոյին կարոտ մնացած մեր ու մեր հանդիսատեսի համար:

Սարեն Ավետիսյան

Ինչպես Նյու Յորքում. Տիգրան Չիթողցյանի արվեստանոցուցասրահը

Նյույորֆաբնակ նկարիչ Տիգրան Չիթողցյանի սիրտը միշտ Հայաստանի հետ է ու արդեն ավելի հաճախ գալու առիթ կա. այստեղ բացել է իր արվեստանոց-ցուցասրահը, որն առանձնահատուկ է ոչ միայն բովանդակությամբ ու նշանակությամբ, այլև եզակիությամբ: Յուրաքանչյուրն այն կարող է տեսնել սեփական աչքերով ամեն շաբաթ օր: ԵՐԵՎԱՆը եղել է նորաբաց արվեստանոցում ու կրուցել նկարչի հետ:

«Ուշադիր դիտեցեք: Այս աշխատանքների հեղինակը երևանցի դպրոցական Տիգրան Չիթողցյանն է: Տղայի գեղարվեստական մեծ շնորհքը հատուկ նշվել է Մոսկվայի, Լենինգրադի, Մադրիդի, Նյու Յորքի ցուցահանդեսներում»: Այսպես է սկսվում հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիայի 1990-ի նկարահանված «Պահպանի՛ր նրան, Տիրամա՛յր» ֆիլմը: Ռոբերտ Ամիրխանյանի երաժշտությունը, իր շնիկի հետ լճափին վազվզող տղան ու նրա աշխատանքներից նայող՝ ինչ-որ բան պատմող, զգուշացնող խոշոր աչքերն ընդմիշտ դրոշմվել են հիշողությանս մեջ դեռ մանկուց, երբ առաջին անգամ տեսա այս ֆիլմը: Եվ ո՞վ կմտածեր, որ տարիներ անց մենք կհանդիպեինք իր արվեստանոցում: Դեպի Ձորաղբյուրի Տիգրան Պետրոսյան 15 հասցեն տանող ճանապարհին մի շարք հարցեր են առաջանում. ինչո՞ւ այսքան հեռու Երևանի կենտրոնից, ինչո՞ւ հենց այստեղ, մի՞թե մարդիկ իսկապես կայցելեն արվեստանոց-ցուցասրահը: Շրջակա կառույցներից միանգամից տարբերվող արվեստանոցի դուռը բաց էր, ներս մտա ու մի պահ թվաց, թե տեղափոխվեցի այլ իրականություն, ու մինչ Տիգրանը ժպիտը դեմքին անշտապ կմոտենար ինձ, մտածում էի՝ չէ, հաստատ արժեր հասնել այստեղ: Առաջին բառերը, որ միտքդ են գալիս՝ մինիմալիզմն ու պարզությունն են: Այդ կառույցի հարթ, մոնոխրոմ մակերեսներից ու գծերից տարօրինակ հանդարտություն է ճառագում: Մի տեսակ հետաքրքիր, շահեկան կոնտրաստ կա այս հանդարտ հարթությունների ու Տիգրանի մեծածավալ, համարձակ ու հախուռն աշխատանքների միջև:

Արվեստանոցը հայրենիքում

Տիգրանի ծնողներն ապրում են Հայաստանում, այստեղ են նաև նրա հարազատներն ու բազմաթիվ ընկերները: Այնպես որ՝ կապը հայրենիքի

հետ երբեք կտրված չի եղել: «Ես շատ կապված եմ Երևանի հետ, ամեն անգամ, երբ գալիս եմ, լիցքավորվում եմ: Այսուհետ չեմ ուզում գալ միայն որպես հյուր, պիտի նաև աշխատեմ այստեղ, երբ չեմ աշխատում, զգացողությունը կիսատ է մնում»,– անկեղծանում է Տիգրանն ու հավելում, որ հաճախ է ստանում «Ե՞րբ ես գալու» կամ «Ե՞րբ ես կրկին ցուցադրվելու Հայաստանում» բնույթի հարցեր:
«Արվեստը զրկվում է իմաստից, երբ նրանով չես կիսվում: Ինձ համար կարևոր է կիսվելը, ոգեշնչելը, շարունակաբար ցուցադրվելը, դա ինձ հաճույք է պատճառում»: Այժմ, իհարկե,

այս հաստատությունը դեռ այնքան էլ արվեստանոց չի հիշեցնում, այն ցուցասրահի, մասամբ էլ տան տպավորություն է թողնում, քանի որ Տիգրանը դեռ չի հասցրել տեղավորել իր մոլբերտն ու չի հասցրել աշխատել այստեղ: Սակայն մյուս տպավորությունները ևս սխալ չեն: Կառույցը նախատեսված է թե՛ ցուցադրությունների և թե՛ արտերկրից ժամանած հյուրերի համար որպես փոքրիկ հյուրատուն: Տիգրանը նախատեսում է իր արվեստանոց-ցուցասրահը վերածել մի վայրի, ուր, ինչպես 1960-80-ականների Երևանում էր, կամ էլ հենց ներկայիս Նյու Յորքում է, հաճախ կմտնեն արվեստասեր մարդիկ, արվեստագետներ ու արվեստաբաններ, կծանոթանան իր նոր գործերին ու կծավալեն քննարկումներ: Բացի դա, Տիգրանը նպատակ ունի Հայաստան հրավիրել իր կոլեգաներին ու ծանոթացնել հայ արվեստագետների հետ, երիտասարդների համար կազմակերպել տարատեսակ վորքշոփեր ու նույնիսկ նրանց հրավիրել իր նյույորքյան արվեստանոց՝ նոր փորձառություն ձեռքբերելու, նոր միջավայրի ու մարդկանց հետ ծանոթանալու համար:

Դուռը բաց է, մտե՛ք

Ինչպես արդեն նշեցի, այս արվեստանոցն առանձնահատուկ է նրանով, որ մուտքն այստեղ արգելված չէ, ու անավարտ գործեր տեսնելն էլ միանգամայն նորմալ է. Տիգրանը դեմ չէ ու արդեն իսկ ցուցադրել է դրանից մի քանիսը: Ի դեպ՝ ամեն շաբաթ օր՝ ժամը 13:00-19:00, արվեստանոցում բաց դռների օր է: Հետագայում, իհարկե, այս ցուցադրությունը կփոխարինվի, կհամալրվի, կլինեն նաև այլ աշխատանքներ, մասնավորապես Տիգրանի ստեղծագործության վաղ շրջանից, ընդհուպ մինչև մանկություն: Նկարիչը հույս է հայտնում, որ շնորհիվ իր տարբեր շրջանի ստեղծագործությունների, էքիզների ու տեղում արվող աշխատանքի՝ տարածքը հաճախ կտրանսֆորմացվի:
Ու, իհարկե, չդիմացա ու հայտնեցի ճանապարհին առաջացած մտահոգությունս՝ քաղաքի կենտրոնից այդքան հեռու տեղակայված լինելու մասին: Պարզվում է՝ հենց կողքի տունը կառուցել է Տիգրանի հայրիկն ու այդ ամառանոցում հաճախ է ընկերների հետ ժամանակ անցկացրել Տիգրանը. «Ամբողջ Երևանն այստեղ փարթի է արել»,– ասում է Տիգրանն ու ծիծաղում, հետո մի քիչ տխրությամբ նշում, որ այդ մարդիկ հիմա արդեն ավագ սերունդն են, իսկ երիտասարդների համար չի անհանգստանում, վստահ է՝ կհետաքրքրվեն ու կգան: Բացման օրը, օրինակ, նախատեսվածից շատ՝ 450 հյուր է ունեցել, իսկ հաջորդ օրը, երբ առհասարակ ոչ ոքի չէր սպասում, հյուրընկալվել է 120 հոգի ու դա այն դեպքում, երբ արվեստանոցի հասցեն դեռ հրապարակված չէր: Այնպես որ՝ իմ մտահոգությունները միանգամայն անտեղի էին:

Մի խումբ հայեր՝ Արսենը, Արմենը, Dzzz-ն ու էլի 60 հոգի

Տիգրանը հպարտությամբ է նշում այն փաստը, որ որոշել է կառուցել, ոչ թե գնել, ասում է՝ աշխարհում դրանից ոչինչ չէր փոխվի: Իսկ այ կառուցման գործում համագործակցել է միայն տեղացի մասնագետների հետ: Ճարտարապետն Արսեն Շուռ Կարապետյանն է: Այդ համագործակցության մասին Տիգրանը հաճույքով է խոսում, ասում է. «Կես բառից միմյանց հասկանում էինք, ես պատմում էի, թե ինչ եմ պատկերացնում, Արսենը շարունակում էր, հաճախ ես ինքս էի հորդորում, որ ավելի փախած բան անենք, կոնֆլիկտ չունեինք, երկուսս էլ նույն բանն էինք ուզում ու ստացանք: Ինձ համար կարևոր էր, որ շինությունը ևս իրենից գեղարվեստական արժեք ներկայացներ, որ այն ևս կրեր նոր մոտեցում ու նոր մշակույթ»:
Կառույցը երեք տարում ի մի են բերել տեղացի 60 շինարարներ:
Ցուցադրության մասով Տիգրանը համագործակցել է արվեստաբան, համադրող Արմեն Եսայանցի հետ: Այս համագործակցությունն առաջինը չէ, դեռևս 2015-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում բացվել էր Տիգրանի «Հայելիներ» շարքի ցուցադրությունը: «Արմենը մեր լավագույն արվեստաբաններից է,– ասում է Տիգրանը,– նա ապրում է արվեստով և շատ լավ տեղյակ է, թե ինչ է կատարվում աշխարհում այս ոլորտում: Նաև պիտի ասեմ, որ ցուցադրության լուսավորությունն էլ վստահել եմ Գաֆէսճեան արվեստի կենտրոնի մասնագետներին: Այդքան լավ լույս չեն դնում նույնիսկ Նյու Յորքում»:
Բացի կտավների առանձին լուսավորությունից, տարածքում կա ևս մի լուսատու: Առաստաղն օձի պես գրկած ու ամբողջ տարածքը միանգամայն վերափոխած այդ լուսատուն հայաստանյան Dzzz դիզայներական խմբի աշխատանքն է: «Dzzz-ենց մասին չգիտեի, Արսենը պատմեց ու առաջարկեց դիմել իրենց ու ես միանգամից համաձայնեցի»,– ուրախությամբ նշում է նկարիչը: Այս հրաշալի արվեստի վայրը դեռ նոր է բացվել, բայց արդեն երևում է, թե ինչ մեծ դեր կարող է խաղալ Հայաստանի կյանքում: Տիգրանն արդեն ունի բազում հեռահար ծրագրեր, բայց համբերատար է, չի շտապում ու պատրաստ է ցանկացած շրջադարձի. «Ես զգում եմ, որ այն, ինչ անում եմ ու դեռ կանեմ, պետք է Հայաստանին: Եթե մարդիկ շարունակեն գալ, ապա այս տարածքը կապրի, եթե ոչ, այն քիչ-քիչ կմեռնի ու երկու տարբերակն էլ ես միանգամայն նորմալ եմ համարում»,– ասում է Տիգրանը:

Համլիկ Բարխուդարյան
Էդ Թադևոսյան

ԻՆՉՊԵՍ ԳՐԱՎԵՑԱ ԱՇԽԱՐՀԸ, ԱՄԲՈՂՋԵ

ԵԽՆՈՆ ՄԲՈՂՋ ՉԵՏՈ ՐԵՎԱՆԸ

Ուսումնասիրել ենք Երևանի ռեյվոլորտը և շփվել դրա կայացման համար պատասխանատու կարևորագույն դեմքերի հետ:

9 ԽՈՐՀՈՒՐԴ ՆՈՐԵԼՈՒԿ ՌԵՅՎԱԳՆԱՑՆԵՐԻՆ,

ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՀԱՃՈՒՅՔ ՍՏԱՆԱԼ ՌԵՅՎԻՑ ԵՎ ՀԱՄԸ ՉՀԱՆԵԼ

Վաստակավոր ռեյվագնաց, քաղաքագետ Միքայել Զոլյանի սպառիչ ուղեցույցը բոլոր նրանց համար, ովքեր դեռ իրենց խորթ են համարում էլեկտրոնային երաժշտության միջոցառումներին:

Շնորհակալություն Արփիին, Արբակին, Բագրատին, DJ Aerials-ին, Lychee-ին, Մաքսին, Օլգային, Սերհիյ Լեշչենկոյին և բազմաթիվ անանուն ռեյվերների՝ այս հոդվածի համար մտքեր տալու համար:

Հաճախ կարելի է լսել, որ ռեյվն ամեն մարդու տեղ չէ, իսկ էլեկտրոնային երաժշտությունն ամեն մարդու բան չէ: Սիրելի բարեկամ, մի՛ լսիր այն մարդկանց, ովքեր այդպես են ասում: Իրականում ռեյվը մի տեղ է, որտեղ յուրաքանչյուր մարդ՝ անկախ սեռից, ազգությունից, սոցիալական ծագումից և մնացած ամեն ինչից, կարող է իրեն զգալ ինչպես տանը: Ի տարբերություն երաժշտական այլ ոճերի, որոնց սիրահարները երբեմն էլիտիզմով են տառապում՝ էլեկտրոնային երաժշտության ամենաբնորոշ գծերից է դեմոկրատիզմը: Այս երաժշտությունը հասանելի է բոլորին: Պարզապես պետք է ազատ լինել կարծրատիպերից և բաց լինել նոր փորձառությունների համար: Եվ իհարկե, ինչպես և ցանկացած մշակութային միջոցառման ժամանակ, կան որոշակի գրված և չգրված կանոններ, որոնց արժե հետևել, և ձեզ մոտ ամեն ինչ հիանալի կլինի:
Իհարկե, այն, ինչի մասին խոսում ենք այստեղ, հարյուր տոկոսանոց ճշմարտություն չէ: Էլեկտրոնային երաժշտության աշխարհը շատ բազմազան է, և տարբեր ակումբներում և տարբեր փարթիների ժամանակ ռեյվավարության կանոնները կարող են տարբերվել: Օրինակ՝ կարող է լինել այնպես, որ, կարդալով այս հոդվածը՝ ոտքից գլուխ սև հագած գնաք ակումբ, և ձեզ չթողնեն ներս, քանի որ այդ օրվա փարթիի դրեսկոդն ուրիշ է: Այնպես որ՝ ամեն դեպքում, ուսումնասիրեք և մտածեք ինքներդ: Ես էլ մի քանի խորհուրդ կտամ, գուցե դրանցից մի քանիսը ձեզ պետք գան: Եվ ուրեմն, սիրելի նորելուկ ռեյվագնաց, ներկայացնում ենք ձեզ ինը քայլից բաղկացած մի ուղեցույց, որը կօգնի ձեզ դառնալ իսկական ռեյվեր:

ԽՈՒՐՀՈՒՐԴ #1 / ՀԱՍԿԱՑԵՔ ԹԵ ԻՆՉ Է ՌԵՅՎԸ

Սովորաբար մարդիկ հիասթափվում կամ ունենում են տհաճ փորձառություն, քանի որ ռեյվին վերաբերվում են որպես պարզապես երեկույթի՝ հարբելու, պարելու և տղաների/աղջիկների հետ ծանոթանալու առիթի: Իհարկե, այդ ամենը ևս կարող է տեղի ունենալ, բայց հիմնական իմաստը դա չէ: Ռեյվը մարզա-մշակութային միջոցառում է: Մշակութային է, քանի որ հիմնական բաղադրիչը երաժշտությունն է: Զարգացած երկրներում որակյալ էլեկտրոնային երաժշտությունը վաղուց արդեն համարվում է մշակութային արժեք, և պատահական չէ, որ, օրինակ, Բեռլինի լավագույն ակումբները քաղաքի իշխանությունների կողմից դասվել են մշակութային օբյեկտների թվին՝ թանգարանների, թատրոնների, համերգասրահների հետ միասին: Իսկ թե ինչու մարզա-մշակութային, կարծում եմ ակնհայտ է: Նվիրյալ ռեյվերը հաջողված փարթիի արդյունքում մի երկու կիլոգրամ քաշ է կորցնում, եթե իհարկե կամքի ուժը հերիքում է, որ հաջորդ օրվա առավոտյան տուն գնալիս շաուրմա չխեղդի:
Իհարկե, եթե լուրջ խոսենք, ռեյվը նաև շատ ավելին է, քանի մարզա-մշակութային միջոցառումը: Որոշ փորձառու ռեյվերներ կասեն ձեզ, որ իրենց համար ռեյվը հոգեթերապիայի նման մի բան է, իսկական հոգևոր փորձառություն, որն օգնում է վերգտնել ներքին հանգստությունը և ներդաշնակությունն աշխարհի հետ: Բայց ոմանց համար էլ այն կարող է պարզապես լավ ժամանակ անցկացնելու միջոց լինել, և դա էլ է միանգամայն նորմալ:

ԽՈՒՍՓՈՒՄ #2 / ՉԵՏԱՔՈՏԵՔ ԵՎ ԸՆՏՐԵՔ

Եվ ուրեմն, դուք արդեն գիտեք, թե ինչ է ձեզ սպասում և հոգեբանորեն պատրաստ եք ձեր առաջին ռեյվին: Ինչպես գտնել այն ռեյվը, որին ուզում եք այցելել: Լավագույն տարբերակը՝ ծանոթ ռեյվերներից հարցնելն է, քանի որ նրանք կարող են իմանալ այնպիսի անդերգրաունդ միջոցառումների մասին, որոնց մասին ոչ ոք չգիտի, իսկ դրանք, ասում են, ամենալավն են: Եթե ծանոթ ռեյվեր չունեք, ձեզ կօգնի համացանցը, օրինակ, Resident Advisor կայքը:
Եթե ձեր նախընտրած ռեյվին նվագող դիջեյների անունները ձեզ ծանոթ չեն (իսկ դա շատ հավանական է և միանգամայն նորմալ անգամ փորձառու ռեյվերների համար), արժե գտնել նրանց, օրինակ՝ Soundcloud հարթակում և մի քիչ լսել: Ընդհանրապես էլեկտրոնային պարային երաժշտությունը շատ հարուստ է տարբեր ուղղություններով, և դրանց մեջ կան այնպիսիները, որ այնքան էլ հեշտ ընկալելի չեն ոչ միայն սկսնակների, այլև փորձառու ռեյվերների համար: Շատերին ծանոթ իրավիճակ է. ընկերները ձեզ տանում են իրենց խոսքերով մի հիանալի ակումբ, բայց հենց մտնում եք ներս, չնաշխարհիկ մեղեդիներ և կենսախինդ ռիթմեր լսելու փոխարեն ձեզ սկսում է թվալ, որ ինչ-որ մեկը մուրճով հարվածում է ձեր թմբկաթաղանթներին: Հենց դրա համար ռեյվին գնալուց առաջ արժե ծանոթանալ դիջեյներին, հասկանալ, թե որ դիջեյներն են նվագում, որ ժամին և որ սթեյջում, որպեսզի ընտրեք ձեզ ամենահոգեհարազատ կատարողներին:
Բայց եթե անգամ այս ամենից հետո դուք մտել եք պարահրապարակ և երաժշտությունը ձեզ հոգեհարազատ չէ, մի շտապեք հիասթափվել: Գուցե պետք է պարզապես մի քիչ սպասել, երաժշտությանը շանս տալ, գտնել ճիշտ ալիքը, և շուտով ձեր մարմինը, գրեթե ձեզնից անկախ, կսկսի շարժվել ռիթմին համընթաց:

ԽՈՒՍՓՈՒՄ #3 / ՀԱՆԳՍՏԱՑԵՔ ՌԵՅՎԻՑ ԱՌԱՋ

Փորձառու ռեյվերները խորհուրդ են տալիս ռեյվից առաջ լավ հանգստանալ, ցանկալի է մի քիչ քնել: Ռեյվերը սովորաբար շատ ուշ են սկսվում: Իսկ ամենահայտնի դիջեյները սովորաբար առաջինը չեն նվագում, այնպես որ հաճախ ռեյվի ամենաթեժ մասը սկսվում է առավոտյան կողմ: Ուկրաինացի հայտնի ռեյվեր, վլոգեր և քաղաքական գործիչ Սերհիյ Լեշչենկոն պատմում է, որ հաճախ ռեյվի գնալիս շուտ է պառկում քնելու, հետո արթնանում է վաղ առավոտյան՝ չորսին-հինգին և գնում է ռեյվի, երբ այնտեղ իրականում ամեն ինչ նոր է սկսվում: Բայց, իհարկե, եթե դուք երիտասարդ եք և լի եք ուժերով, ապա կարող եք նաև տանը քնելու փոխարեն երեկոյան գնալ փաբ և այնտեղ շփվել ձեր ընկերների հետ մինչև ռեյվ գնալը: Այդպես դուք ձեր շփման կարոտը կհագեցնեք նախապես և պարահրապարակում պարել փորձող մարդկանց գլուխը չեք տանի խոսակցություններով (տե՛ս խորհուրդ յոթերորդ):

ԽՈՒՍՓՈՒՄ #4 / ՀԱԳՆՎԵՔ ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՎ ՄՌԱՅԼ

Սկսնակ ռեյվագնացների ամենահաճախ պատահող սխալներից մեկը սխալ հագնվելն է: Սա կարևոր է նախ, որ առանց խնդիր անցնեք ֆեյս քընթրոլը և որ հետո ռեյվի ժամանակ ձեզ հանգիստ զգաք:
Ռեյվի գնալիս պետք է գտնել բալանսը հարմարավետ և ոճային հագուստի միջև, ընդ որում՝ ցանկալի է, որ տիրապետեն մուգ և մռայլ գույները: Ռեյվն ինքնաարտահայտման տարածք է, և փորձառու ռեյվերները երբեմն անյպես են հագնվում, որ կարող են մասնակցել նորաձևության ցուցադրություններին: Բայց քանի որ դուք սկսնակ եք, ավելի լավ է ռիսկի չդիմել: Ամեն դեպքում, հիշեք, որ ռեյվի գնալիս ոչ ոք չի հագնում կոստյում կամ շքեղ երեկոյան զգեստ, բայց նաև չարժե գնալ ձեր տան շորտիկով և չստերով: Տղամարդկանց դեպքում գրեթե միշտ աշխատող համադրություն է մուգ գույնի ջինսը, թի-շըրթը և հուդին, բնականաբար՝ սպորտային կոշիկներով: Ռեյվուհիների դեպքում ընդունելի բազմազանությունն ավելի շատ է, բայց գործում է նույն սկզբունքը՝ հարմարավետություն և մուգ գույներ: Փորձառու ռեյվերուհիները խորհուրդ են տալիս վերցնել հնարավորինս փոքր պայուսակ, որը չի խանգարի պարել: Շատերը նաև ռեյվ գնալիս իրենց հետ վերցնում են արևային ակնոց, և դա թիթիզություն չէ, այլ անհրաժեշտություն և ոչ միայն այն պատճառով, որ դուք հավանաբար տուն եք վերադառնալու առավոտյան, երբ արդեն արևոտ է: Լուսային էֆեկտները ռեյվի շատ կարևոր մասն են, և կախված նրանից, թե դուք որտեղ եք կանգնած, լույսը կարող է ուղիղ ձեր աչքերին ընկնել, և այդ դեպքում արևային ակնոցը փրկություն է:

ԽՈՐՀՈՒՐԴ #5 /

ՄԻ ՎԱԽԵՑԵՔ ՖԵՅՍ ՔԸՆԹՐՈՒԼԸ ՉԱՆՑՆԵԼՈՒՑ

Սա երևի ամենակարևոր կետերից մեկն է, քանի որ ֆեյս քընթրոլն ամենալուրջ փորձությունն է: Միայն այդ փորձությունն անցնելուց հետո ձեր առջև կբացվեն երաժշտական այդ դրախտի դռները: Համացանցը լի է մարդկանց վրդովված կամ տխուր պատմություններով, թե ինչպես չեն անցել այս կամ ակումբի կամ ռեյվի ֆեյս քընթրոլը:
Սակայն դրանից պետք չէ վախենալ: Ճիշտ է, որոշ հայտնի ակումբներ, ինչպես, օրինակ, լեգենդար բեռլինյան Բերգհայնը, հայտնի են նրանով, որ այնտեղ գործում է շատ խիստ ֆեյս քընթրոլ, և դուք երբեք չգիտեք, կմտնեք, թե ոչ, նույնիսկ եթե ժամերով հերթ եք կանգնել: Իսկ Բերգհայնի ֆեյս քընթրոլի պատասխանատու, հայտնի լուսանկարիչ Սվեն Մարկվարտն ամենաազդեցիկ մարդկանցից է բեռլինյան ռեյվաշխարհում: Բայց եթե խոսքը Բերգհայնի մասին չէ, ապա, եթե դուք հետևել եք նախորդ խորհուրդներին, այսինքն՝ գիտեք, թե ով է նվագում և ինչ ոճով, հագնված եք ռեյվավարի, հարբած չեք և տասնյոթ տղաներից կազմված խմբով չեք, ապա դժվար թե խնդիր ունենաք մուտքի մոտ: Բացի այդ, անախորժություններից ապահովագրվելու համարյա հարյուր տոկոսանոց միջոց է նախապես տոմսն առնելը, ինչն արդեն վաղուց կարելի է անել օնլայն: Որոշ ակումբներ ունեն վերիֆիկացիայի համակարգ. այսինքն՝ տոմսն օնլայն գնելիս ձեզ հաստատում են ձեր սոցցանցերի հաշվի օգնությամբ: Նաև պատրաստ եղեք մուտքի մոտ պատասխանել մի քանի հարցի՝ օրինակ, ինչ երաժշտություն եք սիրում կամ որ դիջեյին եք եկել լսելու:
Դե իսկ եթե դուք այս երեկո չանցաք ֆեյս քընթրոլը, ապա հիշեք, որ դա ողբերգություն չէ: Պետք չէ պատասխանատուի հետ կռիվ անել, ջղայն ստատուս գրել ֆեյսբուքում, դիմել իրավապաշտպան ՀԿ-երին, թափահարել ձեր պատգամավորական մանդատը, պնդել, որ դուք Ռիկարդո Վիլյալոբոսի հորեղբոր տղան եք և այլ անխոհեմ գործողությունների դիմել: Պարզապես տիեզերքն է այդպես ցանկացել, և լավագույնը, որ դուք կարող եք անել, հաշտվելն է ձեր ճակատագրի հետ, և, օրինակ, գնալ մեկ այլ ակումբ: Իսկ մյուս անգամ գալ ճիշտ հագնված, իմանալ որ դիջեյներն են այդ օրը նվագում, և, ինչը խիստ կարևոր է, հիմար կատակներ չանել ֆեյս քընթրոլի աղջկա հետ:

ԽՈՐՀՈՒՐԴ #6 /

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՔ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՌԵՅՎԱՎԱՅՐՈՒՄ

Եվ ահա դուք վերջապես հայտնվել եք ռեյվի վայրում կամ ակումբում և կարող եք գլխակորույս նետվել պարելու: Բայց մինչ այդ խորհուրդ եմ տալիս մի քանի րոպե ծախսել և հետազոտել իրավիճակը տեղում: Մասնավորապես, հասկանալ ռեյվի կամ ակումբի աշխարհագրությունը. որտեղ է գլխավոր սթեյջը, որտեղ է չիլաութ զոնան, որտեղ են տալիս ուտելիք, սուրճ ու թեյ և այլն: Եվ ամենակարևորը, տեղայնացնել և հետազոտել զուգարանը, չէ՞ որ հավանաբար դուք դեռ երկար ժամանակ կանցկացնեք զուգարանի հերթերում, որտեղ կծանոթանաք բազմաթիվ հիանալի մարդկանց հետ և նրանց հետ խոր և համապարփակ զրույցներ կունենաք խոհափիլիսոփայական թեմաների շուրջ:
Բացի այդ, ռեյվերի ժամանակ, հատկապես բացօթյա, մարդիկ ունեն ժամանակավորապես անհետանալու հատկություն, այնպես որ արժե ընկերների հետ պայմանավորվել՝ որտեղ եք հանդիպելու, եթե միմյանց կորցնեք: Սա, իհարկե, ձեզ չի փրկելու, այնպես որ ի սկզբանե արժե համակերպվել այն մտքի հետ, որ ռեյվի ընթացքում ձեր ընկերները պարբերաբար կորելու են և հայտնաբերվեն այն ժամանակ, երբ կկորցնեք նրանց գտնելու հույսը:

ԽՈՒՐՀՈՒՐ #7 / ՄՈՌԱՑԵՔ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԵՎ ԻՆՔՆԱՄՈՌԱՑ ՊԱՐԵՔ

Այո, այսքանը:

ԽՈՒՐՀՈՒՐ #8 / ՄԻ ԽԱՆԳԱՐԵՔ ՈՒՐԻՇ-ՆԵՐԻՆ ԵՎ ՄԻ ԹՈՂԵՔ ՈՐ ՁԵՋ ԽԱՆԳԱՐԵՆ

Այո, սիրելի սկսնակ ռեյվագնաց, պարելիս մոռանում ենք արտաքին աշխարհի մասին, բայց չենք մոռանում մեր ռեյվեր եղբայրների ու քույրերի մասին: Ռեյվի հիմնական սկզբունքն է՝ մի՛ խանգարիր մերձավորին: Պարահրապարակում գտեք ձեզ հարմար տեղ, մտովի գծեք ձեր անձնական տարածքի սահմանը և պարելիս ուշադիր եղեք, որ պատահաբար որևէ մեկին չհարվածեք: Բայց նաև մի թողեք, որ ձեզ խանգարեն: Եթե մեկը ձեր գլուխն է տանում, մի ամաչեք ասել, որ այս պահին տրամադրված չեք զրուցելու: Իսկ եթե մեկը ձեր հարևանությամբ շատ ագրեսիվ է պարում և ձեզ խանգարում է, փոխեք ձեր տեղը, այդ մարդը, երբ տեսնի, որ դատարկության մեջ է հայտնվել, երևի կզգա, որ մի բան այնպես չէ:
Հատկապես կարևոր խորհուրդ տղամարդկանց. եթե ուզում եք ծանոթանալ ռեյվուհիների հետ, միշտ չէ, որ դա նշանակում է, որ նրանք այս պահին նույնքան խանդավառված են ձեզ հետ ծանոթանալու մտքով: Եթե փորձում եք կոնտակտի գնալ աղջկա հետ, բայց նրա կողմից հատուկ ոգևորություն չեք նկատում, ուրեմն դադարեցրեք ձեր փորձերը և շարունակեք պարել:
Եվ ընդհանրապես, անկախ զրույցի բնույթից, ռեյվի ժամանակ զրույցի բռնվել արժե ոչ թե պարահրապարակում, որտեղ դուք ստիպված կլինեք ճչալ իրար ականջների մեջ, այլ դրա համար ավելի հարմար վայրերում՝ չիլաութի զոնայում, ծխարանում, եթե այդպիսին կա, և վերջապես, իհարկե, զուգարանի հերթում:
Եվ ամենակարևորը, մի վերաբերվեք ռեյվին որպես սպառող, դուք ռեյվի լիարժեք մասնակից եք, քանի որ, ինչպես ասում է իմ ընկերներից մեկը՝ ռեյվեր, սկսնակ դիջեյ և տնտեսագիտության ապագա դոկտոր, ռեյվը համատեղ էմոցիոնալ, գեղագիտական և հոգևոր փորձառություն է: Կամ, ինչպես կասեր հայտնի կինոնկարից Միեր Մկտրչյանի հերոսը՝ «եթե ես զգամ, որ իրենց հաճելի է, ինձ էլ հաճելի կլինի»:

ԽՈՒՐՀՈՒՐ #9 / ՎԵՐԱԿԱՆԳՆԵՔ ՈՒԺԵՐԸ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՆՈՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ

Եվ ահա, դուք ինքնամոռաց պարեցիք մինչև առավոտ և չնկատեցիք, թե ինչպես բացվեց լույսը: Հասցրեցիք մի քանի անգամ կորցնել և վերստին գտնել ձեր ընկերներին, գուցե նաև կյանքի իմաստը: Ծանոթացաք բազմաթիվ հիանալի մարդկանց հետ, որոնց անունները հավանաբար չեք հիշելու, չնայած զուգարանի հերթում նրանց հետ ունեցել եք խոհափիլիսոփայական թեմաներով խոր և համապարփակ քննարկումներ: Եվ ուրեմն կարելի է գնալ տուն և քնել:
Իհարկե, հայաստանցի ռեյվերների համար սա դժվարին փորձություն է, քանի որ հնարավոր է, որ կիրակի առավոտյան ձեր հարևանն անսպասելիորեն սկսի վերանորոգման աշխատանքներ, և ռեյվի բիթերը փոխարինվեն պերֆորատորի ու մուրճի դղրդոցներով: Ամեն դեպքում, սովորաբար, լիարժեք ռեյվից հետո որոշ ժամանակ է պետք վերականգնվելու համար՝ մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ: Իսկ եթե, օրինակ, դուք այցելել եք լեգենդար Burning Man փառատոնը, ապա գուցեև մի քանի ամիս: Այդ ընթացքում դուք կարող եք փորփրել Soundcloud-ն ու Bandcamp-ը, ծանոթանալ նոր ոճերի և դիջեյների և պատրաստվել նոր ռեյվերին:
Ինչպես ասել է դասականը՝ ռեյվից լավ միայն այն ռեյվերն են, որ առջևում են:

Միխայել Զոլյան

«ՈՆՑ ՈՐ ԱՅԼ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԼԻՆԵԻ». ԵՐԵՎԱՆՅԱՆ ՔԼԱԲԻՆԳԻ ԱՐՇԱԼՈՒՅՍԸ

Կասկադի առաջին հարկի համանուն ակումբը, Սպայի տան լեգենդար «Մոնտե-Քրիստոն», «Տոռնադոյի» խփոցիներն ու համբույրները, «Բունկերի» դուռը, որը բացվում էր միայն հատուկ քարտերով. ինչպիսին էր երևանյան ակումբային կյանքը 1990-2000-ականներին: Հիշում են փորձառու ռեյվերները:

Նոնա Իսաջանյան
ԵՐԵՎԱՆ ամսագրի արտ-տնօրեն

«Կասկադ»

Ամենաթույն քլաբն էր, մինչև էսօր նման երկրորդը դեռ չկա Հայաստանում: 90-ականների կեսեր-վերջերն էր. չնայած որ տարիքս էդ ժամանակ, մեղմ ասած, չէր համապատասխանում նման տեղեր գնալուն, ամեն ուրբաթ-շաբաթ էնտեղ տժժում էինք ընկերներով, որովհետև մեկ ա՝ էդ ժամանակ ոչ ոք տարիք չէր էլ հարցնում: Քլաբը գտնվում էր Կասկադի աստիճանների տակ, առաջին հարկ, աջ կողմից: Ես էլ ապրում էի հարակից շենքերից մեկում. երաժշտության ձայնը արդեն հուշում էր, որ սկսվել ա ու գնալու ժամանակն ա:

Էն ժամանակ էս քանակի սեթեր չէին գրվում, բայց վինիլներով արդեն նվագում էին: Դիջեյներից Կյաժն էր, Տյոմը, Աշոտը, Dale-ը, Սմբատն ու մի քանի հոգի էլ, բոլորին հիմա չեմ հիշի: Սիրած թրեքեր ունեինք ամբողջ քլաբով՝ անհամբեր սպասում էինք դրանց, որովհետև էն ժամանակ հաճախ նույն բանն էին միացնում. Crystal Method-ի Busy Child-ը, Chemical Brothers-ի Hey Boys, Hey Girl-ը, Prodigy-ի գործերից շատերը, ու ,չգիտեմ ինչի, նաև Rammstein-ի Du hast-ն ու Ich will-ն էր հաճախ լինում և այլն: Բոլոր մեր ծնունդները, Նոր տարիներն ու մյուս միջոցառումները պարտադիր նշվում էր էստեղ: «Կասկադը» մի մեծ ընտանիքի նման էր, կար ուրիշ մթնոլորտ, ուրիշ մասսա, ուրիշ աշխարհ: Ընկերներիցս մի քանիսի հետ հենց էդ ժամանակ եմ ծանոթացել:

Շատ ծանր տարանք, երբ փակվեց:

«Զելյոնի»

Պոլիտեխնիկում էր՝ չեմ հիշում՝ որ կորպուսի տակ, ներսոտ խորքերում: Ուներ ցերեկային ու գիշերային կյանք:

Մոտավոր նույն ժամանակահատվածում էր թնդում, ինչ «Կասկադը»: Բայց ստեղ կար տարբերություն. Պոլիտեխում արդեն բոլորը կատարելագործված իրանց պարելու ոճն ունեին, նույնատիպ շարժումներով, շատ ժամանակ կարող ա իրար հետևից կանգնած նույն բանն անեին, նենց տպավորություն էր, որ պարային համույթ ա, բայց էդ ամենն էլեկտրոնայինի տակ: Մեծամասամբ Prodigy էր հնչում: Իրականում համարյա բոլոր քլաբերի հուշերը միանման են, որովհետև նույն ձև մի 20 հոգով գնում տժժում էինք: Էդ գիշերը:

Իսկ ցերեկը դպրոցից հետո պարտադիր գնում էինք «Զելյոնի», որ մասնակցենք Չախոյանի ու Արթուրի կազմակերպած հանդիպումներին, որտեղ ներկայացնում էին մի երաժշտի կամ մի խմբի պատմությունը, վերջում էլ տալիս էին երգերի տեքստերը տպված: Ընտիր օրեր էին, որոնք, համոզված եմ, շատերիս երաժշտական ճաշակի վրա մեծ ազդեցություն են ունեցել:

«Բունկեր»

«Բունկեռի» ժամանակ արդեն նախորդ քլաբերը չկային, բոլոր էլեկտրոնայինի սիրահարները և ոչ միայն՝ տեղափոխվել էին էստեղ: «Բունկեռն» էլ միանգամից հարազատ թվաց, քանի որ բոլորը մերոնք էին, երաժշտությունն ու մթնոլորտն էլ միշտ լավն էր:

Անսպառ էներգիա ունեինք, օրերը համարյա սկսվում ու ավարտվում էին էստեղ. գնում էինք դասի, արանքում՝ «Բունկեռ», հետո աշխատանքի, հետո «Բունկեռ», հետո տուն ու էլի «Բունկեռ» ու տենց ամեն օր:

Հատուկ թեմատիկ իվենթներ էին լինում՝ Հելոուին և այլն, բոլորը հատուկ պատրաստված գալիս էին: Միջավայրը միշտ շատ լավն էր, չհաշված նրանց, ովքեր չէին կարողանում ընկալել, որ մարդիկ ուղղակի եկել են պարելու, այլ ոչ թե տղա կամ աղջիկ կպցնելու: Էդ տիպի դեմքերից խուսափելու համար էր, որ ամեն մարդ չէր կարողանում մտնել, անդամ պիտի լինեիր. քարտեր ունեինք, ու քլաբի դուռը (որը հենց բունկեռի դուռ էր) միայն այդ քարտով էր բացվում:

Մի անգամ մարտի 8-ին որոշել էին աղջիկների համար անակնկալ կազմակերպել ու հրավիրել էին տղամարդ ստրիպտիզյորի, որն ամբողջովին պատված էր պզուկներով: Էդ օրվանից տղամարդկանց ստրիպտիզը կյանքիս ամենազզվելի բաներից ա:

«Բունկեռի» հետ համարյա միաժամանակ «Ռելաքսն» էր, «Աստռալը», «Ատլանտիկը», «Տոռնադոն», «Խամելեոնը», «Տոչկան» և էլի մի քանիսը, բայց շատ չէինք գնում: Ընթացքում էլի մի քանիսը բացվեցին փակվեցին: «Բունկեռի» փակվելուց հետո բացվեց One քլաբը, մոտավոր նույն ժամանակ բացվել էր «Կամին»՝ բոլորը միահամուռ տեղափոխվեցին էնտեղ: Հիմա քլաբեր կամ իվենթների գնալուց հաճախ նույն մարդկանցով իրար հանդիպում ենք, բոլորս մեծացել ենք, բայց էլեկտրոնայինի հանդեպ սերը հավերժ ա:

Արման Բաբայան (KillNF)

ռեպ կատարող, QA engineer

«Տոռնադո»

2000-ականների սկզբներին ամեն շաբաթ ընկերներով գնում էինք «Տոռնադո» տժժալու: Էն ժամանակ արդեն կային տեղացի լավ դիջեյներ՝ Dale-ը, Play-ը, Չախոյանը, Կյաժն ու էլի շատ ուրիշները: Բայց համ էլ դրսից էին լավ դեմքեր գալիս: Պիմենովի օրը հատկապես շատ եմ հիշում՝ փառատոն էր, որտեղ մասնակցում էին համ հայ, համ արտասահմանցի դիջեյները:

Կան առանձին անմոռանալի օրեր, իհարկե: Օրինակ՝ X-Phobos-ի հերթական նոր թրեքի պրեզենտացիան՝ Born To Be DJ: Դա առաջին հայկական տեխնո խումբն էր, իսկ եղբայրս՝ DJ MAD-ը, իրենց անդամն էր:

Լինում էին լրիվ կինոյական դեպքեր: Մի անգամ պահակներից մեկը նենց խփեց մեկի բերանին, արյունլվիկ էր եղել: Պատճառը տենց էլ չիմացանք, բայց իրականում դա հետագայի վրա չազդեց, նույն ձևի մարդիկ գնում էին տժժալու: Մի անգամ էլ պարում էի, մի աղջիկ եկավ ու համբուրեց ինձ, ես էլ ինձ չկորցրեցի ու իրեն համբուրեցի:

Ընդհանրապես, մասսան, աուրան, սաունդը շատ լավն էին: Էն ժամանակ մի տեսակ ճիշտ տժժ, եթե չասեմ գուլյատ կար, որը հիմա վերացել ա, ամեն ինչ ուրիշ ձև ա, նենց տպավորություն ա, ոնց որ ուղղակի ժամանակ են անցկացնում, չեն ապրում:

Կարեն Միրզոյան

լուսանկարիչ, Միրզոյան գրադարանի հիմնադիր

«Մոնտե-Քրիստո» (Մոնտե)

Ես միշտ ասում եմ, որ «Մոնտեն» այդ տարիներին քաղաքի ամենալավ ակումբն էր և առ այսօր Հայաստանում նման վայր գոյություն չունի: Բոլորը, ովքեր գոնե մեկ անգամ այնտեղ եղել են, կասեն նույնը:

Սարքավորումները վատն էին, երաժշտությունը սկավառակներով էին դնում, բարերում ամենասովորական, ստանդարտ խմիչքներ էին տալիս, մինչդեռ «Կասկադ»-ում վինիլային նվագարկիչներ կային, որոնք այսօր ամենուր են, բայց այդ թվականներին հազվադեպ հանդիպող բան էր, այսինքն՝ նշանակում էր մեծ գումարներ են ծախսել: Բայց «Մոնտեն» ամենաբնական ու գժական ակումբն էր: Նախ, բոլորի համար էր: Մի տեղում հավաքվում էին գեյերը և, օրինակ, այդ ժամանակվա շատ բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի թիկնապահները, պարսիկներ, արաբներ, բանկերի տնօրեններ, արվեստագետներ: «Մոնտե» գնում էին նույնիսկ տրանս մարդիկ: Այսինքն՝ դա մի վայր էր, ուր 12-ից հետո տղամարդիկ կարող էին գալ կանացի շորերով: Հիշում եմ, մի անգամ սեփական աչքերով տեսել եմ, թե ինչպես էր մի խոշոր օլիգարխի թիկնապահ նրանցից մեկի գլխին զենք պահել բարի մոտ կանգնած: Բարեբախտաբար, դրանից էն կողմ չգնաց:

Այնտեղ կարելի էր տեսնել բաներ, որոնք երբևէ չէիր պատկերացնի, որ կարող ես տեսնել Հայաստանում: Դա նաև վտանգավոր էր, քանի որ ամեն օր բավական լուրջ կռիվներ էին տեղի ունենում: Մի անգամ նույնիսկ, հիշում եմ, դանակահարության դեպք եղավ:

Ուրախությունը սկսվում էր կեսգիշերին: Մինչ այդ գնում էինք Yum-Yum, հետո տեղափոխվում էինք Ջինսնոց, որտեղ մինչև կեսգիշեր խմելուց հետո գնում էինք «Մոնտե» ուրախանալու: Մինչև առավոտվա հինգը բոլորը սեղանների վրա պարում էին: Շատ ուրախ էր անցնում, կար այդ ադրենալինի զգացումը:

Երաժշտությունը շատ խառն էր, հիմնականում պոպսա, որպեսզի այս խառը ժողովրդի մեջ բոլորը կարողանային ուրախանալ: Մարդկանց համար իրականում տարբերություն չկար, թե ինչ երաժշտություն կդնեն, և ամեն օր կարող էին նույն բաները դնել, բայց միևնույն է, նույն ձև ուրախ էր անցնում: DJ հասկացություն չկար: Այնտեղ նվագում էր մենեջերներից մեկը, որն իմ բակային ընկերն էր: Ինքն էլ ինձ անվճար անցկացնում էր և ես շաբաթը երեք-չորս օր այնտեղ էի լինում: Բոլորն էին այնտեղ: Շատ տեղեր էլ չկային գնալու և գիշերը միշտ ավարտվում էր «Մոնտեում»:

Վահագն Համալբաշյան

նկարիչ

«Սահինյան»

1990-ականների վերջերն էր, ինձանից տարիքով մեծ երկու ընկերներիս հետ առաջին անգամ գնացինք: Գտնվում էր ոսկու շուկայի հետևը: Քանի որ սա իմ կյանքի առաջին ակումբն էր, մեջս վախի ու հիացմունքի խառնուրդ էր տիրում: Մինչ այդ անհասանելի էր թվում նման տեղեր գնալը: Մի քանի սենյակից էր բաղկացած: Ընկերներս գարեջուր վերցրին, ես էլ հյութ էի խմում, քանի որ տարիքով փոքր էի ու չէի ուզում տանն ակնհայտ լինի, թե ուր եմ եղել:

Երիտասարդությունը շատ տարբերվող էր նրանցից, ում առօրյայում տեսնում էի: Մշակութային շոկ էր մոտս՝ էդքա՜ն սիրուն ու ազատ մարդ մի տեղում:

Երաժշտությունը խառն էր՝ համ էլեկտրոնային, համ ռոք, համ ուրիշ ժանրեր: Էն ժամանակ սեթերի արանքում դանդաղ երգեր էին դնում, մինչ այդ չէի տեսել, որ նման ազատ վիճակներ լինեին, աղջիկներն ու տղաները միասին փաթաթված պարեին: Ոնց որ այլ մոլորակում հայտնված լինեի:

Դուրս գալուց հետո ականջներս մոտ 15 րոպե ոչինչ չէին լսում: Բայց կարևորն էն էր, որ այդ օրն առաջին անգամ զգացի ինձ ավելի հասունացած-մեծացած: «Սահինյանը» սկիզբ դրեց հետագա նման տեղեր այցելելու ցանկությանը:

Հետո ակումբը որոշ ժամանակով տեղափոխվեց ներկայիս «Ստոպի» տեղը, բայց այդտեղ էլ չեմ գնացել:

Սոնա Դանիելյան

Vbet.am-ի մարքետինգի բաժնի ղեկավար

«Կասկադ»

«Կասկադը» ուրիշ էր: Ես գնում էի 98 թվականից սկսած, երբ ընդամենը 15 տարեկան էի: Ժամը 7-8-ից սկսում էին նվագել, բոլորը հավաքվում էին Կասկադի տարածքում մինչև դռները բացեն: Ինձ հայրիկս բերում թողնում էր ժամը 9-ին ու տանում տուն 11-ին: Այն ժամանակվա ակումբներն ունեին իրենց մշտական դիջեյները: Հիմնականը Կյաժն էր, լինում էր Աշոտը, հետո մեկմեկ ընկերովի թողում էին, որ Կրետը, Փլեյը, կամ Դեյլը նվագեն: Ամեն մի դիջեյ ուներ սկավառակների իր փոքր պանակը, որը միշտ իր հետ էր տանում, երբեմն փոխանակվում էին կամ ժամանակավոր տալիս մեկը մյուսին, բայց միշտ իրենց մոտ էին պահում: «Կասկադի» հիմնադիր Սմբատը, երբ գնում էր արտասահման, անպայման սկավառակներ էր բերում, որոնք ամբողջ քաղաքում չէիր գտնի: Նաև վինիլ էր բերում ու այս ամենը մեծ ուրախություն էր բոլորի համար: Կար փլեյեր, ուղղակի երկու սկավառակի վրայի երգերն իրար հետ էին միքսում:

«Կասկադը» ու նմանատիպ մնացած ակումբները մեր դպրոցն էին, որովհետև մարդիկ, ովքեր մեծացան այդ ամենի վրա, առ այսօր էլ ակումբային կյանքում բավական ակտիվ դեմքեր են: Չախոյան Արամը Հայ FM-ում ուներ հաղորդում, որտեղ որակյալ երաժշտություն էր դնում, մենք այդ բոլորը լսում էինք, ձայնագրում էինք կասետների վրա:

Լինում էին շատ կռիվներ, երևի որովհետև ոլորտը նոր էր զարգանում, բացի այդ ալկոհոլի մեծ քանակ կար ու մարդիկ, ովքեր խմել դեռ լավ չգիտեին: Սովորաբար դրսից եկած մարդկանց հետ էին լինում վեճերը, ովքեր գնում, օրինակ՝ «Բելաջիոյում» լավ հաց էին ուտում ու գալիս-մտնում էին ակումբները: Սկսվում էր՝ «ընկերուհուս թարս նայեցիր», «ուսով մեկին կպար»: Երբեմն հասնում էր իրար վրա աթոռ շպրտելուն: Հետո շատ կռիվներ էին լինում պարսիկների հետ: Այսինքն՝ կռվելն այդ մշակույթի անբաժան մասն էր, հանգիստ էինք վերաբերվում դրան: Այդ ամենի վրա մեծացած մարդիկ կարծես մեծ ընտանիք լինեին, բոլորն իրար գիտեին, բոլորն իրար մասին հոգ էին տանում, չկար նման բան, որ մեկը գար միայնակ ու բոլորին անծանոթ լիներ:

«Կասկադից» հետո

2000-ականների սկզբում ամենաակտիվ տեղերն էին «Ռելաքսը», «Աստրալն» ու «Ալենէլենը»: «Աստրալը», կարելի է ասել, վերջին տարբերակն էր: Այն ակտուալ էր, եթե օրինակ՝ Իլյան հետաքրքիր միջոցառում էր կազմակերպում կամ երբ նվագում էր Արամ Չախոյանը կամ Կյաժը: Ուրիշ ժամանակ ուղղակի մտնել-դուրս գալու տեղ էր: Որակն էն չէր, ակումբային մշակույթում կարևոր դեր չուներ, բավական պապսովի տեղ էր: Զևական թանկ տեսք, ոսկեգույն դետալներ, վիլյուր ու երաժշտությունն էլ համապատասխանում էր այդ ոճին:
«Ալենէլեն» գնում էին ավելի փոքր տարիքայինները: Չնայած ես այդ ժամանակ 17 տարեկան էի, բայց ինձ մեծ էի համարում, որովհետև մեծերի շրջապատից էի: Ես սկսել էի ակումբներ գնալ դեռ «Կասկադից» ու «Ալենէլենի» պոպսա վիճակին չէի հարմարվում: Այնտեղի երաժշտությունը նույնիսկ Prodigy չէր: Այսինքն՝ այնտեղ ոչ թե ակումբ էր, այլ իսկական դիսկո: Տղաները հիմնականում գալիս էին աղջիկ կապելու, այլ ոչ թե լավ երաժշտության տակ ուրախանալու:

DJ Serjo

դիջեյ

«Տոչկա»

Տոչկայում առաջին անգամ եղա 2000-ականների սկզբներին, երբ ինքս նոր էի սկսում փորձարկումներ անել դիջեյական և երաժշտական ասպարեզում:
Այն ժամանակ Երևանում շատ ակումբներ չկային, բայց բոլոր երաժշտասերները տեղյակ էին քաղաքի լավ տեղերից, ու «Տոչկան» ամենաշրջանառվող անուններից մեկն էր: Այստեղ հավաքվում էին քաղաքի դիջեյները, ովքեր գիշերվա ուշ ժամերին ջեմմինգ էին անում: Այսինքն գալով այստեղ՝ դու դառնում էիր այդ միջավայրի մի մասը, տեսնում էիր այդ բոլոր մարդկանց մի տեղում նվագելիս:
Շատ ուշ էր փակվում, ու բոլորը գիտեին, որ եթե որևէ տեղում մի բան վերջանում է, կարելի է ավելի ուշ հանդիպել «Տոչկայում»: Այսինքն միջոցառումներից հետո հավաքատեղին, հանդիպման «կետը» հենց «Տոչկա» ակումբն էր: Կարծում եմ, որ այդտեղից էլ եկել էր անվանումը: Այնտեղ գնալուց միշտ գիտեիր, որ ով էլ նվագի այդ վայրկյանին, անելու է դա հաճույքով. որակյալ երաժշտությունն ապահովված է:
Սովորաբար մենք այնտեղ հայտնվում էինք ուշ ժամերի, բայց բոլորի նպատակը մեկն էր՝ հավաքվել բոլորով մի տեղում և երաժշտություն վայելել ու բնականաբար նվագել: Լինում էին առանձին միջոցառումներ, բայց ամեն օր մեկ էլ կարող էր սպոնտան որոշում կայացվեր, որ հիմա այս կամ այն երկու դիջեյներն իրար հետ նվագում են, տեղում լայնափ էր կազմվում ու այս օրը դառնում էր տոն մինչև լույս:
«Տոչկան» մեծ ակումբ չէր, ավելի շուտ մտերմիկ հավաքույթների տեղ էր էդ տեսակ երաժշտության սիրահարների, դիջեյների, երաժիշտների ու առհասարակ էդ մշակույթը սիրող մարդկանց համար:

Իլյա Մանթառլյան

միջոցառումների կազմակերպիչ

«Ռելաքս»

90-ականներին կարելի էր ցերեկվա ժամերին մտնել «Ռելաքս» և այնտեղ շատ մարդ կլիներ: Ես 16 տարեկան երեխա էի, ամեն տեղ չէ, որ թողնում էին մտնեի, բայց մի անգամ գնացի հենց նույն «Ռելաքս» և աշխատողներին հարցրի՝ ձեզ դիջեյ պետք չի՞: Ասեցին՝ ոչ, մեկը կա, որ միացնի երաժշտությունը: Ես էլ ասեցի, որ պատրաստ եմ անվճար դա անել, և նրանք համաձայնեցին:
Հետագա տարիներին քաղաքում եղած գրեթե բոլոր ակումբներն իրենց հայտնիության շրջանն են ունեցել ու ես միշտ փորձել եմ ինչով կարող եմ օգտակար լինել: Ցավոք, Հայաստանում նման վայրերը երկար կյանք չէին ունենում, քանի որ ձայնի բարձրության խնդիր կար, որպեսզի բնակիչներին չխանգարես:

IBAR

Իմ ամենահետաքրքիր նախագծերից IBAR-ն է եղել: 2000-ականների վերջն էր, Վրաստանից նոր էի վերադարձել և այնպես էր ստացվել, որ այնտեղի լավագույն ակումբներից մեկը փակվել էր: Ես էլ որոշեցի այնտեղի բարմեններին ու գո-գո պարուհիներին հրավիրել

Հայաստան: Շաբաթը մեկ նման պատվիրակություն էր ժամանում և դրանով, կարելի է ասել, մենք շունչ էինք տալիս տեղական ժամանցային ոլորտին, նորույթ էինք բերում: Այդ շրջանում բոլոր ակումբներում նույն ծրագիրն էր, արդեն մարդկանց հետաքրքրությունը սկսում էր կորել: Այդ առումով IBAR-ը կարողացավ տարբերվել: Այն իր դիզայնով էլ էր աչքի ընկնում. ամեն ինչը սպիտակ գույների մեջ էր, հետաքրքիր լուսավորությամբ:

Առնոս Մարտիրոսյան

լուսանկարիչ

«Կամի»

2005 թե 2006 թիվն էր, լավ չեմ հիշում, էդ ժամանակ քաղաքի ամենապոպուլյար ակումբներից էր, որտեղ միշտ էլեկտրոնային երաժշտություն էր լինում, ես էլ նոր էի վերադարձել Հունգարիայից, որտեղ մի քանի տարի լավագույն ակումբներում տժժում էինք ու «Կամին» դարձավ դրա շարունակությունը Հայաստանում: Բացման օրվանից գնացել եմ: Սովորույթ էր դարձել ամեն ուրբաթ լիքը ընկերներով պարտադիր գնալը, մինչև վերջ մնալ տժժալն, իսկ աֆթրպարթին շարունակում էինք իմ արվեստանոցում, որտեղ ունեի բոլոր անհրաժեշտ սարքավորումները՝ այդ թվում վինիլների համար, լավ սաունդ, դիջեյություն էլ մենք էինք անում: Լինում էր՝ «Կամիի» դիջեյներն էլ էին գալիս մեր հետ:
Առանձնահատուկ օրերից էր, երբ Սիրահարների այգում Վարդավառի թեմայով Արա Ասլանյանի հետ ֆոտոների ցուցահանդես արեցինք ու էնտեղից բոլորով տեղափոխվեցինք «Կամի»: Բացի նրանից, որ լավ երաժշտություն էր միշտ, նաև լավ ծանոթությունների վայր էր, հիմիկվա շատ ընկերներիս հետ հենց էնտեղ եմ ծանոթացել: Ինչպես բոլոր տեղերում, ստեղ էլ ահագին կռիվներ ենք տեսել, որոշ դեպքերում էլ կամա թե ակամա՝ մեր մասնակցությամբ: Էն ժամանակ համարյա միշտ տենց պահեր լինում էին, երևի երիտասարդ ու տաքարյուն էինք ու միշտ ինչ-որ առիթ լինում էր բորբոքվելու համար: Չնայած հիմա երիտասարդներն ավելի հանգիստ են ոնց որ: Ափսոս, հետո ակումբի ֆորմատը փոխվեց ու ես էլ չգնացի... Լավ տարիներ էին:

Մարգարիտ Միրզոյան, Անի Յավրենց
Անձնական արխիվներից

evnmag.com

կարդացեք առցանց

«Մենք օգնում էինք պոկվել իրականությունից»

Երևանի առազին փակ ակումբը, ինչական փարթիներ Դավթաշենում, կոմսի փոխարեն մի կիլո նարինզով մուրբը, Դեյլի համերգը «Բաղրամյան 11-ում» և առազին դրսից դիզեյները Հայաստանում. պատմում են 2000-ականների Երևանի մի ֆանի կարևորագույն ակումբների ու նախագծերի հիմնադիրներ Լևոն Հունանյանը և Բելլա Նապարեթյանը:

ՏՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Լևոն
Ամեն ինչ սկսվեց 1996-ին, երբ բանակից հետ եկա: Սկզբում Party People նախագիծն էր, որի շրջանակում մի քանի հավաքույթներ կազմակերպեցի: Հետո ծանոթացա Բելլայի հետ, ամուսնացանք, և այդ հավաքույթները տեղափոխվեցին մեր տուն՝ հավես լոֆթ էր, բայց չնայած կենտրոնում չէր՝ Դավթաշենում էր, բոլորը գալիս, հասնում էին տեղ, ներսի գույները տեսնում ու պայծառանում էին: Մի անգամ Նոր տարվա գիշերն էնքան մարդ էր եկել, որ ժամը երեքին ուտելիքն արդեն սպառվել էր:

Բելլա
Տան ներսում բարային հատված ունեինք, կոկտեյլներ էինք պատրաստում, նույնիսկ մենյու էի կազմել: Բոլորին միշտ ասում էի՝ կգա մի օր, երբ այս ամենի համար վճարելու եք: Ընդամենը մի տարի հետո այդպես էլ եղավ: Մեր տունը դարձավ մեր բոլոր հետագա նախագծերի հատակագիծը:

Լևոն
Այդ շրջանում մեր ընկերներից մեկը՝ Վահեն, առաջարկեց ակումբ բացել: Մենք արդեն հասցրել էինք ակումբային միջավայրը ներսից լավ ճանաչել ու հասունացել էր սեփականն ունենալու պահը: Ի վերջո, Վահեն Սայաթ-Նովայում տուն ձեռք բերեց ու հենց այնտեղ 2003-ի դեկտեմբերից բացեցինք «Բունկերը»:

ԲՈՒՆԿԵՐ

Բելլա
«Բունկերը» քաղաքային գլամուրի սկիզբն էր: Դա առաջին փակ ակումբն էր Երևանում: Բոլորը չէին, որ կարող էին այնտեղ մտնել. ինչ-որ պահից մուտքն ակումբային քարտերով էր և հատուկենտ մարդկանց համար: Խրուշչովյան շենք էր՝ մեծ երկաթյա դռնով, որը փակ էր և շատ լուրջ ֆեյս քընթրոլ էր գործում: Ամենաբարձրաստիճան դեմքերին կարող էինք ներս չթողել ու դա նույնիսկ կարող էր վտանգավոր լինել, բայց մեր մոտ վեճեր չէին լինում: Կարծում եմ՝ մարդիկ, մեզ հարգելով, պահում էին քաղաքավարության սահմանները:

Լևոն
Ներսում հատուկ մթնոլորտ էր տիրում, որակյալ ձայնային ապահովում ունեինք, նույնիսկ պլազմային հեռուստացույց էինք տեղադրել, ինչն այն ժամանակվա համար բավական հազվադեպ հանդիպող երևույթ էր: Վերևի հարկում մեծ ընդհանուր բազմոց էր ու եթե նույնիսկ մարդիկ իրար չէին ճանաչում, ծանոթանում էին ու սկսում միասին ուրախանալ: Ներքևում ավելի ակումբային մթնոլորտ էր: Առհասարակ «Բունկերը» շատ ընկերական միջավայր էր ու իր պրիվատ լինելը քաղաքի համար շատ մեծ նորություն էր: Շատ չանցած մարդիկ սկսեցին իրենց դրսի հյուրերին Հայաստանում ման տալ հետևյալ ծրագրով՝ Գառնի-Գեղարդ, Սևան ու «Բունկեր»:
Դու կարող էիր միայնակ գալ, բայց գիտեիր, որ մենակ չես լինի, քանի որ ես ու Բելլան այնտեղ ենք: «Բունկերի» հաճախորդները միայն երիտասարդները չէին, տարբեր սերունդների մարդիկ, քաղաքական գործիչներ, շոուբիզնեսի մարդիկ՝ բոլորը գալիս էին մեզ մոտ: Այսօր այդպիսի կազմ չես տեսնի:

Բելլա
«Բունկերի» փակ բնույթն այն ավելի գրավիչ էր դարձնում: Մարդիկ փորձում էին ծանոթով մտնել, գալիս ժամերով կանգնում էին դռների առաջ: Առաջին անգամ Հայաստանում ներդրեցինք քարտային անդամակցության համակարգը: Առաջին կարճ հաղորդագրությունով հրավերը նույնպես «Բունկերից» է գնացել: Այստեղ առաջին անգամ կազմակերպեցինք ներքնազգեստի ցուցադրություն: Քանի որ ոչ մի մոդել չհամաձայնեց մասնակցել ցուցադրությանը, մերկապարուհիների հրավիրեցինք:

ԲԱՂՐԱՄՅԱՆ 11

Լևոն
Բարեկամներիցս մեկը Բաղրամյանում երկհարկանի տուն ուներ՝ իր բակով, լողավազանով, ամեն ինչով: Մենք եկանք այդ տուն ու բոլորը հետևեցին մեզ:

Բելլա
Այդ տան դուռը չէր փակվում: Ով երբ ուզում էր, գալիս էր: Դու կարող էիր գալ, բացել սառնարանը, վերցնել սնունդը, որը միշտ պատրաստ քեզ էր սպասում: Բնականաբար դա անվճար չէր, բայց, միևնույն է, քեզ զգում էիր ինչպես տանը: Նույնիսկ կարող էիր քո տնային կոշիկները բերել կամ անձնական օգտագործման սափրիչդ:
Սովորաբար բազմոցի վրա յոթ հոգով քնում էինք, արթնանում ու շարունակում մեր ժամանցը: Դու կարող էիր վերևի հարկում դաշնամուր նվագել, իջնել ներքևում քարտ

խաղալ, կամ միս բերել ու բակում խորոված անել: «Բաղրամյան 11»-ում «չէ» չկար:

Լևոն
Քամած մածուն էինք բաժակով տալիս, մաֆիա էինք խաղում բոլորով: Ու չնայած էս տնավարի վիճակին, մեզ մոտ այնտեղ նույնիսկ Դեցլի համերգն էր տեղի ունեցել:

ONE

Լևոն
Հետո եղավ One ակումբը: Այստեղ ավելի շատ կենտրոնացանք երաժշտության վրա: Դիփ թեք հաուսի ժամանակներն էին: Ամեն ուրբաթ-շաբաթ օրերը ակումբում գժանոց էր, կիրակի օրերն էլ մեզ թույլ էինք տալիս հայկական երաժշտության փարթի կազմակերպել: Մի պահ այնքան էինք կրեատիվացել, որ միջոցառումներից մեկի մուտքը թթվածնային դիմակներով էր, մյուսինը՝ մի կիլո նարինջով: Պատկերացրեք՝ մեծ հերթ, որը հասնում է երկու խաչմերուկ այն կողմ ու բոլորի ձեռքում նարինջներ են: «ՍԱՍում» նարինջ չէր մնացել, մարդիկ զանգում խնդրում էին, որ մանդարինով թողնենք: Մենք էլ նարինջները քամում էինք ու կոկտեյլներ սարքում: Հաջորդ մի շաբաթը ակումբից նարնջի հոտ էր գալիս:

Բելլա
Մենյուին շատ լուրջ էինք վերաբերվել: Նույնիսկ «Կրիստալ» շամպայն ունեինք, «Աբսենթ», որի մասին այստեղ դեռ ոչ մեկ չգիտեր, նարգիլե, մատե: Այսինքն՝ մեր հաճախորդներին միջազգային դասի պրոդուկտներ էինք առաջարկում: Բացի այդ, ի սկզբանե մեր բոլոր նախագծերում մեծ ուշադրություն ենք դարձրել դիզայնին, ամանեղենին, տարատեսակ աքսեսուարներին: Մարդիկ նույնիսկ գողանում, տանում էին իրենց հետ:

Լևոն
Անընդհատ նորույթներ էինք փորձում ներդնել: Եվրոպայում «Տոկիա այս» կոկտեյլն էի փորձել ու հավանել: Միանգամից բաղադրությունը պարզեցի և բերեցի Հայաստան, որպեսզի ինտեգրենք մեր մենյուի մեջ: Այսօր այն կարելի է հանդիպել Երևանի գրեթե բոլոր բարերում: Մեր հյուրերն էլ, որ գնում էին դուրս, մի նոր բան էին տեսնում, գալիս մեզ էին պատմում, մենք էլ ուշադիր լսում էինք ու ներդնում մեր գործի մեջ:

FACE CONTROL

Լևոն
ONE-ից հետո մտածեցինք, որ արժի ավելի հանգիստ նախագիծ իրականացնել: Բացեցինք Face Control դիջեյ բարը, որտեղ շատ ջերմ մթնոլորտ էր ու որակյալ երաժշտություն: Մարդիկ գալիս էին հասարակ շփման ու երաժշտության համար: Նույնիսկ սենյակ ունեինք, որտեղ դու կարող էիր գալ համակարգչային խաղեր խաղալ:

Բելլա
Հենց Face Control-ի ժամանակներն էին, նայեցի DJ Tiesto-ի համերգը ու սկսեցի մտածել, որ հուլիսին մենք անպայման պիտի գնանք իր Իբիցայի համերգին: Այդպես էլ եղավ:

Լևոն
Կյանքում առաջին անգամ էինք մի տեղում հինգ հազարից ավել մարդ տեսնում: Պարզեցինք, թե ինչ է երկրորդ բեմը, կամ պրոմո խումբ հասկացողությունը: Շատ բաներ սովորեցինք այնտեղից ու դրա համար մեր հաջորդ ու վերջին նախագիծը լրիվ այլ իրականության մեջ էր:

GALLERY

Լևոն
Շրջանայինի մոտ մի հրաշք տարածք գտանք: Հեռու էր բնակելի շենքերից, ինչը մեծ առավելություն էր. նախկին նախագծերի կարճաժամկետ լինելը պայմանավորված էր հենց նրանով, որ մեր աղմուկը խանգարում էր բնակիչներին: Անունը դրեցինք Gallery: Այստեղ ավելի խոր բովանդակություն սկսվեց: Այս նախագծի շրջանակներում էլ ստեղծվեց «Դա Վինչի» պրոմո խումբը, որը հայտնի դարձավ իր Babylon Night միջոցառումներով:

Բելլա
Այստեղ արդեն լրիվ այլ իրականություն էր, լրիվ այլ գույներ, այլ պատմություն: Սա ծռված իրականություն էր: Այստեղի ապրումներն ու էմոցիաներն աննախադեպ էին: Արդեն ONE-ի ժամանակներից սկսեցինք տրանս մարդկանց հրավիրել: Ես ինքս զբաղվում էի իրենց կոստյումներով: Սկսեցինք դրսից դիջեյների հրավիրել. չտեսնված բան էր Երևանի համար:

Լևոն
Այս ամենն ավարտվեց համաշխարհային ճգնաժամի հետևանքով: Երբ մեր միջազգային գործընկերները ստիպված եղան կանգնեցնել ցանկացած նմանատիպ ֆինանսավորումները: Երբ մարդիկ, ովքեր առաջ, մտնելով ակումբ, խմիչք էին հյուրասիրում բոլոր ներկաներին, ստիպված եղան ամեն անգամ ուշադիր կարդալ իրենց ներկայացված հաշիվը:

Բելլան այժմ սպորտային մարդիկ է և մոտիվատոր: Ակումբային կյանքում այլևս մեծ ներգրավվածություն չունի: Իր շուրջ հավաքել է մարդկանց, որոնց հետ սրեղծել է այս անգամ առողջ ապրելակերպի ակումբ: Լևոնը շարունակում է մնալ ժամանցային ոլորտում. Most Promo ընկերության տնօրենն է, որը պարբերաբար էլեկտրոնային երաժշտության խոշոր միջոցառումներ է կազմակերպում: Ամենաթարմ օրինակը Alteration փառատոնն էր, որի ընթացքում Երևան եկան Նինա Կրավիցն ու Ռիկարդո Վիլարբոսը:

ԿՂԶՅԱԿՆԵՐ

Բելլա
Մեր նախագծերը երբևէ չեն եղել ուղղակի երաժշտություն լսելու մասին: Մենք նոր մշակույթ ենք բերել մեզ հետ, նույնիսկ կարող եմ ասել, որ կրթել ենք մարդկանց, սովորեցրել ենք՝ ինչպես ճիշտ ուրախանալ: Բացատրում էինք, որ չի կարելի զնալ ակումբ թափթփված վիճակում: Մեր բոլոր նախագծերում դրեսկոդը պարտադիր է եղել: Շատերն այդ ժամանակ չգիտեին՝ ինչպես ճիշտ խմել, ու մենք դա նույնպես նրանց սովորեցնում էինք: Հիմա այդ խնդիրը չկա, էլ երևի չես ունենա հաճախորդ, որը կպատվիրի գարեջուր, շոկմանժե ու մրգային ասորտի:

Լևոն
Հետաքրքիր էր, որ այս ամենը ես ու Բելլան երկուսով էինք անում: Եթե այսօր շուրջ տասը հոգանոց թիմ է աշխատում մի միջոցառման կազմակերպման վրա, այն ժամանակ երկուսով էինք ու նաև մեկ կամ ամենաշատը երկու դիջեյներ, որոնք զբաղվում էին երաժշտական բովանդակության մասով: Մնացած ամեն բան մեր վրա էր:

Բելլա
Ես կարող էի աշխատել խոհարարի հետ կոնկրետ ճաշատեսակը ճիշտ մատուցելու համար կամ Լևոնը կարող էր բարմենի հետ կոկտեյլների հարցով զբաղվել, խորհուրդներ տալ, թե ինչը ոնց պետք է խառնել, որ ճիշտ համադրություն ստացվի: Ստեղծարարության մասը մեր վրա էր: Այդ տասը տարիների ընթացքում մեր նախագծերը եղել են մեր կյանքը, ապրել ենք դրանով, ամեն բան փորձել ենք, տեսել ենք, զգացել ենք ու նոր ենք առաջարկել մեր հաճախորդին: Այդ ամբողջ մթնոլորտը ներսից ենք ճանաչել և ըստ իս հենց դրա մեջ է եղել մեր հաջողության գաղտնիքը: Մեր ակումբները մարդկանց համար կղզյակի նման մի բան էին: Մենք օգնում էինք պոկվել իրականությունից:

Մարգարիտ Միրզոյան
Բելլա Նալբանդեթյանի և Լևոն Հունանյանի արխիվներից

Արամ Չախոյան.
«Երևանում երաժշտությամբ կիսվելու մշակույթ կար»

Հաղորդավար, Հայ FM ռադիոկայանի ծրագրերի գլխավոր Արամ Չախոյանը պատմում է երևանյան մելոմանների, դժվարությամբ գտնված ու գնված կասետների ու հայ էլեկտրոնային երաժշտության կայացման գործում Հայ FM-ի կարևոր դերի մասին:

Ամբողջ մանկությունս ու պատանեկությունս անցել է Երևանի փոքր կենտրոնում: Ամենահարազատ հատվածը Թումանյանի տուն-թանգարանի շրջակայքն է՝ այդտեղ էինք ապրում:

Տպավորվել է հատկապես Թումանյան փողոցի սրճաղացը, ուր մայրիկի պատվերով հատիկավոր սուրճը տանում էի աղալու: Այդ թարմ աղացած սուրճի անուշ բույրը մինչ օրս զգում եմ Թումանյանով անցնելիս:

Այն ժամանակ Երևանի ծայրամասեր գնալու առիթ հիմնականում չեմ ունեցել: Լիքը փախած տեղեր կան, ասենք՝ Քանաքեռում, Չարբախում, Էրեբունիում կամ Մասիվում, ուր երբեք չէի եղել: Մինչ օրս էլ շատ վայրերում գուցե չկարողանամ լավ կողմնորոշվել: Բայց, իհարկե, փոքր կենտրոնն էլ է շատ փոխվել: Արդեն բավականաչափ տարիք ունեմ փոփոխությունները նկատելու համար:

Առաջին անգամ ականջակալներով Սթիվի Ուոնդեր եմ լսել: Հայրիկի ընկերներից մեկի տուն պիտի գնայինք, ով ոչ միայն երկկասետանի մագնիտոֆոն, այլև տարբեր ձայնագրություններ ուներ: Գնալուց առաջ հայրիկի հետ մի քանի դատարկ կասետ վերցրեցինք, որ որոշ բաներ ձայնագրենք: Հայրիկիս ընկերն ականջակալներ տվեց, լսվեց Սթիվի Ուոնդերի ձայնը՝ Pastime Paradise-ն էր: Հենց այդ պահին էր, որ առաջին անգամ ֆրիսոն (այո՛, երաժշտությունից ստացված բացարձակ հաճույքը նկարագրող այդպիսի բառ կա) ապրեցի:

Մելոմանները գտնում էին միմյանց Արայիկնոցում: Արայիկը ռոքեր էր ու նաև պրոֆեսիոնալ լուսանկարիչ: Բաղրամյանի իր ֆոտոստուդիայի պատերին հայտնի ռոք խմբերի, կատարողների սև ու սպիտակ, մեկուսեջ էլ գունավոր լուսանկարներ էին փակցված, որոնք նաև վաճառվում էին: Հիմա ո՞վ փող կտա, որ առնի, ասենք, Ռոլիգ Սթոնզի լուսանկարը: Իսկ այն ժամանակ գնում էին, դե, չկար, չէր ճարվում, իսկ Արայիկը, չգիտես ոնց, գտնում էր դրանք:

Ամեն հինգշաբթի ու կիրակի Արայիկնոց էր գալիս Վարդանը: Նա մի առեղծվածային մարդ էր, ով մի մեծ ալբոմ ուներ, որտեղ փակցված էին դիսկերի նկարներն ու ձեռքով գրված էին երգերը, տարեթվերը, հեղինակների անունները: Մի մեծ մենյու էր, որից կարող էիր ընտրել ուզածդ կատարումը, Վարդանին վճարել ընդմիջման գումարներից հավաքած, ունեցած-չունեցածդ 7-10 ռուբլին ու ստանալ շատ որակով ձայնագրություններ: Մարվին Գեյի, Դեփեշ մոդի, Փեթ Շոփ Բոյսի, ամբողջ ռոքի դասականների ու էլի շատ բաների միակ ու անկրկնելի մատակարարն էր Վարդանը: Մի անգամ ինձ իր տուն հրավիրեց, տեսա իր ձայնագրման տեխնիկան, բազմաթիվ ձայնագրությունները: Ինձ համար աշխարհի ամենահարուստ մարդն էր Վարդանը՝ այդքան շատ երաժշտություն ուներ:

Երաժշտությամբ կիսվելու մշակույթ կար. «Ես քեզ սա տամ, դու ինձ սա տուր»: Վարդանից գնելիս էլ տարբեր բաներ էինք ընտրում, որպեսզի քիչ գումար ծախսենք ու միասին ավելի շատ երաժշտություն ունենանք: Այդպես՝ յուրաքանչյուրս մեր ֆոնոտեկան ունեինք, որ մի տեսակ բոլորինս էր: Այդ ամենը շատ կարոտում եմ, դրա մեջ շատ բան կար, ավելի հետաքրքիր էր:

Հայ FM-ը մշակույթ էր ձևավորում: Հիմա է, որ միայն մի հեռախոս ունենալը բավարար է ուզածդ երաժշտությունը լսելու համար: Այն ժամանակ այլ էր: Համաշխարհային շատ հիթեր ու նույնիսկ պրեմիերաներ հայ ունկնդրին հասանելի էր լինում շնորհիվ Հայ FM-ի: Մեր ֆոնոտեկան ձևավորվում էր բացառապես արտասահմանից բերված CD-ների, վինիլների ու կասետների հիման վրա: Թե՛ զուտ հաղորդավարական մշակույթի ու թե՛ երաժշտական տեսանկյունից Հայ FM-ը միանգամայն նոր մոտեցում ու ֆորմատ էր առաջարկում:

1995-ին, երբ Հայ FM-ն արդեն աշխատում էր, դեռևս հովհարային անջատումների շրջանում մարդիկ մարտկոցներ էին գտնում ու փոքրիկ ռադիոընդունիչների միջոցով Հայ FM լսում: Դա մեզ համար շատ մեծ բան էր:

Հայ FM-ով էլեկտրոնային երաժշտություն էր հնչում: Մեզ հետ էին Իքս Ֆոբուս խմբի տղաները՝ Սամսոնն ու Աշոտը, ովքեր մեծ աշխատանք էին անում, վարում էին էլեկտրոնային երաժշտությանը նվիրված X-Club ծրագիրը, երաժշտություն էին գրում, հրավիրում վոկալիստների: Այդ ամենը Հայաստանում արվում էր առաջին անգամ: 90-ականներին հենց մենք էլեկտրոնային, էքսպերիմենտալ երաժշտությունը հասանելի դարձրեցինք հայաստանցիներին: Դա հեղափոխական քայլ էր մեր կողմից: Բազմաթիվ DJ-ներ Հայ FM-ում հնարավորություն ունեցան իրենց երաժշտությունը ներկայացնելու հանրությանը ոչ միայն ռադիոյի եթերից, այլև մեր կազմակերպած փառատոների ընթացքում:

Փառատոներին թե՛ որպես մասնակից ու թե՛ որպես ժյուրի ներկա էին լինում DJ Գոուվը, DJ Դեյլը, DJ Փլեյը, Արայիկը՝ Դիջոն, Կարենը՝ Կրետը ու էլի շատ տաղանդավոր մարդիկ: Նրանցից շատերը հետագայում մեծ աշխատանք են տարել այդ ոլորտում: Կարելի է ասել՝ Հայ FM-ն էլեկտրոնային երաժշտության դարբնոց էր:

1996-1997 թվականներին էլեկտրոնային երաժշտությունը մտավ իրական տարածք: Մի քանի ակումբներ կային: Ամենա այսպես ասած՝ կոռուտոյը Կասկադն էր, այդտեղ լավ տեխնիկա կար վինիլներով: Ես էլ եմ նվագել Կասկադում: Մեկ էլ՝ Պոլիտեխնիկի կանաչ դահլիճն էր լեփ-լեցուն լինում գրեթե ամեն շաբաթ կամ կիրակի օրերին: Ավելի ուշ՝ 2000-ականներին, նման վայրերը շատացան:

DJ լինելն ինձ կապում է իմ երիտասարդության հետ: Այժմ տարվա մեջ 5-6 անգամ տարբեր միջոցառումների ժամանակ հանդես եմ գալիս վահանակի մոտ: Դա իմ հոբբին է, ինձ իմ նախկին կյանքի հետ կապող միակ բանը: Մնացած ամեն ինչ իմ կյանքում հիմնովին փոխվել է, բայց դիջեյությամբ ես երևակայական կապ եմ հաստատում իմ նախկին՝ երիտասարդ կյանքի հետ:

Հասմիկ Բարխուդարյան
Հարություն Մալիսասյան

X-PHOBOS

ԷԼ ՀԱՈՒՍ, ԷԼ ԲՐԵՅՔԲԻԹ, ԷԼ ՏՐԱՆՍ, ԷԼ ԹԵՔՆՈ.

↑ X-Phobos խումբը՝ Հայ FM ռադիոկայանի ստուդիայում

Ինչպես հեռավոր 90-ականներին Երևանում մասնագիտացած ակումբների խիստ սակավության ֆոնին մի կերպ սկզբնավորվեց հայրենական էլեկտրոնային երաժշտությունը և ինչ դեր ուներ դրա կայացման գործում X-Phobos խումբը. պատմում է խմբի համահիմնադիր Dr!Sam-ը:

Սամսոն Խաչատրյան՝ նյարդաբան էպիլեպսիայի և քնի խանգարումների մասնագետ, ՀՀ ԱՆ նյարդաբանության գծով խորհրդատու, Առողջապահության նախարարության առողջապահության ազգային ինստիտուտի նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնի վարիչ, Սոմնուս նյարդաբանական կլինիկայի ղեկավար և Քնի հետազոտման եվրոպական միության գործադիր կոմիտեի անդամ:
Ոչ, հերոսին չենք շփոթել, պարոն Խաչատրյանը նույն ինքը Dr!Sam-ն է՝ հայոց ռեյվի առաջամարտիկներից մեկը:
Այս շատ լուրջ կոչումներով մարդուն հանդիպեցի հերթական բժշկական կոնֆերանսից հետո: Դասական հագնված լիքը մարդկանց մեջ ճանաչեցի սպիտակ վերնաշապիկով Սամսոնին ու հենց այդ բժշկագիտական միջավայրում դեղերի վահանակների ներկայությամբ էլ զրուցեցինք էլեկտրոնային երաժշտությունից: Կոնտրաստները շատ էին, ինչ խոսք, դժվարությամբ էի պատկերացնում, թե երբեմնի անքուն գիշերների սիրահար տղան ինչպես է դարձել քնի խանգարումների մասնագետ:
Ամեն ինչ պարզ դարձավ, երբ Սամսոնը սկսեց խոսել էլեկտրոնային երաժշտությունից: Նման հանրագիտարանային գիտելիքներ էլեկտրոնային երաժշտության ոլորտից ու նման փայլ աչքերում ես դեռ երբեք չէի տեսել: Սամսոնը մեծ խանդավառությամբ էր պատմում էլեկտրոնային երաժշտության ամեն մի ուղղության, ենթաճյուղի ու կատարողի մասին: Ստիպեց էդ բոլորն անգիր անել, հատ-հատ լսել կատարողներին ու վերջում էլ խոստովանեց, որ արտերկրում տեղի ունեցող բժշկագիտական կոնֆերանսների պատրվակը միշտ օգտագործում է որևէ հայտնի դիջեյի համերգին ներկա գտնվելու համար:

← Dr!Sam-ը (X-Phobos), DJ Stormy K-ը, (Docheads), Դրինա Լեդենեկը (Dynamit FM), DJ AER-ը (Docheads) և Garry Spectrum-ը 2001-ի DGeneration փառատոնի ժամանակ Ալպպուրյան հրապարակում

↓ Mad DJ-ը և Dr!Sam-ը

Փորձեցինք, ստացվեց

Ժամանակին անդերգրաունդի շունչն ավելի լավ էր զգացվում, քան հիմա: Այդ շրջանում էլեկտրոնային երաժշտության տարբեր նոր ուղղություններ ի հայտ եկան, որոնց, իհարկե, երկրպագում էինք, տարված էինք այդ երաժշտությամբ ու հաճախ էին առաջանում մտքեր, որ գուցե մենք էլ կարող ենք մի բան փորձել ու անել:
1997-ին իմ բումբոքսի համար միկրոֆոն գնեցի: Նույն օրը հրավիրեցի մոտ ընկերներիս՝ փորձարկումներ անելու: Որոշեցինք ինչ-որ թրեք համադրել ընկերներիցս մեկի՝ Աշոտի (Mad DJ) ռեպ կատարմամբ: Լավ ստացվեց ու որոշեցինք շարունակել, չնայած որևէ այլ պրոֆեսիոնալ սարքավորում չունեինք: Այդպես ստեղծվեց X-Phobos խումբը. չորսով էինք՝ Mad DJ-ը, Mighty K-ը, CJ AlexX-ը և ես՝ Dr!Sam-ը: 1997-ին մասնակցեցինք Հայաստանում առաջին դիջեյ փառատոնին: Էլեկտրոնային երաժշտության բոլոր ուղղությունները մեզ հետաքրքիր էին ու ինչ ասես փորձել ենք: Այդպես ընդունված չի դրսում, իսկ մենք էլ հաուս, էլ բրեյքբիթ, էլ տրանս, էլ թեքնո ու էլի շատ ուրիշ բաներ էինք փորձարկում: Շուտով ալբոմ ստեղծվեց բոլոր այդ թրեքերով («Spheroid» 1999) ու մեր խմբի գործունեությունը ծավալվեց տարբեր ուղղություններով. ռադիոծրագրեր, լայվեր, փառատոներ, կապ ունկնդիրների հետ և այլն: Ալբոմի փրոմոշնին նաև միացավ Հայ FM-ի հանրահայտ ռադիոդիջեյ, լուսահոգի DJ Սեդրակը:
2000-ականներից մեր գործունեությունը քիչ-քիչ դադարեցրինք: Դե, կյանքն իր ուղղումներն է մտցնում. մեկը բանակ գնաց, մյուսն այլ ոլորտ մտավ, դե ես էլ խորացա բժշկության մեջ: Բացի դա, պետք է խոստովանեմ, որ դաշտ չկար ու չկար այդ ամենի կոմերցիոն կողմը: Մյուս շատ տաղանդավոր ռեզիդենտ դիջեյների հետ մենք, իհարկե, հասանք նրան, որ երևանյան ակումբներում հնչի ոչ թե փոփ, այլ հաուս, թեքնո ու էլեկտրոնային երաժշտության այլ ուղղություններ: Նաև մեզ հետևելով ի հայտ եկան Docheads խումբը (DJ AER, DJ Stormy K, ովքեր, ի դեպ, նույնպես

← Dr!Sam-ը և CJ AlexX-ը՝ երկրպագուների հետ հանդիպման ժամանակ

ճանաչված բժիշկներ են), Garry Spectrum-ը, Darklight-ը, այլ գրագետ ու պրոֆեսիոնալ պրոդյուսեր-դիջեյներ, բայց ասել, որ հնարավոր եղավ դաշտ ձևավորել, սխալ կլիներ: Որոշ դիջեյներ, անշուշտ, շարունակում էին գործունեությունը, ունենք հրաշալի ակումբային դիջեյներ, ովքեր իրենց գործի իսկական վարպետներ են: Սակայն խոստովանեմ, որ ակումբ հաճախող զանգվածը տեսական գիտելիքով բավական թուլացավ, ինչը, իհարկե, դեր խաղաց հետագայում:

Հասցնել 15 րոպեում

Մեր խմբի համար մեծ իրադարձություն էր, երբ Ալեքսն ավելի հզոր համակարգիչ ունեցավ, ու մենք սկսեցինք օգտագործել դրա ծրագրային հնարավորությունները, որոնք, միևնույն է, շատ սուղ էին: Լայնամասշտաբ մի բան անելը շատ բարդ էր, ոչ պրոդյուսեր ունեինք, ոչ էլ հովանավոր, սակայն անում էինք ինչ հնարավոր էր: Թրեքերը մշակելու և միքսելու համար նախատեսված հատուկ ծրագրեր կային, որոնցից հնարավորության դեպքում օգտվում էինք: Իսկ ահա իրական գործիքներ, ինչպես, օրինակ՝ սինթեզատորը, շատ թանկ հաճույք էր, որը մեզ չէինք կարող թույլ տալ: Թրեքերից երկուսը՝ Marsophobia-ն ու Brainstorm-ը, գրել ենք ընդամենը 15 րոպեում՝ ծրագրի դեմո տարբերակի միջոցով: Դե, այսպես էր, ծրագիրը 15 րոպե փորձարկման հնարավորություն էր տալիս ու հետո չեղարկվում: Պետք էր հասցնել ամեն բան անել այդ 15 րոպեի ընթացքում՝ հավաքել առանձին մասեր, բիթերի բաժիններ, հնչողության օսցիլյատորներ և այլն: Բազմաթիվ փորձերից հետո գործի դրեցինք համակարգիչն ու 15 րոպեում 10 րոպեանոց թրեք ձայնագրեցինք, հետո՝ ևս մեկը: Թրեքերը միակն են իրենց տեսակով, որովհետև այդպես կարող էր ստացվել միայն այդ 15 րոպեի ընթացքում, իսկ այլ անգամ գուցե լրիվ այլ բան ստացվեր: Տեխնիկական ավելի լավ հնարավորություններ, ցավոք, ունեցանք ավելի ուշ, երբ արդեն նույն ինտենսիվությամբ չէինք զբաղվում երաժշտությամբ: Ռադիո Հայ FM 105.5-ում աշխատելու տարիներին հաճախ էինք օգտվում իրենց տեխնիկայից մի քիչ ավելի որակյալ բան ստանալու, օրինակ՝ վոկալ ձայնագրելու համար:

Հետաքրքիր էր նաև հատուկ ձայներ ստանալու մեր փորձառությունը: Դե, իհարկե, կային ձայնասկավառակներ, որտեղ կարելի էր գտնել տարատեսակ ձայներ՝ սեմփլներ, սակայն մենք շատ հաճախ ինքներս էինք ստեղծում դրանք տարբեր կենցաղային իրերի միջոցով, օրինակ՝ ինչ-որ բաներ իրար հարվածելով: Դա իհարկե մի քիչ էլ պրոֆեսիոնալիզմ է պահանջում, պետք է ճիշտ ֆորմատով ձայնագրել և այլն, բայց մեզ մոտ կարծես թե վատ չէր ստացվում:

Մի անգամ հանրահայտ Tornado ակումբի հիմնը ստեղծելու առաջարկ ստացանք ու որոշեցինք, որ թրեքի հենց սկզբում պիտի բարձր գոռան «տորնադո՜» ու այդ ձայնն ուղեկցվի ու վերաճի տորնադոյի՝ փոթորկի ձայնի: Ձայնը ստեղծելու համար ընդամենը հնարամտություն էր պետք: Վերցրեցինք տղաներից մեկի տան օդամղիչը, միացրեցինք ամենաուժեղի վրա, մի կողմից մոտեցրեցինք միկրոֆոնը, մյուս կողմից էլ ես գոռացի ակումբի անունը: Այդպես էլ արեցինք ու հեչ վատ չէր ստացվել: Դե՝ սեմփլինգն ընդունված բան է էլեկտրոնային երաժշտության մեջ: Մենք էլ մեր հերթին ստեղծում էինք մեր սեմփլները:

Ռադիոկրթություն

Այդ տարիներին շատ հայտնի էր Հայ FM 105.5 ռադիոկայանը՝ իրենց ռադիոդիջեյների թիմով: Ես էլ այդ ընթացքում միացա Հայ FM-ի թիմին՝ իբրև ծրագրերի տնօրենի՝ հայտնի DJ Արթուր Ծուլիկյանի օգնական, հետո նաև որպես ռադիոդիջեյ: Ամեն բան անում էինք, որպեսզի ունկնդիրներին կրթենք էլեկտրոնային երաժշտության ոլորտում: Մի քանի ծրագիր ստեղծեցինք, որոնց ընթացքում խոսում էինք ամենատարբեր ուղղությունների ու կատարողների մասին: Մենք շատ էինք կարևորում ունկնդիրներին կրթելը, ի վերջո, անհնար է լավ տիրապետել գործնականին՝ առանց տեսականի: Ստեղծվեց մեր ամենահայտնի ռադիոծրագիրը՝ X-Club-ը: Այն ներառում էր տարբեր բաժիններ, օրինակ՝ Classic Track, նորություններ ասպարեզից, ինչպես նաև էլեկտրոնային երաժշտության առանձին հիթ-շքերթ ունեինք՝ Top Selection-ն ու պարբերաբար ներկայացնում էինք համաշխարհային ամենաթարմ հիթերը: X-Club-ի շուրջ ժամանակի ընթացքում ձևավորվեց մեծ լսարան ու համայնք, որի հետ մշտական կապի մեջ էինք, հանդիպումներ էինք կազմակերպում, փոխանակվում երաժշտությամբ, քննարկում շատ բաներ: Ծրագրերի կայացմանը մեծապես նպաստում էր հատկապես Արամ Չախոյանը և Հայ FM-ի մյուս դիջեյները: Մենք ինքներս էլ թրեքեր էինք գրում ու եթեր տալիս, ստեղծում էինք պայմաններ, որ այդ ոլորտում ստեղծագործողներն ունենան իրենց ստեղծածը հանրայնացնելու հարթակ: Առանց համեստության պետք է ասեմ, որ 90-ականներից մինչև 2000-ականների ընթացքում Հայ FM-ի միջոցով հնարավոր եղավ մեծապես կրթել մեր երաժշտասերներին էլեկտրոնային երաժշտության ոլորտում: Որոշ շրջան աշխատեցի նաև Dynamit FM-ում, որտեղ նաև դիջեյների էինք հրավիրում, ովքեր հենց եթերում լայվ միքսեր էին անում: Դա մի բան էր, որ արդեն վաղուց արվում էր աշխարհում, իսկ մեզ մոտ առաջին անգամն էր: Առհասարակ, ոչ միայն տեսական գիտելիքների, այլև բուն երաժշտության մասով երկար ժամանակ քիչ «կիրթ» ունկնդիրներ ունեինք: Այդ պատկերը տարօրինակորեն խորացավ դեպի 2000-ականների վերջ: Ես դա կապում եմ ակումբների՝ փաբի վերածվելու գործընթացի հետ: Մի տեսակ մեր երիտասարդությունը նախընտրեց նստել-ասել-խոսելը, քան ակտիվ շարժվելն ու պարելը: Ունկնդրի և ակումբում պարողի՝ երաժշտական ոճի մեջ կիրթ լինելը, այսինքն՝ ոճերն իրարից տարբերելը և հիմնական պրոդյուսերներին ճանաչելը կարևոր է, կարևոր է գիտակցումը, որ առնչվում ես արվեստի մի տեսակի հետ ու որ դա պարզապես մի երգը մյուսի հետևից միացնել կամ միքս անել չէ:

Իվենթներ ու լայվեր

Քաղաքում իվենթների մշակույթի պակաս կար, որը ևս փորձում էինք լրացնել: Իր երաժշտությամբ ու դիջեյներով ամենատպավորիչը «Կասկադ» ակումբն էր՝ 90-ականների անդերգրաունդի կենտրոնը: Այդտեղ 2001-ին The Prodigy-ին նվիրված միջոցառում կազմակերպեցինք: Մեծ իրադարձություն էր, «Կասկադի» ադմինիստրացիան ապշած էր մարդկանց հոսքից: Մենք էլ ամեն բան արել էինք, որ միջոցառումն ամբողջական լինի, նախապես ռադիոեթերում ներկայացրել էինք բի-սայդեր, հին թրեքեր ու նաև պատմել այդ բոլորի մասին, շատ հագեցած ծրագիր էինք մշակել: Հետո էլ Հելոուինի փարթի կազմակերպեցինք, որը ևս շատ հաջողված էր: Էդ ոչ հայեցի բաները մենք ենք առաջինն արել...

↓ X-Phobos-ը 1997-ին Կասկերային երաժշտության տան դահլիճում տեղի ունեցած դիզեյ փառատոնին

Ավելի ուշ ծանոթացանք ՆՓԱԿ-ի Եվայի ու Վահիկի հետ: Նրանք էլ, պարզվեց, հետաքրքրված են էլեկտրոնային երաժշտությամբ ու որոշեցինք առաջին անգամ լայվ համերգ կազմակերպել: Հայաստանում առաջին էլեկտրոնային լայվն էինք պատրաստում, հետաքրքիր զգացողություն էր՝ բեմ, հանդիսատես: Հավաքվել էին մեր հիմնական ունկնդիրները, որոնց գրեթե դեմքով ճանաչում էինք: Ամեն բան հրաշալի ստացվեց: Կարևոր էր նաև հենց ինքնին փաստը, որ դա տեղի ունեցավ: 2001-2002-ին նաև երկու շատ մեծ դիջեյ փառատոների կազմակերպմանը մասնակցեցինք. մեկն Ազատության հրապարակում, մյուսը՝ Հանրապետության: Ի զարմանս մեզ՝ երկու հրապարակներն էլ լեփ-լեցուն էին: Ճիշտ է, հիմա ինքս չեմ զբաղվում երաժշտությամբ, բայց ակտիվորեն հետևում եմ, թե ինչ է կատարվում թե՛ Հայաստանում ու թե՛ դրսում: Հիմա մեզ մոտ կարծես բազմազանություն կա, չնայած, միևնույն է, այն դաշտը, որը կուզեի ձևավորվեր, դեռևս չի ձևավորվել: Հուսով եմ, որ դանդաղ քայլերով գնում ենք այդ ուղղությամբ:

← Սամսոն Ռաչպրյանը (Dr!Sam)

Համիկ Բարխուդարյան
Սամսոն Ռաչպրյանի արխիվ

PAWS

Հայաստանի փոքրաթիվ կին դիզեյներից մեկը՝ Անահիտ Paws-ը, պատմել է ԵՐԵՎԱՆԻՆ, թե ինչու է որոշել նվագել էլեկտրոնային երաժշտություն, ինչպես են մասնագիտությունում վերաբերում կանանց և ինչն էր պատճառը, որ նա մի քանի անգամ մոտ էր դիզեյությունը թողնելուն:

Երկուսիս համար անսովոր՝ կեսօրին մոտ ժամին ես զրուցում և հետևում էի, թե ինչպես է Անահիտը, նույն ինքը Paws-ը՝ Երևանում հատուկենտ կին (և շատ զիլ) դիզեյներից մեկը, փորձում մտաբերել, թե ինչ ծագման է սրճարանում հնչող երաժշտությունը: Ամենասկզբում հնչող երաժշտության «հարցերը լուծեցինք», ես էլ ինձնից գոհ երևակայեցի, թե հասկանում եմ՝ ինչի մասին է խոսում Անահիտը: Այնուհետև սեղանին հայտնվում է խմելու սառը մի բան և սկսվում է զրույցը՝ ամենասկզբից:
«Երաժշտությունն ա ընտրել ինձ, ես էլ ժամանակին հասկացել եմ՝ մարկետոլոգի գործը պետք էր փոխարինել երաժշտությամբ, տենց դարձա դիջեյ». տասը տարուց ավել է, ինչ Անահիտը զբաղվում է դիջեյությամբ, սակայն իր պատմությունը սկսվում է շատ ավելի վաղ, երբ մեծանում էր՝ ներկա գտնվելով հոր ռոք խմբի փորձերին, հարցուփորձ անելով այս կամ այն երաժշտական գործիքի մասին. «Պապաս ռոք բենդ ուներ՝ փոքրուց էդ միջավայրում եմ մեծացել: Երբ մեծացա, 16 տարեկանում սկսեցի հորս ու ընկերներին օգնել ինչով որ կարող էի՝ համերգներին էստեղից էնտեղ էի վազվզում, օգնում էի կազմակերպչական հարցերում: Հետո էս ընթացքում Երևանում էլեկտրոնային երաժշտությունը մոդա ընկավ, ես էլ սկսեցի հետաքրքրվել, շատ ծանոթներ ունեի փարթիներից ու համերգներից՝ հարցուփորձ էի անում ինչը ոնց: Չնայած պապան ասում էր՝ էդ նվագելու բան չի, որ ուզում եմ ու մինչև հիմա նույն ձև ա մտածում, բայց ես չլսեցի ու սկսեցի նվագելը»:

Ռեյիդ հայի հեր ես կերել

Սկզբնական շրջանում անհասկանալի կոճակները հետաքրքրությամբ ուսումնասիրում է, հարցուփորձ անում, թե որ մեկն ինչի համար է, այնուհետև հայտնվում է մի կետում, որտեղ ինքն ազատորեն միախառնում է տարբեր մշակութային ելևէջները՝ խոսելով ակումբի ջահելների հետ:
Երբ իր երաժշտությամբ Անահիտը զրուցում է հավաքված ջահելների հետ, հասցնում է հետևել անցուդարձին ու կարճ ժամանակ անց պարզվում է՝ մեկի սիրտն են կոտրել, մեկը եկել է նոր սեր փնտրելու, մեկն էլ աջը քաշած պարում է:
Մարդկանց բացահայտելն իր մասնագիտության առավելություններից է, չհաշված մշակութային և երաժշտական նոր ձևերի բացահայտումը, միջոցառումներին ազատ ելքի և մուտքի հնարավորությունը, խմիչքն ու մնացած բաները: Հիմա անցած ճանապարհի մասին ավելի հեշտ է խոսում, քան ինքը՝ ճանապարհն է եղել: Անգամ հիմա Հայաստանում կին դիջեյներին մատների վրա կարելի է հաշվել, ուր մնաց խոսելը 2013-14 թվականների մասին: Ինքն էլ իր ճանապարհը սկսել է ճիշտ և ճիշտ այդ ժամանակ, երբ ընդամենը մեկ հայտնի կին դիջեյ է եղել՝ Վակցինան (Արուսիկ Մկրտչյան): Շատերը մտածել են, թե շուտով հավեսը կհանի ու կանցնի առաջ, սակայն հիմա կեսկատակ ասում է, թե կարգին էլ դիմացել է:

Չնայած դիմանալն էն խոսքը չի՝ «Հիմա ոնց չնայեմ էս մարդկանց ու առանց լարվելու նվագեմ»-ից մինչև «հա, խելքս հացի հետ եմ կերել՝ այ քեզ բան, հետո ինչ, որ կին եմ» ու մեր զրույցը շուտով հասավ այն կետին, որտեղ իր պատմության երկրորդ գլուխն է, թե բա կին ես՝ արի ու դիմացի. «Առաջին անգամ Բուռբոնում եմ նվագել՝ երեք հոգով էինք (մյուս երկուսը տղաներ էին)։ Էստեղ որ պիտի նվագեի, ձեռքերս դողում էին, հետո մենակով Կալիումեում նվազեցի ու նորից սկզբի կես ժամն ահավոր անհանգիստ էի, որովհետև բոլորը նայում են քեզ, մեկը թարս ա նայում, մեկը ժպտում ա ու չես հասկանում՝ հավանո՞ւմ են նվագածդ, թե չէ։ Բայց հետո ժամանակի հետ անցավ՝ ավելի ինքնավստահ դարձա, որովհետև շատերն էին ասում, որ գործերս հավանում են»։

Աղջիկ երեխեն տղա դիզեյների աշխարհում

Խոսակցությանս այս հատվածում Անահիտի հետ խոսում ենք հավասարը հավասարին՝ կինը կնոջ հետ, որովհետև բա հետո ի՞նչ եղավ-ի պատասխանները կամ գուշակվում են կամ էլ նույն սցենարով գնում. ամեն ինչ շատ ավելի պարզ է՝ լվացվում ես սառը ջրով, մազերդ ետ սանրում ու կրկին առաջ նետվում։ Երբ Անահիտը դեռ նոր էր սկսում նվագել, տարիքով ավելի մեծ և տղամարդ դիջեյների շրջանում խոսակցություններ սկսեցին, թե «էս աղջիկ երեխեն ի՞նչ գործ ունի ստեղ», ինքն էլ դեռ նորեկ էր ու անակնկալի էր գալիս ամեն խոչընդոտից, երբ իրեն աղջիկ լինելու պատճառով չէին ընդունում շատերը. «Ես դեռ նոր էի սկսել նվագել ու չէի էլ հասկանում ինչը ոնց։ Էս ընթացքում տարիքով տղամարդ դիջեյներ կային, որ անընդհատ հարցնում էին՝ էս երեխեն ո՞վ ա, ինչի՞ ա եկել ու նվագում, ի՞նչ ա ուզում անի։ Իսկ մյուս կեսն էլ ուղղակի չէին սիրում ինձ, որովհետև իրանց համար անսովոր էր, որ աղջիկը կկարողանա նվագել»։
Սակայն այժմ անկեղծանում է, որ իր կյանքում «խելքը գլխին» որոշումներից մեկը եղել է մյուսներին այլևս չլսելը կամ էլ հաշվի չառնելը, թե ինչպես են սահմանում իր ինքնությունն ու եթե ինքս էլ շատ անկեղծանամ, կասեմ, որ իրեն պետք է լսել ու հետո ճանաչել, որովհետև իր երաժշտությամբ քո ականջին են հասնում այնպիսի տողեր, որոնց կարիքը դու հաստատ ունես՝ «արա այն, ինչ ուզում ես», «դու ազատ ու գեղեցիկ ես»։
Անահիտը շարունակում է նկարագրել իր ճանապարհը հայոց ռեյվի ոլորաններում։ Կարճ ժամանակ անց խոսակցությունները վերածվում են քննադատությունների, թե բա՝ «հագածդ տեսնո՞ւ ես, բա սենց տեսքով կնվագե՞ն»։ Շուտով տոպերին գալիս են փոխարինելու փակ շապիկներն ու շալվարները և այս շրջանի մասին Անահիտը պատմում է խոսքն ընդմիջող ծիծաղով, որովհետև նվագում էր այնպիսի տեսքով, ասես քնից նոր էր արթնացել ու իրեն կարգի բերելու ժամանակ չէր ունեցել. «Ես իսկական դեպրեսիաներ էի տանում։ Անկապ վիճակներով գնում էի նվագելու՝ ջինսերով, խառը մազերով ու զգում էի, թե ոնց են էլի խոսում իմ մասին, թե հիմա էլ աղջկական չեմ հագնվում՝ չեն հավանում։ Մոտավորապես 2013-14 թվականների մասին եմ պատմում, երբ ուզում էի բոլորին հարցնել՝ կկողմնորոշվե՞ք, թե չէ, որովհետև ես էլ չգիտեի՝ ինչ անել»։
Սրանք յոթ-ութ տարի առաջվա դեպքերի նկարագրություններն են և մինչև Անահիտը «խելքը գլուխն է հավաքում» ու չի ենթարկվում մյուսների կարծիքներին՝ վերադառնալով շորտերին և տոպերին, սկսվում են «անվերջանալի ֆլիրտների», «սիրախաղեր որսացող երիտասարդների», «մեր սեղանից ձեր սեղան, քուրրս» հյուրասիրությունների, «հա լավ, ինչ ես քեզ թանկացնում» վրդովմունքների ու «վայ, պատահական քեզ կպա, քուրս» արդարացումների ժամանակները։
Հետո մենք խոսում ենք նվագելու ընթացքում իր կողքին հավաքված «կախարդական շշերից», որտեղ ինքը դատարկում էր մեծ ու փոքր բաժակներով հյուրասիրված խմիչքները՝ իհարկե ձևացնելով, որ խմել է դրանք։ Այս կախարդական շշերի հետևում կանգնած էին մարդիկ, ովքեր սպասում էին, թե երբ է Անահիտը թողնելու այս գործն ու «գնալու իր գործին» ու մեկ էլ իսկական հիասթափություն՝ ճանապարհորդություններ Եվրոպայով և շատ այլ երկրներով, որտեղից Անահիտը Երևան է բերում նոր ելևէջներ ու նոր երաժշտություն, չնայած հանգամանքին, որ տեղափոխությունների և ճանապարհորդությունների ընթացքում զբաղվել է իր առաջին՝ մարկետոլոգի մասնագիտությամբ և նվագել քիչ երկրներում։ Այնուամենայնիվ սա ժամանակահատված էր, որից հետո այս մարդկանցից շատերը հայտնվեցին ակումբներում, լսեցին իրեն ու մեկ էլ՝ «հերիք չի դեռ նվագում ես, մի հատ էլ զարգացել ես» և շատերը մնացին Անահիտի կյանքում որպես ընկերներ, մյուսներն էլ շարունակեցին հետևել, թե ինչպես է ինքը համառորեն պայքարում։

Ցերեկային Երևանի կարոտը

Երբ համավարակը քաղաքում տարածվում է, որոշում է առժամանակ չնվագել և հանգստանալ։ Մի տարի հանգստանալուց հետո այժմ վերադարձել է իր սովորական կյանքին, որտեղ ամեն բան սկսվում է գիշերով։ Սակայն ավելի վաղ՝ դեռևս 2018-ին, Անահիտն ունեցել է մտքեր՝ հանգստանալու մասնագիտությունից։ Պատճառը շուկայի չափազանց տղամարդակենտրոն լինելն էր և չնայած հանգամանքին, որ Անահիտը շարունակում էր նվագել՝ կրկին բախվում էր կամ խտրական վերաբերմունքի, կամ իր դեմ սեռական բռնության փորձերի։
Այս շրջանում է, որ տարիների իր փորձի և դժվարությունների մասին շուտով կկտրում է իր սոցիալական էջում՝ շարադրելով գրեթե բոլոր բարդությունները, որոնց վրայով այսօր անցնում ենք սահուն՝ սուրճի ամեն ումպի հետ։ Կրկին ամեն բան ամենասկզբից. նախևառաջ սովորում է նվագելու տեխնիկային, այնուհետև հակառակ սեռի ցանկացած մեկից մասնագիտական խորհրդատվությունը վերածվում է սեռական բռնության փորձերի, շատերի աչքին երևում է որպես «քաղցրիկ»՝ տղամարդ հանդիսատեսի համար և ամենավերջում՝ «կանայք՝ կանանց համար», ասել է թե՝ աջակցություն է գտնում կանանց շրջանում։

Այրուհիներ՝ ոչ միայն տղամարդկանց մասնագիտություն

Այս տարիների ընթացքում Անահիտը հասցրել է մի քանի փոփոխություն նկատել իր մասնագիտական ոլորտում, այստեղ կանայք արդեն սկսել են գրեթե հավասարվել տղամարդկանց, ավելի շատ դեպքերում կանայք միմյանց ավելի աջակցող են, քան տղամարդիկ, որովհետև ինչպես ինքն է կեսկատակ ասում, տղամարդկանց մեջ չկան այնպիսի թեմաներ, թե ինչ հագնել այդ օրը նվագելիս, կամ ինչպես քսել ստվերաներկը, որ չփչանա։
Ինքն էլ արդեն տիրապետում է աշխատանքում աղջկական բոլոր թեմաներին և ուղղորդում շրջապատի մյուս աղջիկներին հետևելու իրենց երազանքին, եթե ուզում են դիջեյ դառնալ, կամ էլ ուղղորդում է ակումբ՝ կարգին երաժշտություն լսելու, ինչպես իմ դեպքում, երբ հարցազրույցն ավարտելուց հետո մի քանի ժամ անց կրկին հայտնվեցի երևանյան կարգին մյուզիքի և ջահելների մեջտեղում, որտեղ Անահիտի կողքին կախարդական շշերի պարունակությունն ասում էր, թե բա կին ես՝ արի ու դիմացիր։

Շուշանիկ Փափազյան
Էլիզա Մխիթարյան

Դուք դեմք եք

Ինչու ակումբներ հերթով չեն թողնում բոլորին, ինչպես է պետք հագնվել ներս մտնելու համար և ինչ առավելություններ ունեն ակումբային նախաշեմում հսկող կանայք. շփվել ենք «Պոլիգրաֆի» նախկին ֆեյս քրնթրոլ Ինա Աբրահամյանի հետ:

Դեռ կինոներից գիտենք, որ գիշերային ակումբ մտնելու համար մարդուն պետք է նախ ներս թողնեն: Հիմա դա ոչ միայն կինոյական, այլև երևանյան իրականություն է: Ինչպես փաստում են մասնագետները, ակումբի նախաշեմի հարցուփորձը բարեհաջող հաղթահարելու համար նախևառաջ պետք է հարմար հագուստով լինեք՝ երբեք չլինեք այնպիսի վերնաշապիկով, որը կրում են գործնական հանդիպումների ժամանակ, չէ՞ որ ակումբում պետք է լիցքաթափվել, ոչ թե լինել անհարմար հագուստով: Այնուամենայնիվ, եթե դուք հարմար հագուստով եք, ուշադրություն դարձրեք ձեր բառընտրությանը: Պետք է միշտ մտաբերել, որ ակումբի մուտքը հսկող աղջիկներն ու տղաները ձեր «քըրերը» կամ «հընգեր-ախպերները» չեն, գերադասելի է նաև «չմեռնել» ֆեյս քընթրոլի «արտի նուրբ լարերին», միևնույն է, եթե որոշված է, որ դուք չեք կարող առաջանալ, բացատրական աշխատանքներ տանելն անիմաստ է:

Եթե դուք սովոր եք երևանյան գիշերային կյանքին, ապա որևէ առանձնահատուկ բարդության չեք հանդիպի ակումբ մուտք գործելիս, սակայն պետք է միշտ հիշել՝ ինքներդ էլ մի օր կարող է հայտնվեք կարգավիճակում, երբ ֆեյս քընթրոլը որոշի՝ դուք ակումբ չեք կարող մտնել: Մերժելու պատճառները կարող են լինել հազարավորները՝ ինչպես նշեցի՝ հագուստից մինչև բնավորություն, հարցերի ցրողական կամ հորինված պատասխաններ և այլն:

Ի տարբերություն ֆիլմերի, որտեղ կտեսնեք հաղթանդամ տղամարդկանց, ովքեր հսկում են ակումբների մուտքը՝ իրականությունն այլ է: Վերջին տարիներին Հայաստանում այս աշխատանքով սկսել են զբաղվել աղջիկներ, որոնք չնայած աչքի չեն ընկնում մարմնի հաղթանդամ կազմվածքով, ամենևին էլ չեն զիջում տղամարդկանց: Նրանցից մեկը՝ Ինան, սկսել է դռները հսկել «Պոլիգրաֆում», իսկ հիմա արդեն ինքն է փարթիներ ու ռեյվեր կազմակերպում: Բայց մեզ հետաքրքիր է իր փորձառությունն ակումբի նախաշեմին:

Ֆեյս, նույն ինքը՝ դորմեն

Մինչև հանդիպելն ուսումնասիրում եմ Ինայի սոցցանցերը: Նկարները հերթով թերթելով մոտավորապես պատկերացնում եմ, թե աշխատանքի ընթացքում քանիսին է թվացել, թե այս աղջնակին շրջանցելը հեշտ է լինելու, սակայն ինչպես հաճախ պատահում է, ֆեյսբուքն ու իրական կյանքը լրիվ տարբերվում են: «Իմ հետաքրքրությունն առհասարակ քլաբինգի ու անդերգրաուն կյանքի շուրջ առաջացավ The Basement ակումբից, ուր գիշերը ժամը 2-ից հետո ընկերներով գնում էինք, որպես այցելուներ»,– հիշում է Ինան, երբ խոսք բացվեց ամենասկզբի մասին: 2019 թվականից, երբ Ինայի կյանքն ընթանում էր ակումբային կյանքի ռիթմին զուգահեռ, իր դռներն է բացում «Պոլիգրաֆը», որի ստեղծման ամենասկզբից ներկա է եղել նաև ինքը. «Երբ պետք է Երևանում բացվեր «Պոլիգրաֆը», ես տեսնում էի, թե ինչպես էին տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ միանում էդ գործին: Շուտով ակումբը բում արեց Երևանի գիշերային կյանքում, որովհետև Բեռլինից կարգին երաժիշտներ գալիս էին ու նվագում. սա չլսված բան էր»:

Երբ մեր խոսակցությունը հասնում է այն կետին, որտեղից սկսվում է Ինայի՝ ֆեյս քընթրոլ (ոմանք նախընտրում են ավելի նեյտրալ դորմեն՝ «դռան մարդ» եզրը) մասնագիտությամբ աշխատելու պատմությունը, մենք տեղափոխվում ենք «Պոլիգրաֆի» պատերից դուրս, ուր ինչ ասես, որ չեն տեսել իր աչքերը: Երբեմն էլ թվացել է, որ զարմանալու էլ տեղ չի թողել, մեկ էլ Alteration փառատոնի ժամանակ հայտնվել է մեկն ու ասել. «Քուրըս, Նինայի համերգի վախտ սեղան ռեզերվ անել լինում ա՞, թե՞ չէ»: Սակայն աշխատանքի այս զավեշտալի և երբեմն էլ ձանձրալի պահերը եթե բաց թողնենք, կմնա ծանոթությունների այն մեծ շղթան, որը ձևավորել է ինքն այս տարիների ընթացքում:

«Նախքան այս աշխատանքին անցնելը, ես գիտեի համարյա բոլոր նրանց, ովքեր Երևանում ակտիվ էին ակումբային կյանքում,– ասում է Ինան և բացատրում, թե որն էր դրա օգուտն աշխատանքի մեջ.– ընդհանուր առմամբ ինձ շատ հեշտ էր հասկանալ՝ ում թողնեմ ներս, ում չէ, որովհետև քաղաքի կեսին գիտեի»:

Առաջին մասնագիտությամբ Ինան կինոռեժիսոր է, ինչն իրեն օգնել է այս աշխատանքում, քանի որ առանձնահատուկ հետաքրքրություն է ցուցաբերել այն կերպարների հանդեպ, ովքեր հայտնվել են ակումբի մուտքի առաջ:

Հերթը հասնում է ներքին խոհանոցին: Ուզում եմ հասկանալ՝ ինչո՞վ է առաջնորդվում դռան մոտ կանգնած մարդը, երբ որոշում է, թե ով է մտնելու ակումբ, իսկ ով ավելի լավ է այս գիշերվա համար այլ զբաղմունք գտնի: Այստեղ ամենակարևորն այն է, որ դիմացինդ տեսնի՝ գործ ունի

մեկի հետ, ով պետք է որոշի՝ ինքն այդ գիշեր կանցկացնի՞ ակումբում, թե ոչ: Դրա համար նախևառաջ պետք է հաղնվել «ըստ մասնագիտական պահանջների»՝ գրեթե միշտ լինել սպիտակ կամ այլ բաց վերաշապիկով կամ տոպով, հարմար տաբատով, դե իսկ կոշիկներն ամենաքիչն են կարևոր այս աշխատանքում: Ինչպես պարզեցի, կարևորն այստեղ դեմքի արտահայտությունն է, որպեսզի դիմացինը հասկանա, որ այն ինչ կատարվում է, հեչ էլ կատակ չէ:

Սկզբնական շրջանում, երբ Ինան անցնում է այս աշխատանքին, զուգահեռ մի քանի աշխատանք ևս կատարում էր՝ ուղեկցել, հսկել, տոմսերին ուշադրություն դարձնել և պարբերաբար ակումբի ներսի մթնոլորտը ստուգել և այլն: «Ես աշխատում էի շաբաթական երեք օր՝ հանգստյան օրերին, ներառյալ ուրբաթը: Ակումբը հենց բացվում էր՝ գիշերը ժամը 11-ից մինչև առավոտյան ժամը 4-ը: Ես ամեն ինչ անում էի սկզբնական շրջանում, հետո միայն ֆեյս էի անում,– հիշում է Ինան:– Լինում էին դեպքեր, որ ընթացքում որոշներին հեռացնում էի ակումբից, որովհետև ներս թողած իմ մարդը չպետք է խանգարեր մյուսին, ով եկել ա մյուզիք լսելու կամ լիցքաթափվելու»:

«Քուրիկ ջան, ինչի՞ չեմ կարա մտնեմ որ»

Երբ «Պոլիգրաֆը» նոր էր գործում, շատերը լսել էին ու գալիս էին: Այս ընթացքում Ինայի աշխատանքը կրկնակի բարդ էր, որովհետև պետք է այնպիսի միջավայր ստեղծեր ներսում, որ մեկը մյուսին չխանգարեին: Երբ որոշում էր որևէ մեկին կամ խմբից մի քանիսին ներս չթողնել, բարձրանում էր ագրեսիվության ալիք ու ավելանում էին հարցադրումները, թե բա՝ «քուրիկ ջան, ինչի՞ չեմ կարա մտնեմ որ» և այլն: Նման ագրեսիվ դեպքերի համար Ինան հատուկ հանգստություն ուներ և շփման հմտություններ. «Երբ դեռ նոր էինք, ով ասես գալիս էր: Դե նոր տեղ էր բացվել, ուզում էին գալ: Հետո բոլորին հասկացնում էինք՝ ինչ տեղ ա սա և ինչի պիտի չգալ կամ գալ: Ագրեսիվ մարդիկ էլ կային, բայց հասկացնում էի իրենց, թե ովքեր պիտի է ներսում լինեն: Գնում կամ չէին գալիս կամ ուղղված էին գալիս»:

Չեմ կարող շրջանցել գենդերային խտրականության թեման: Ինչ էլ ասես՝ կին ֆեյս քընթրողն անսովոր է թվում նույնիսկ այսօրվա Հայաստանում: Այդուհանդերձ, նման խնդիր, բարեբախտաբար, չի ունեցել: Ընդհակառակը, կարծում է, որ եթե կինը զբաղվում է այս աշխատանքով, դա սահմանափակում է մյուսների հնարավոր ագրեսիվ գործողությունները: «Եթե ուզում ես ճիշտն իմանալ, էս աշխատանքը պիտի աղջիկ անի, որովհետև շատերն աղջկանից ամաչում են ու չեն անի մի բան, որը կանեին տղայի դեպքում»,- թեթև ժպիտով այս մասին ասում է Ինան:

Առհասարակ, Ինայի համար մարդկանց հետ այս կարճ շփումները բավական կարևոր են և այդ կերպ է, որ փորձում է բացահայտել՝ ինչպիսինն է գիշերային Երևանը: Այս մասնագիտությամբ աշխատելու մեկ տարվա ընթացքում հասցրել է մեծ ինֆորմացիա հավաքել, որն անընդհատ համեմատում է նախորդ տարիների հետ և գիշերային երևանյան կյանքում նկատում է առաջխաղացում: Երբ ինքը դեռ ակումբային սովորական այցելու էր, ամեն բան այլ էր՝ խմիչքներից մինչև հնչող երաժշտություն: Այժմ փոխվել են անգամ ռեյվերների պարային շարժումները: Եվ որ ամենակարևորն է, ըստ Ինայի, հիմա երևանյան գիշերներում միայնակ երբեք չես կարող մնալ՝ միշտ կգտնվեն մարդիկ, ովքեր կամ քեզ չափազանց նման կլինեն, կամ էլ քեզ պես ուղղակի կգան կոտրված սիրտը հավաքելու: Ասում է, որ այդ գիշերային կյանքը նման է գետի, որում մի ուղղությամբ լողում են տարատեսակ ձկներ՝ շատերն անգամ այդ ընթացքը չզգալով, ինչպես ինքը, երբ հոգնածության պահերին ակումբում թուլացնում է նյարդերն ու սկսում հավաքված ջահելների հետ համընթաց շարժվել՝ երաժշտությանն ու նեոնային լույսերին զուգահեռ:

Երբ Ինայի հետ զրույցում այս կամ այն հարցն էի տալիս՝ հասկանալու, թե ինչու է զբաղվում այս մասնագիտությամբ, մեզ բառացիորեն խանգարում էին տարբեր մարդիկ, որոնք,մեզ տեսնելով առանձին զրուցելիս, մոտենում և ողջունում էին Ինային: Առանձնահատուկ ուրախությամբ ծանոթ դեմքերին բարևում էր և նույն տեղից շարունակում զրույցը՝ խոսքում անընդհատ մեջբերելով այն հանգամանքը, որ եթե չլիներ մարդկանց հանդեպ հետաքրքրությունը, ինքն առհասարակ այլ գործով կզբաղվեր:

Չնայած որ հիմա ֆեյս քընթրողով զբաղվում է հազվադեպ, միայն մեծ իվենթների ժամանակ, որոշ աշխատանքային գծեր մնացել են բնավորության մեջ՝ ուշադիր զննությունը, խոսքին ուշադրություն դարձնելը և անընդհատ աչքերով խոսակցություններ որսալը և այլն: Ուզում եմ հավատալ, որ եթե ինձ հանդիպեր ակումբի դռան մոտ, կկարողանայի անցնել փորձությունը և գիշերս շարունակել երևանյան գիշերային գետի հոսանքի մեջ:

Շուշանիկ Փափազյան
Էլիզա Միհիթարյան

↓ Acid Pauli և Viken Arman

Գառնին՝ երեք անկյունից

Ինչպես մի մայիսյան երեկո Հայաստանի ամենահայտնի պատմամշակութային վայրերից մեկը՝ Գառնիի հեթանոսական տաճարը, վերածվեց աննախադեպ ռեյվի հրապարակի: Առաջին անգամ Հայաստանում անցկացվեց Cercle իվենթը, որի համար հնամյա տաճարի դիմաց իր վահանակով հայտնվեց գերմանացի Acid Pauli-ն:

77 թվականին կառուցված Հայաստանի միակ սյունավոր կառույցի գլխով շատ բաներ են անցել: Գառնին կառուցել է Տրդատ 1-ին թագավորը՝ ի երկրպագումն արևի աստված Միհրին: Կառուցել այնպես, որ նայի դեպի արևելք՝ դեպի ծագող արևը: Նրա ժառանգը՝ Տրդատ 3-րդը, մերժեց արևի պաշտամունքն ու քրիստոնեություն ընդունելով՝ տաճարը դարձրեց քրոջ՝ Խոսրովադուխտի ամառային ճամբար: Գառնին համակերպվեց, քանի որ գոնե չքանդեցին այլ մեհյանների պես: Անցան տարիներ, տաճարը կանգուն էր, բայց 1679-ին ավերիչ երկրաշարժը հիմնովին վնասեց կառույցը: Արևի պաշտամունքը չմոռացած հայերը մի քանի դար փորձում էին վերականգնել չքնաղ կառույցը, և միայն 1969-ին ճարտարապետական պատմաբան Ալեքսանդր Շահինյանը երկրորդ շունչ հաղորդեց մեհյանին: Ամբողջովին վերակառուցված ու ամրացված Գառնիի տաճարը բոլորովին վերջերս՝ 1975-ից, նոր կյանք ստացավ:

Ու այդ օրից ի վեր տաճարը Հայաստանում ոչ միայն տուրիստական առաջին չեքինն է, այլև տարբեր միջոցառումների անցկացման վայր: Հեթանոսական հարսանիքներից մինչև հագուստի ցուցադրություն, ֆիլմերի, կլիպերի նկարահանման վայրից մինչև փակ կորպորատիվ հավաքներ՝ ամեն ինչ տեսել են տաճարի քարերը: Բայց այն, ինչ տեղի ունեցավ 2019-ի մայիսին, եղավ անսպասելի ամենատես սյուների համար ու մտահոգիչ՝ ճարտարապետ Ալեքսանդր Շահինյանի գիտելիքները կասկածի տակ դնողների համար:

Գառնին ու վերջ

Երեք ընկեր 2016-ին որոշեցին իրենց հոբբին վերածել կենսակերպի: Ապրուստի միջոց դեռ չէր դառնա, բայց գոնե հետք կթողնեին իրենց քաղաքում: Լեոն, Տիգրանն ու Գևը նվագում էին էլեկտրոնային երաժշտություն, հիմնեցին Triangulum ընկերությունն ու հստակ որոշեցին փոխել հայերի երաժշտական ճաշակը, իսկ հետո նաև մրցել աշխարհահռչակ լեյբլների հետ: Հենց առաջին միջոցառումն այնքան լավ անցավ, որ տղաները հասկացան՝ ճիշտ ուղու վրա են: Աստիճանաբար սկսեցին ներգրավել այլ տեղացի արտիստների ու նվագել շատ տարբեր կետերում: Radisson Blu հյուրանոցի կտուրը, Motor Yerevan-ը, Էլ Չիլլաութը, Վիտամին ակումբը, հետո Ավանի լքված գործարանն ու նույնիսկ Ռայկոմի գլխարկների գործարանը վերածվեցին բեմի, որտեղ տարածվում էր նրանց մելոդիկ տեխնո հաուսը:

Տղաները մեքենայով շրջում էին քաղաքում, գտնում հին անգարներ, լքված գործարաններ ու կենդանության շունչ հաղորդում պատերին: Բայց մի օր, ինչպես սովորաբար լինում է, որոշեցին դուրս գալ սահմաններից: Նրանցից ամենահավակնոտը պնդեց, որ արդեն եկել է միջազգային լեյբլների հետ աշխատելու ժամանակը: Ընտրեցին Cercle մեդիահարթակը, քանի որ այն նույնպես անտարբեր չէր վայրի ընտրության հարցում:

Cercle-ն աշխարհով մեկ պատմամշակութային վայրեր է ընտրում և գրավում դրանք երաժշտությամբ (շատ կարևոր հավելում. այնտեղ հասկանում են, որ պատմական կառույցները յուրահատուկ խնամք են պահանջում, այնպես որ ձայնի բարձրությունը և ընդհանրապես կազմակերպումն այնպես է հաշվարկվում, որ որևէ վնաս չհասցվի): Հայաստանից եկած առաջարկը հետաքրքրեց նրանց ու եկան

էքսպեդիցիայի՝ տեսնելու՝ ինչ ունենք: Triangulum-ի տղաները բարեխղճորեն կազմել էին պատմամշակութային վայրերի ցանկ՝ Զվարթնոց տաճար, Սևանա վանք, Գյումրու Սև բերդ, նույնիսկ Կասկադն ու Համալիրն էին ներառել: Բայց երբ սկսուտը մտավ Գառնիի տարածք, քայլեց սալահատակով ու ի վերջո տեսավ տաճարը.... Դե, մենք՝ հայերս, արդեն այնքան ենք տեսել, որ նույնիսկ չենք պատկերացնում՝ ինչ է իրականում Գառնիի մեհյանը: Ու մենք չենք էլ հիշում՝ առաջին անգամ տաճարը տեսնելիս ինչ զգացողություններ են առաջացել: Իսկ սկսուտը դա կհիշի մեկընդմիշտ: Մի խոսքով, վայրն ընտրվեց աներկբա՝ Գառնին ու վերջ:

Ուժգին երկուշաբթի

Ու սկսվեց տղաների վեց ամիս տևած թղթաբանությունը տուրիզմի և մշակույթի նախարարությունների հետ: Ի զարմանս նրանց ու ընդհանրապես շատ շատերի՝ թույլտվություն տրվեց տաճարի տարածքում էլեկտրոնային երաժշտություն հնչեցնելու: 2019-ն ընդհանրապես որոշիչ տարի էր Հայաստանի էլեկտրոնային երաժշտության կյանքում: Ապրիլին Երևանում տեղի ունեցավ Boiler Room-ը՝ մի բան, որն անհնար էր պատկերացնել դեռ կես տարի առաջ: Հետո Մանկական երկաթուղում թնդաց Ուրվականը:

Ու մայիսին արդեն նշանակվեց Cercle Հայաստանի օրը: Ընտրվել էր երկուշաբթի, քանի որ հենց այդ օրն է համարվում ոչ աշխատանքային թանգարանների ու պատմամշակութային վայրերի համար: Տոմսերը վաճառվում էին Cercle-ի կայքի միջոցով: Ու երբ լրացավ 1,500-ը, սողը առաթ հայտարարվեց: Բաժանել էին ևս 500 հրավիրատոմս, իսկ 2,000-ն արդեն լուրջ թիվ էր:

Նրանց համար արտիստներին ընտրեց ու հրավիրեց Cercle-ը. բացումն արեց մեր հայրենակից Viken Arman-ը Ֆրանսիայից, իսկ գլխավոր սեթը նվագեց լեգենդար (հարցրեք էլեկտրոնայինից գլուխ հանողներին՝ կհաստատեն) Acid Pauli-ն: Փակումն էլ արեցին Triangulum-ի Լեոն ու Գուևոն:

Սկզբնական արարման իմաստը

Ու երկու ժամ անընդմեջ երկու հազար տարի ամեն ինչ տեսած Գառնիի տաճարը լցվեց էլեկտրոնային երաժշտությամբ: Այդպես աշխարհի լեգենդար կետերին՝ Մոնպառնասի ամրոց, Գրան Պալե ու Էյֆելյան աշտարակ, Ռիոյի լեռն ու Բրյուսելի Ատոմիումը, միացավ նաև մեր հարազատ տաճարը: Cercle-ի նախանձելի ցուցակում Հայաստանն առաջին երկիրն էր տարածաշրջանից. այնուհետ ընտրվել է Ուկրաինան՝ Կիևի օդանավակայանը: Տաճարի լուսավորությամբ առանձնապես չէին զբաղվել, Գառնին հավելյալ փաթեթավորման կարիք չուներ:

Cercle Հայաստանը տևեց մինչև գրեթե կեսգիշեր: Ներկաները գիտեին, որ նույնիսկ թանգարանային գիշերը վայրը մինչև 12-ն է բաց: Ու այդ երջանիկ 2,000 հոգին տեսան Գառնիի սկզբնական արարման իմաստը: Ճիշտ է, հետո եղան տարակուսանք ու աղաղակներ ու «սատանիստական» պիտակավորում, բայց դա այլ ու բավականին անիմաստ պատմություն է:

Հաջորդ օրը Triangulum-ի տղաների համար սկսվեց ամենադժվարը՝ թղթաբանությունից առավել: Նրանք գիտակցեցին, որ այնքան են բարձրացրել նշաձողը թե՛ Cercle-ով և թե՛ Գառնիի տաճարով, որ հիմա շատ բարդ կլինի շարունակել: Որոշել են՝ ինչ գնով էլ լինի՝ գտնել այլ կետ ու կրկնել Cercle Հայաստանը:

Էլեն Բաբայան
Բիայնա Մահարի

Եռացող կաթսայատունը

Ինչպես սիրիահայ Շանթը հայրենադարձվեց Երևան, բացեց ակումբներ, միացավ ակումբային կյանքի հեղափոխականների առաջին շարքերին, հետո կայմակերպեց լեգենդար Boiler Room-ի միակ հայաստանյան իվենթը, որին ներկա գտնվեցին միայն ամենանվիրյալ ռեյվերները (իսկ Շանթը շապերի պես վայելեց այն յութուբյան փարբերակով)։

Հոբբին հաղթեց

Սիրիայում պատերազմ սկսվելուց հետո դիջեյ Շանթը վերցրեց իր դիպլոմն ու ընտանիքի հետ եկավ Հայաստան։ Ինֆորմացիոն համակարգերի մենեջմենթի բարձր որակավորում ունեցող մասնագետին պատմական հայրենիքը դիմավորեց վերապահումով։ Երևանը, իհարկե, գրկաբաց ընդունեց նրան։ Բայց աշխատանքի փնտրտուքը հեշտ չէր։

Շանթը հանկարծակի պարզեց, որ առավելագույն աշխատավարձը չի գերազանցում չորս հարյուր դոլարը, իսկ դա անհարգալից էր ստացած կրթության նկատմամբ։ Ու առաջացավ խիստ կենսական հարց՝ մնալ հայրենիքո՞ւմ, թե՞ տեղափոխվել աշխարհի այլ կետ։ Ու քանի դեռ որոշում չէր ընդունել, Սիրիայի հոբբին հիշեցրեց իր մասին ու նա սկսեց ծանոթանալ Երևանի գիշերային երաժշտական կյանքին։ Վերհիշեց իր դիջեյական պուլտն ու սկսեց նվագել հնարավոր բոլոր ակումբներում ու փաբերում։ «Սկզբում ստանում էի հինգ հազար դրամ, հետո վեց հազար, յոթ հազար... աստիճանաբար բարձրացավ հոնորարս։ Իմ նվագածը տարբերվում էր, երևի դա էլ հենց գնահատվեց։ Բեքգրաունդս այլ էր, այստեղ սիրում էին դիփ հաուս, իսկ ես այլ պարային մյուզիք բերեցի»,– պատմում է Շանթը։

Երկու տարի անց որոշեց հիմնել սեփական ակումբը։ Նվագելու հրավիրում էր լոկալ դիջեյների, որոնք իր պես փորձում էին փոխել քաղաքի երաժշտական նախասիրությունները։ «Պապարացին» սկզբում հանրապետության հրապարակում էր, հետո տեղափոխվեց Աբովյան փողոց՝ երևանցիներին լավ ծանոթ նախկին «ԷլենԱլենի» շենք։ Գրեթե միաժամանակ ստեղծվեց երկրորդ ակումբը՝ «Բեյսմենթը», որն առավել փոքր, ընտրյալ զանգվածների համար էր։ Եռահարկ շենքի վերևի հարկում էլ «Վերև» սրճարանն էր։

Բիզնես նախագիծն ամենայն մանրամասնությամբ գծած մենեջերն անցավ գործի ու սկսեց հեղափոխել Երևանի գիշերային կյանքը։ «2012-2014 թվականներին չկար այս ազատությունը, չկար ակումբ գնալու ու երաժշտություն լսելու մշակույթը։ 2015-ի «Էլեկտրիկ Երևանի» ակցիաների ֆոնին ինձ անվանեցին Երևանի գիշերային կյանքում հեղափոխություն անող դիջեյ։ Եվ դա մինչ օրս եղել է մեծագույն գնահատականներից մեկը»,– կարծում է Շանթը։



Երեք վավակ

Հիմա Շանթն ամեն ինչ գիտի գիշերվա քունը կորցրածների մասին: Ակումբ այցելողներին դեմքով է ճանաչում, նորեկների հայացքից հասկանում՝ ով կվերադառնա, ում է տեսնում առաջին ու վերջին անգամ: «Վեց տարի քլաբ պահելը հեշտ գործ չէ, ակամայից հոգեբան ես դառնում: Շատ են եղել իվենթներ, երբ ես եմ եղել ֆեյս քընթրոլ, որպեսզի հավելյալ խնդիրներ չառաջանան»,– ասում է նա ու շեշտում, որ ակումբի կյանքում դիջեյից ոչ պակաս կարևոր է անվտանգության աշխատակցի դերը:

Իր ստեղծած երեք նախագծերն ունեն հստակ դերաբաշխում՝ «Վերևը» երեսառած աղջիկն է, այստեղ գալիս են գեղեցիկ զգեստներով, խմում համեղ կոկտեյլներ: «Պապարացին» հավատարիմ զավակն է, ֆինանսական բոլոր խնդիրներն օգնում է լուծել: Իսկ «Բեյսմենթն» անառակ որդին է, որի հիմնադրման օրից երբեք շահ չի ունեցել, շատ անգամ ծախսերը փակել է այլ եկամուտներով, բայց համառորեն շարունակել է պահել նախագիծը. «Ես «Բեյսմենթի» միջոցով մշակույթ էի զարգացնում, անդադար, անընդհատ: Ձևավորում էի ապագայի նայթ լայֆի կուլտուրան ու հավատում, որ կստեղծվի այն զանգվածը, որն ակումբ կգա երաժշտության հետևից, կիմանա տենդենցները, նախընտրած ուղղությունն ու ի վերջո՝ դիջեյներին»:

Եռում ենք բոլորս

Ու մի օր էլ Հայաստանում Բրիտանական գրասենյակը որոշեց իրար գլխի հավաքել լոկալ արտիստներին, հնչյունային ինժեներներին ու վերապատրաստել նրանց: Անգլիական հայտնի Boiler Room հարթակից («կաթսայատուն», բառացի թարգմանությամբ՝ «եռացող սենյակ») մասնագետներ եկան, ծանոթացան մեր պոտենցիալի հետ ու ծրագրի ավարտին անսպասելիորեն որոշեցին Շանթի անառակ որդի «Բեյսմենթում» անվճար եռման երեկո անել՝ մաքուր սոցիալական ուղղվածությամբ մի իվենթ:

Հայաստանում առաջին ու դեռևս միակ Բոյլեռումն իրականացնելու համար ունեին ընդամենը մեկ շաբաթ ու Բեյսմենթի յոթ հոգանոց թիմ: Բայց փոքր քաղաքում նման կարևոր միջոցառումը չէր կարող գաղտնի մնալ, ու վերջին երկու օրն այնքան մեծ էր հետաքրքրվածների քանակը, որ Շանթն առաջարկեց վերցնել մեծ տարածք՝ Տերյան փողոցում: Անցան պլան Բ-ի:

Կազմվեց քառասուն հոգուց բաղկացած լոկալ դիջեյների ցանկ, որից Boiler Room-ի Էմ-սի Միքայելն ընտրություն կատարեց: Ու 2019-ի ապրիլյան մի երեկո Հայաստանը միացավ համաշխարհային «կաթսայատանը»: Հազարից ավելի մարդ եկավ ու վայելեց էլեկտրոնային երաժշտություն: «Ինչ մթնոլորտ էր ներսում» հարցին ի պատասխան Շանթը ժպտում է. «Այդ օրը ես ֆեյս քընթրոլ էի, քանի որ ինձնից լավ ոչ ոք չգիտեր մեր քաղաքի գիշերային մարդկանց: Ես ոչ ոքի չէի կարող վստահել այդ գործը, ու փաստացի մեր միակ Boiler Room-ը ես շատ-շատերի նման տեսել եմ Յութուբով»: Այս Boiler Room-ը չէր ներկայացնում Բեյսմենթը կամ Պապարացին, այն փաստացի Հայաստանի այցեքարտն էր էլեկտրոնային երաժշտության աշխարհ:

Երևանցիների մասին

Էմ-սի Միքայելը հետո հարցազրույցներում ասել էր, որ Երևանում ստացել են ամենահաջող Boiler-ներից մեկը, մարդիկ անկաշկանդ էին ու անկեղծորեն վայելում էին երաժշտությունը: Փաստացի հիմքեր կան ստանալու էլեկտրոնային երաժշտության համաշխարհային կետերից մեկը: Ինքը՝ Շանթը, այդքան լիահույս չէ, մեկանգամյա իվենթներով բարդ է պահել ստատուսը. «Շարունակականություն չկա, փառատոները քիչ են, կախումը հովանավորներից ահռելի է»:

Ակումբային կյանքում հեղափոխություն արած Շանթը դեռևս գոհ չէ արդյունքներից: Սակայն տասը տարի առաջ Սիրիայից հայրենիք եկած երիտասարդը հանձնվել չգիտի: Ու նրա երազանքներն իրականանալու հատկություն ունեն:

Էլեն Բաբայան
Շանթ Գոչեանի արխիվ

Իդրամ. տեխնո ժամանցի տեխնո աջակիցը

Վերջին ժամանակներին բնորոշ մի շատ սովորական երևույթ. ցանկացած ժամանցային միջոցառման ժամանակ, անկախ մեզնից, հայացքով փնտրում ենք Իդրամով վճարելու մասին հուշող սթիքերը կամ Իդրամի շապիկով աշխատակցին: Մեկ ուրիշը, մեր եկող ամսվա ժամանցային օրացույցն էլ կազմում ենք ըստ Իդրամ հավելվածի «Տոմսեր» բաժնի: Այսպես, էլեկտրոնային վճարման հավելվածն աջակցում է էլեկտրոնային երաժշտությանը Հայաստանում: Ընկերության մարքեթինգի բաժնի ղեկավար Գոռ Ամիրյանը, առևտրային մարքեթինգի ենթաբաժնի ղեկավար Նանե Ավետյանը և ԲԹԼ ու միջոցառումների թիմի ղեկավար Էլեն Փանոսյանը Motor Yerevan-ում Կոնոբայի իվենթի ժամանակ ԵՐԵՎԱՆԻՆ պատմել են իրենց աշխատանքի հետնաբեմից:



ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍԻՆ

Գոռ. Երկու տարի առաջ Իդրամ ընկերությունը ռեբրենդինգ եղավ ու բազմաթիվ ուղղություններից զատ նաև որոշեց ուշադրություն դարձնել ժամանցային ոլորտին: Ընկերության համար առաջնային են մարդիկ, նրանց ամենօրյա վճարումների հարմարավետությունն ու արագությունը: Ժամանցային ոլորտում ներգրավվելով՝ մենք կարողացանք նաև երիտասարդությանը ներկայացնել Իդրամի միջոցով վճարումներ կատարելու առավելությունները: Բացի այդ, ինչը պակաս կարևոր չէ, կարողացանք աջակցել նաև միջոցառումների կազմակերպիչներին՝ առաջարկելով վճարումները ստանալու ավելի հարմարավետ՝ անհպում տարբերակներ և մի նոր գործիք, որը հնարավորություն է տալիս միջոցառման տոմսերը վաճառել անմիջապես հավելվածում՝ հայտնվելով ամսեկան 350 000-ից ավելի ակտիվ օգտատերերի միջև:

Նանե. Այսօր շատերը, երբ տեղյակ չեն քաղաքային միջոցառումներից, անցնում են Իդրամի տոմսերի բաժինը և այդտեղից որոշում, թե ուր գնալ: Լինում են դեպքեր, որ միջոցառումը դեռ հավելվածում տեղադրված չէ, բայց զանգերի կենտրոնը պայթում է. բոլորը նույն հարցն են տալիս՝ ե՞րբ այս կամ այն միջոցառման տոմսերը կհայտնվեն ձեզ մոտ:

Գոռ. Ամենաթարմ օրինակը Բորիս Բրեիխայի համերգն էր, որը հետաձգվեց, քանի որ արտիստը քովիդով հիվանդացավ և չեղարկեց իր համերգները մի քանի քաղաքներում: Կազմակերպչի էջում պարզապես հրապարակվել էր, որ Բորիս Բրեիխան գալիս է Հայաստան և այդ պահից սկսած մենք անընդհատ զանգեր էինք ստանում: Նույնիսկ դեռ չէինք որոշել՝ միանո՞ւմ ենք այդ միջոցառմանը, թե ոչ: Երբ արդեն պաշտոնապես միացանք, առաջին երկու օրվա ընթացքում շուրջ հազարից ավել տոմս վաճառվեց:

ԹԻՄԻ ՍԱՀՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նանե. Իդրամի թիմին իմ միանալու նույն օրը սկսվեց Silk Note փառատոնը, որին զուգահեռ անցկացվում էր նաև Օլիվեր Կոլեցկիի միջոցառումը: Պատկերացրեք ծավալը՝ մի քանի ընկերության թիմեր, երկու անցկացման վայր, շուրջ երեք օր անընդմեջ աշխատանք: Գժական վիճակ էր, բայց հաջողեցինք մեծապես հենց այդ սահուն աշխատանքի շնորհիվ:

Էլեն. Մեկ այլ մեծ միջոցառում էր Երևանի Գինու օրերը, որին զուգահեռ ընթանում էր նաև Alteration էլեկտրոնային երաժշտության փառատոնը և Polocorp-ի միջոցառումը: Այդպես թիմերով վազում էինք մի միջոցառումից մյուսը: Չնայած որ ես ու Նանեն թիմերի ղեկավարներն ենք, բայց բոլորի հետ հավասար աշխատել ենք, որպեսզի ամեն բան լավ ստացվի: Կամ, օրինակ՝ Ռիկարդո Վիյալոբոսի համերգին գիշերվա 11-ից առավոտվա 9-ը մեր թիմի հետ բարերի մոտ կանգնած հավասար աշխատել ենք:

Գոռ. Ի դեպ, գուցե վերջերս նկատած կլինեք, որ շատ են հենց էլեկտրոնային երաժշտության միջոցառումները: Սա մի ուղղություն է, որը ցանկանում ենք զարգացնել Հայաստանում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ բացի նրանից, որ մեր երիտասարդությունը ծանոթանում է արտասահմանյան արտիստներին և զարգացնում ճաշակը, նաև, հատկապես վերջին միջոցառումներին, բազմաթիվ զբոսաշրջիկներ են գալիս Հայաստան նույն Վրաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Ուկրաինայից, Գերմանիայից: Սա մի լավ մշակույթ է, որին Իդրամը ցանկություն ունի աջակցել ոչ միայն վճարման լուծումներ առաջարկելով, այլ ներդրում կատարելով:



ԻԴՐԱՄԸ ՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էլեն. Բնականաբար մարդկանց համար Իդրամը մեծ նորություն էր: Փաստացի վերանում են քեշ ու քարտ հասկացությունները: Սկզբում հաճախորդները զարմացած մոտենում էին մեր աշխատակիցներին, ովքեր իրենց օգնում էին և բացատրում: Բայց արդեն հաջորդ միջոցառմանը մարդիկ տեսնում էին Իդրամի շապիկով աշխատակցին և ուրախանում էին՝ հարցնում էին՝ այստեղ cash-back ունեք, չէ՞, կամ այս կամ այն համերգի տոմսերը երբ կունենաք, երբ կլինի ձեր հաջորդ ակցիան:

Նանե. Հերթերում կանգնած արդեն Իդրամից տեղյակ հաճախորդներն իրենք էին սկսում նորեկներին պատմել ու բացատրել, թե Իդրամն ինչպես է աշխատում: Արդեն շուրջ երկու տարի է այս թիմի հետ եմ և նկատել եմ, թե ինչ է փոխվել մարդկանց վերաբերմունքն Իդրամով վճարումներ կատարելու նկատմամբ: Առաջ «վաճառում» էինք Իդրամը հաճախորդներին և կազմակերպիչներին, այսօր իրենք են մեզ փնտրում:

Գոռ. Գիտեք, մենք մի կարգախոս ունենք՝ Idram we trust, և մեր կողմից սպասարկվող բոլոր միջոցառումների մարքեթինգային նյութերի վրա նշվում է՝ Trusted by Idram՝ «Իդրամը վստահում է»: Հպարտությամբ կարող եմ ասել, որ սա դարձել է որակի որոշակի չափանիշ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՆՔՈՒՆ ԳԻՇԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Էլեն. Մինչ հաճախորդների գալը մեծ կազմակերպչական աշխատանքներ են տարվում միջոցառման վայրում: Մինչև դուք գալիս եք խմել-պարել-ուրախանալու, մենք հասցնում ենք հոգնել, բայց երբ հաճախորդները գալիս են և սկսում են ուրախանալ, դա մեզ ուժեղ դրայվ է տալիս թե՛ ուրախանալու, թե՛ աշխատելու համար:

Նանե. Իրականում նախապատրաստական աշխատանքները մեկնարկում են միջոցառումից առնվազն մեկ ամիս առաջ: Սկզբում տեղադրում ենք տոմսերը մեր հավելվածում: Հետագա քայլերը մեծապես կախված են միջոցառման անցկացման վայրից և կազմակերպիչների ցանկություններից: Alteration փառատոնը մեր առաջին փորձն էր բացառապես առանց քեշ վճարումներ ընդունելու, քանի որ կազմակերպիչները որոշել էին ընդհանրապես հրաժարվել թղթադրամից:

Էլեն. Միջոցառումից առնվազն երկու շաբաթ առաջ սկսում ենք մտածել տեղում կատարվելիք տեխնիկական կարգավորումների մասին գործընկեր կազմակերպությունների հետ միասին: Վերջնական նպատակն Իդրամով վճարելու փորձառությունն է: Մեզ պետք է, որ հաճախորդը վերջում պարզապես գա և սկանավորելով QR կոդը՝ կատարի իր գնումը և շարունակի ուրախանալ: Հենց միջոցառման օրը գրեթե առավոտից լինում ենք միջոցառման վայրում, որ բոլոր հնարավոր հարցերը լուծենք: Գանձապահներին, մուտքի մոտ տոմս վաճառող աշխատակիցներին օգնում ենք գլուխ հանել համակարգից, ստուգում ենք տեխնիկական հարցերը:

Գոռ. Օրինակ՝ հենց այս պահին մենք նստած այս սենյակում զրուցում ենք, իսկ սրահում Իդրամի և գործընկեր կազմակերպությունների երեսունից ավելի աշխատակիցներ անում են ամեն բան, որպեսզի ընթացքը սահուն լինի: Այդ թվում՝ մեր SMM մենեջերը, լուսանկարիչները, դիզայներները, կոմերցիոն և տեխնիկական թիմը: Մենք այստեղ ենք մինչև վերջին հաճախորդ: Շունչ կքաշենք, երբ բոլորից հետո դուռը փակենք:

Մարգարիտ Միրզոյան
Հարություն Մալխասյան

Ռեյվի պալատ

Ինչ բարդություններ են բախվում Երևանում փեխնո ակումբ բացողները, ինչու չի կարելի ներս թողնել ամեն յանկացողին և ինչու է կարևոր սովորեցնել նոր երաժիշտներին. ԵՐԵՎԱՆՂ եղել է «Պոլիգրաֆ» ակումբում ու լրուցել համահիմնադիր ու ստեղծագործական տնօրեն Դավիթ Սուքիասյանի հետ:

Անհիշելի ժամանակներում, երբ Երևանում բոլորովին այլ երաժշտություն էր հնչում, Կորյունի փողոցի մի հատվածը՝ Լենինի պողոտայի ու Տերյանի փողոցի միջև, զարդարված էր մի չքնաղ սյունաշարով: Այն միացնում էր Գրքի պալատի (հետագայում ավելի հայտնի որպես Տպարանի շենք) երկու թևերը: Որոշ ժամանակ անց, սակայն, սյունաշարը քանդվեց, տեղում կառուցվեց մի բավական անշուք բարձրահարկ շենք, իսկ Գրքի պալատի երկու թևերը դարձան առանձին կառույցներ, մեկը Տերյանում, մյուսը՝ Գևորգ Քոչարում: Այժմ դժվար է ենթադրել, որ դրանք մի ընտանիքից են եղել: Նույնքան դժվար է պատկերացնել ապակեպատ բարձրահարկի տեղում բարձր, խոյակներով զարդարված սյուները: Թեպետ... սյուներից մեկը պատահմամբ մնացել է մինչ օրս: Այն միայնակ ու տխուր կանգնած է Քոչարի կողմում մնացած շենքի պատին կցված՝ անօգնական ու անգործ: Հենց այդ սյան կողմից էլ կարելի է նկատել մի համեստ քառակուսի ցուցանակ, որի վրա պարզապես գրված է՝ Poligraf: Բայց սա ոչ թե պոլիգրաֆական ծառայությունների գովազդ է, այլ Երևանի ամենամեծ համբավ ունեցող գիշերային ակումբներից մեկի մուտքը:

Հինգ ընկեր՝ Դավիթը, Գոռը, Արթուրը, Արամայիսը և Լևոնը, երեք տարի առաջ բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, լիքը վարկեր վերցնելով՝ ստեղծեցին իրենց երազանքների ակումբը: Քանի որ այդ երազանքը շատերին էր հոգեհարազատ, նրանց միացան ուրիշներ ևս՝ հիմնադիր արտիստները, չէ՞ որ ցանկացած ակումբի դեմքն այնտեղ նվազող մարդիկ են:

Ստեղծագործական տնօրեն Դավիթը հիմա ժպիտով հիշում է, որ սկզբում բարդ էր. «Կար շրջան, երբ քաղաքում շատ քիչ արտիստներ էին կիսում մեր մոտեցումները, բայց հիմա պատկերը փոխվել է»: Մոտեցումների առումով, ի դեպ, «Պոլիգրաֆը» շատ սկզբունքային է: Այստեղ երեկոյի կենտրոնում արտիստն է, ամեն ինչ կառուցված է հենց նրա շուրջ և այստեղ հնչում է բացառապես տեխնո և հաուս երաժշտություն՝ իր տարբեր դրսևորումներով:

Դավթի հետ հանդիպում ենք ակումբի համար տարօրինակ ժամի՝ ցերեկը, երբ ռեյվերները դեռ զբաղված են իրենց առօրյա խնդիրներով և Պոլիգրաֆն իր բուն գործին կանցնի ժամեր անց:

Ակայ ու անվկանգ ռեյվ

Մի քանի ժամից մուտքի մոտ կհավաքվեն լավ էլեկտրոնային երաժշտություն լսել ցանկացողները: Ներս կմտնեն ոչ բոլորը. տարիների ընթացքում Պոլիգրաֆում վերջապես կարողացան հասնել նրան, որ այցելուները հարգանքով վերաբերվեն դորմենին (այստեղ նախընտրում են այդ եզրը, ոչ թե բացասական երանգներ ունեցող ֆեյս քընթրոլը). «Խնդիրը ֆեյսերի մեջ չի, խնդիրը ով լինելու ու քուլ լինելու մեջ չի, խնդիրը հարգանքի մեջ է, «Պոլիգրաֆ» այցելելիս կարևոր է հասկանալ, որ դորմենն անում է ամեն բան, որպեսզի մարդիկ կարողանան իրենց լիարժեք ազատ զգալ ներսում, կարողանան լինել կիսամերկ, հագնվել ինչպես ուզում են, շարժվել ինչպես ուզում են և որ ոչ մեկ ուշադրությունը չկենտրոնացնի մեկ ուրիշի վրա, չկաշկանդի մյուսին,– բացատրում է Դավիթը,

որը դեռ հիշում է այն տպերին, որոնք տարիներ շարունակ խցկվում էին բոլոր ակումբներն ու իրենց լպիրշ պահվածքով փչացնում մթնոլորտը։ – Մենք անում ենք այնպես, որպեսզի յուրաքանչյուրը յուրովի կարողանա վայելել միջավայրը, որպեսզի ոչ մեկը չսահմանափակի մյուսի ազատությունը»։ Ահա թե ինչու այստեղ արգելված է լուսանկարահանումն ու տեսանկարահանումը, իսկ ծխելը թույլատրվում է միայն հատուկ տարածքներում՝ պարահրապարակում չի կարելի սահմանափակել մարդկանց՝ մաքուր օդ շնչելու իրավունքը։

Այս ցավոտ թեմային անդրադառնալիս Դավիթը հպարտությամբ նշում է, որ երեք տարիների ընթացքում «Պոլիգրաֆում» դեռ երբեք ոչ մի կռիվ ու ծեծկռտուք չի եղել։

Դժվարությունների մասին

Մուտքի խնդիրը, իհարկե, միակը չէր։ Դե, հասկանալի է, նոր ակումբ, նոր միջավայր ու ձևաչափ, ուրիշ էլ ինչպես պիտի լիներ։ Նախ խնդրահարույց էր այն, որ այցելուներից շատերը հրաժարվում էին վճարել տեղական արտիստներից կազմված լայնափի համար։ Ոմանք նույնիսկ սովորել էին առանց վճարելու սողոսկել ակումբ։

Հիմա արդեն բոլորը գիտեն, որ եթե չկաս հյուրերի ցուցակում, որն ի դեպ շատ փոքր է, ապա պիտի վճարես։ Հաճախ խնդիրներից է նաև բոդիչեքը, այցելուներից շատերը, հատկապես աղջիկները հաճախ վրդովվում են, երբ ստիպված են լինում ցույց տալ պայուսակի պարունակությունը։ Բարեբախտաբար, սա ևս արդեն սովորական է դառնում։ Բայց սա դեռ ամենը չէ։ Նույնիսկ անձնակազմ հավաքելը սկզբնական շրջանում մեծ խնդիր էր։ Դե օրինակ՝ ակումբի լուսային միջավայրն ապահովելու համար պրոֆեսիոնալ և ռեյվային փորձառության սիրահար պրոֆեսիոնալի գտնելը գրեթե անհնար էր թվում։ Մյուս կողմից՝ միջազգային փորձն ուսումնասիրելով՝ տղաները հստակ գիտեին, թե ինչ աշխատակիցներ են հարկավոր նման ակումբներին, սակայն նրանց գործառույթը, ինչպես օրինակ սթեյջ մենեջերինը, դենսֆլոր մենեջերինը, ամբողջությամբ չէին պատկերացնում։ Դավիթը խոստովանում է, որ նման հարցերում իրենց մեծապես օգնել են դրսի հետ կապերը և հատկապես ընկերները Բեռլինից։

Մի բուռ ռեյվմոլ

Դավիթն ուրախությամբ է նշում, որ այսօր Հայաստանում 2000-ից ավելի ռեյվի սիրահար կա, ովքեր արդեն իսկ ձևավորել են յուրատեսակ մշակութային համայնք։ Իհարկե, միշտ լինում են նորեկներ։ Շատերին կարելի է տեսնել «Պոլիգրաֆում», ոմանք գրեթե ոչ մի միջոցառում բաց չեն թողնում, ոմանք հայտնվում են երբեմն, իսկ ոմանք էլ ակտիվ ռեյվային շաբաթներից հետո երկար ընդմիջումներ են վերցնում։

Դավիթը խոստովանում է, որ գիշերային կյանքը կարող է բարդ լինել թե ֆիզիկապես և թե աշխատանքի ու կանոնավոր կյանքի հետ համատեղելու տեսանկյունից։ Որպես կանոն՝ քչերին է հաջողվում ճիշտ զուգակցել։ Այս առումով Դավիթի համար օրինակելի է Լևոնը, որը պլաստիկ վիրաբույժ է ու զարմանալիորեն կարողանում է ճիշտ չափով ռեյվել ու առավոտյան, հաջողությամբ անցկացնել վիրահատությունը։

Դիզեյինգի դպրոցը

Բայց մի բան է օգտվել դաշտի տված բարիքներից, բոլորովին այլ՝ սեփական ուժերով ծաղկեցնել այն։ Պոլիգրաֆում, օրինակ, նորեկ դիջեյների համար մի ամբողջ դպրոց կա։ «Ակումբը բացվեց 2019-ի ապրիլին, արդեն սեպտեմբերին կար դիջեյինգի դպրոց հիմնելու գաղափարը,– հիշում է Դավիթը։– Ես և ընկերս՝ Դավիթը, որը «Պոլիգրաֆի» ռեզիդենտ արտիստներից է ու ակումբային գիշերների ծրագրերի պատասխանատուն, որոշեցինք դեռ չհայտարարել դպրոցի բացման մասին, բայց սկսել աշխատանքներն ու ունենալ երկու աշակերտ»։ Ինչ խոսք, ես էլ չգիտեի, որ ակումբներում լինում են ռեզիդենտ արտիստներ, դրանք այն երաժիշտներն են, ովքեր կարող են նվազել տարբեր տեղեր, բայց ավելի սերտ հարաբերություններ ունեն մեկի հետ։

Ինչպես «Պոլիգրաֆը», այնպես և դպրոցն ընդունել է Նյու-Յորքի, Չիկագոյի ու Դետրոյտի դիջեյինգի փորձն իբրև հիմք ու տալիս է հիմնային գիտելիքներ բոլոր նրանց, ովքեր ունեն ցանկություն կայանալու այս ոլորտում՝ անկախ երաժշտական կրթությունից։ Դիգգինգ, սելեքթինգ և միքսինգ, ահա այն երեք հիմնասյուները, որ սովորեցնում է դպրոցը։ Երկու ամիս՝ 16 դաս անցած նորաթուխ դիջեյներին հնարավորություն է տրվում ընտրել դասավարի, ում հետ աշխատանքից հետո «Պոլիգրաֆի» բեմը մեկ գիշեր լինում է արդեն շատ առումներով հմտացած այդ դիջեյներին։ Սա չափազանց արդյունավետ փորձառություն է։ Եվ որ ամենակարևորն է, այս նորեկները հետաքրքիր են ոչ միայն պոլիգրաֆցիներին. ակումբում հաճախ են լինում քաղաքի բոլոր այն փրոմոթերները, ովքեր փնտրում են նոր արտիստների։

Մի խոսքով, Դավիթը լավատես է, վստահ է, որ հայերն ունեն ներուժ աշխարհին ներկայանալու որպես ստեղծարար ազգ. «Ու խոսքը միայն ռեյվի կամ տեխնոյի մասին չի, խոսքն առհասարակ երաժշտության մասին է։ Մենք դրանով պիտի տեսանելի լինենք աշխարհին»,– վստահ ասում է Դավիթը։

Ես չեմ վիճում ու հեռանում եմ նախկին Գրքի պալատից. Դավիթն ու գործընկերները դեռ ահագին բան ունեն անելու երեկոյան գիգին պատրաստվելու համար։ Գուցե վերադառնամ արդեն որպես նորելուկ ռեյվեր (ու աղոթեմ, որ դորմենն իմ մեջ չտեսնի երեկոն հարամ անելու վտանգ)։

Հասմիկ Բարխուդարյան
«Պոլիգրաֆի» արխիվից

Kitchen-ի ներքին խոհանոցը



Kitchen Recordings լեյբլը հիմնադրվել է 2015 թվականին և այս տարիներին հասցրել է Երևանից դուրս գալ միջազգային ասպարեզ: Մինչ այժմ այն թողարկել է 50-ից ավելի արտիստների 121 ռելիզ: Երաժիշտներն ամբողջ աշխարհից են, իսկ ժանրերը՝ պրոգրեսիվ հաուսից մինչև օրգանիկ հաուս և մելոդիկ տեխնո: Լեյբլի հիմնադիրների հետ փորձում ենք պարզել Kitchen-ի ներքին խոհանոցը:

Երկու տարի առաջ ծանոթացա Վարդանի (Dale) հետ, որի մտքի ծայրով անգամ չէր անցնում, որ ինքը դառնալու է իմ անվերջ հարցուպատասխանների միակ աղբյուրը: Նստում էինք, պատմում էր 90-ականների քլաբբինգից, թվարկում էր անուններ ու քլաբեր, որ մնացել են մենակ իր հիշողություններում: Էս անգամ մեր մշտական զրույցներին միացան նաև Լևոնն (Leon Gris) ու Մանուկը (Deep Danny) ու փորձեցինք վերհիշել կյանքը Kitchen Recordings-ից առաջ ու հետո:

↙ Վարդան Բաբայանը (DJ Dale), Մանուկ Մանուկյանը (Deep Danny) և Լևոն Դավթյանը (Leon Gris)

→ Դավիթ Սահակյանն ու Kitchen-ի ռելիկների նկարաշարադրումները

Բոլորն ազատ են

— Հիշում ե՞ս՝ Rozalla-ն երգ ուներ՝ Everybody is free,– Վարդանը միացնում է 93 թվականի ուրախ պարային հիթը, մի երկու վայրկյան ժպտում (հավանաբար հիշելով սեփական 90-ականները) ու շարունակում,– էդ երգը շատ էր տպավորվել, ինձ թվում ա՝ առաջիններից էր, որ արդեն պատանեկան տարիքում կասետի տեսքով ձեռք բերեցի: Դե դրանից առաջ պապայի վինիլների ու կասետների հաշվին էի ապրում, բայց մեջն ընդամենը երկու հատ էլեկտրոնային կար՝ ֆրանսիական Space-ն ու սովետական Zodiac-ը:

Հայրական վինիլներից հետո արդեն Երևանի առաջին ակումբներն էին՝ «Նոստալջին», «Կասկադը», «Ջելյոնին», «Ռելաքսը», «Դվինը», «Տորնադոն», «Նկուղն» ու դրանցում ձևավորված դիջեյների, արտիստների ու պարզապես տժժացողների ամուր ընտանիքը: Այնտեղ բոլորն ազատ էին ճիշտ Ռոզալլայի երգի պես:

Վարդանն առաջին անգամ էդ ընտանիք մտավ իր ընկեր Արտյոմի միջոցով, որն ապագա Դեյլին ծանոթացրեց «Նոստալջիի» Հարութի (նույն ինքը՝ DJ Չիպ) հետ ու պայմանավորվեց, որ էնտեղ նվագել սովորի: Սովորելը եղավ, հետո եղավ նաև նույն ակումբում նվագելը:

— Հիշում եմ՝ առաջին անգամ ոնց նվագեցի,– ասում է Հայաստանի ամենափորձառու դիջեյներից մեկը,– Հարութն էդ օրը հատուկ չեկավ գործի, որ ես ինքնուրույն կառավարեմ ու ինձ ավելի վստահ զգամ:

Ակումբային ծանոթություններ

Ինչպես լիքը ուրիշ բաներ Դեյլի կյանքում, այս կարևոր ծանոթություններն էլ տեղի են ունեցել ակումբում: Ավելի ստույգ՝ «Կամիում»:

— Փլեյի հետ նստած էինք, խառը խոսում էինք, Մանուկը եկավ, պատմեց, որ մյուզիք ա գրում ու նվագում, ծանոթացանք ու էդ օրվանից ընկերացանք: Իսկ Լևոնի հետ՝ էլի «Կամիում», ծանոթացրեց արդեն Միտոյան Արմանը («Կամիի» հիմնադիրը) ու ասեց՝ «կարգին տղա ա, շատերի նման բառադի չի»: Ճիշտ էր ասում:

Վարդանի պատմածներից միշտ մտածել եմ, որ 90-ականների քլաբերում ինչ-որ առանձնահատուկ ջերմություն կար, մի քիչ ուրիշ ձև էին ընկերություն անում, ուրիշ ձև էին երաժշտություն լսում: Կամ ուղղակի լավ ա պատմում, չգիտեմ... Նաև ինտերնետ չկար, իսկ դա արդեն հսկայական տարբերություն է մեր օրերի հետ: Հիմա դժվար էլ է պատկերացնել՝ մարդիկ եսիմորտեղից պեղած CD-ները, վինիլները հավա-

← Լեյբլի ռելիկները թողարկվում են հատուկ պատրաստված վիրուալներով

քում, միասին լսում էին, կամ իրար փոխանցում: Իսկ լսարանն ուներ իր սիրած երգերը, մարդիկ գալիս սպասում էին, թե երբ են դիջեյները հենց էդ երգը միացնելու, որ պարեն:
2007 թվականին Դեյլը Փլեյի հետ հիմնեց Հայաստանի DJ-ների ասոցացիան, որը զբաղվում էր կրթական և սոցիալական գործունեությամբ, ինչպես նաև DJ-ներ պատրաստելով, որտեղ դասավանդում էին DJ Էքստրիմն ու Դեյլը: Մի խոսքով, մոտավորապես էսպես էլ սկսվեց ու հետագայում դարձավ նաև կենսակերպ՝ երաժշտության ու քլաբինգի ճանապարհը:
Արդեն 2012 թվականին Լևոնն ու Մանուկը ձևավորեցին SUPACOOKS դուռն: Սուպեր խոհարարների (եթե շատ բառացի թարգմանենք անվանումը) երաժշտությունը ձգվում է պրոգրեսիվ հաուսից ու դիփ հաուսից մինչև մելոդիկ տեխնո: Եվս երեք տարի անց պարզ դարձավ, որ հասունացել է նոր կարևոր քայլ: Եվ այդ քայլը սեփական լեյբլի ստեղծումն էր: Այդպես ծնվեց Kitchen Recordings-ը, որի գործունեության երկրորդ տարում թիմին որպես իվենթ մենեջեր միացավ նաև Վարդանը (Մանուկն իր հերթին զբաղվում է արտիստների ու ռեպերտուարի մենեջմենթով, Լևոնը լեյբլ մենեջերն է):

↓ «Պատի հենքը» իվենթների շարքը Kitchen-ի այցեքարտերիկ մեկն է



Լեյբլի կարևորությունը բոլորի համար

Kitchen-ի հիմնադիրները վստահ են, որ երկրի տնտեսական և մշակութային կյանքը բարելավելու, ինչպես նաև զարգացնելու և ուշադրություն սևեռելու գործիքներից մեկն էլեկտրոնային երաժշտությունն է: Իսկ այդ ոլորտում մրցունակ լինելու, ճանաչվելու և որպես մշակութային երկիր ձևակերպվելու համար անհրաժեշտ է ունենալ նաև մրցունակ լեյբլ, որը կգեներացնի, կստեղծի, կհոլի մրցունակ արտիստների:
Լևոնը պատմում է, որ աշխատանքային վազքի մեջ երբեմն դժվար է հասկանալ ու տեսնել աշխատանքի արդյունքը և գիտակցել համաշխարհային լսարանի վերաբերմունքը լեյբլին:
— Մենք էստեղ մի քիչ լճացած վիճակում ենք ու չենք զգում, թե իրականում ինչքան ենք աճել, հետո մենք երևի ինչ-որ տեղ թերագնահատում ենք ինքներս մեզ,– խոստովանում է Kitchen-ի համահիմնադիրը:– Իրականում մեծ ներուժ կա Հայաստանում, կան շատ տաղանդավոր արտիստներ, որոնք ոչնչով չեն զիջում միջազգային ճանաչում ունեցող շատ դեմքերի:
Վարդանը հավելում է, որ արդեն իսկ քանդվում են սահմանները, որոնք ստեղծվել են դրսի ու ներսի շուրջ, ինչը, իհարկե, շատ կարևոր է ու արտիստի աշխատանքի ամենատեսանելի արդյունքներից մեկն է: Թեև շատերը համեմատության մեջ թերագնահատում են լոկալ արտիստներին, սակայն կարևոր է գիտակցել, որ գրեթե բոլոր իվենթների վերջում հնչում է արդեն թևավոր դարձած մեկնաբանությունը՝ «արա, դե մերոնք ուրիշ են, էլի»:
Դե իսկ Kitchen Recordings-ին ու Supacooks-ին միջազգային շուկայում արդեն լավ գիտեն և հաճախ են ստանում մեկնաբանություններ, որտեղ նշվում է, որ պատիվ է իրենց մոտ թողարկվելը: Սրանք բոլորը հաջողություններ են, որոնք հպարտանալու տեղիք են տալիս ոչ միայն Kitchen-ի տղաներին, այլ նաև բոլորիս:
Լեյբլի առկայությունն առավել մեծ կարևորություն ունի արտիստի կյանքում: Դեյլը բացատրում է պատկերավոր.
— Որպես օրինակ կարող ենք վերցնել ինչ-որ X արտիստի, որը ցանկանում է հրապարակել իր երաժշտությունն ինչ-որ

Y հարթակում: Այստեղից ավելի լայն լսարան ձևավորելու ու դուրս գալու համար անհրաժեշտ է, որպեսզի արտիստը հայտնվի որևէ խոշոր խանութում, օրինակ՝ Beatport-ում, ինչն անհնար է առանց լեյբլի միջամտության: Այսինքն՝ արտիստի համար ավելի բարդ կլինի հայտնվել աշխարհի երաժշտության օվկիանոսում, եթե նա չի համագործակցում որևէ լեյբլի հետ: Այս համատեքստում լեյբլի առաքելությունն արտիստի համար ճանապարհ հարթելն է:

Պատկերավոր մյուզիք

Kitchen Recordings-ն ունի արդեն 121 ռելիզ, որոնցից վերջին 21-ն ունեն ոչ միայն պարզապես շապիկի նկար, այլ հատուկ այդ երաժշտության համար ստեղծված թվային արտ: Համագործակցությունը երիտասարդ ու խոստումնալից նկարիչ Դավիթ Սահակյանի հետ արդեն իսկ հիացնում է շատերին: Ստեղծված 21 աշխատանքների մասին Դավիթը

Այսօր իվենթներին գալիս են հենց երաժշտությամբ հեպպիֆիրիվող ու բան հասկացող մարդիկ

պատմում է. «Չէի կարող անել մի բան, որ պարզապես ինձ է դուր գալիս, նկարը պիտի համապատասխաներ երաժշտությանն ու դա շատ պարտավորեցնող էր: Պետք էր յուրաքանչյուր նոր ռելիզի հաղորդել նաև վիզուալ տեսք ու էսթետիկ արժեք տալ: Դա մի ամբողջ ճանապարհորդություն էր ինձ համար, յուրաքանչյուր ռելիզ իր հետ նոր ու տարբեր պատկերներ էր բերում»:

Լեյբլի զարգացման գործում մյուս կարևոր գործիքն իվենթներն են, որոնք դարձնում են այն ավելի ճանաչելի և ստեղծում հնարավորություն լայնացնելու լսարանն ու հասանելի լինել ավելի մեծ զանգվածների համար: Դա էլ իր հերթին լեյբլն ավելի ցանկալի է դարձնում այլ արտիստների համար: «Պատի հենքի» տիպի ծավալուն իվենթները մեծացնում են հետաքրքրությունն ու վստահությունը երկրի երաժշտական ոլորտի հանդեպ, իսկ դրսից ժամանած արտիստի դրական փորձառությունը ձևակերպում է երկրի դրական կերպարն աշխարհի տարբեր կետերում:

Ահա այսպես, հին ու բարի 90-ականներից հասանք 21-րդ դարի երրորդ տասնամյակ: Դժվար թե այն ժամանակվա սկսնակ դիջեյները պատկերացնեին, թե ուր կհասնեն իրենք շնորհիվ սիրո ու նվիրվածության՝ երևանյան փոքր ակումբներից մինչև 2000 հոգանոց մեծ իվենթներ ու միջազգային ճանաչում ունեցող լեյբլ: Եվ սա դեռ ճանապարհի սկիզբն է, վստահ են Kitchen-ի հմուտ խոհարարները:

Անի Յավրենց
Հարություն Մալխասյան, Kitchen Recordings

PIERRE RAMBAL-COCHET

Սկզբում կար տունը ու չկար անուն, հետո կար անուն ու չկար ոչ մի բան, հետո կար անուն ու էդ անունը ձեն էր բերում, հետո ձենը դարձավ կոնցեպտ ու սկսեց մարդկանց հավաքել իրար գլխի. Rambalkoshe-ն այս նոյեմբերին կդառնա 5 տարեկան ու այդ տարիների ընթացքում, կոչվելով ժամանակակից արվեստի թանգարան, ստեղծել է մի շարք ֆորմատներ՝ անընդհատ փնտրելով նոր ձևեր բացահայտելու աշխարհը, որը պատկերի ու երաժշտության միջև է: Խնդրել ենք այս ամենն իր բառերով պարզաբանել Rambalkoshe-ի հիմնադիր հայր Վահան Ստեփանյանին:

RAMBALKOSHE

Rambalkoshe-ն ընտանիք է. սերտ համագործակցող և համախոհ անհատների, որոնք փորձում են բացահայտել ձայնի ու ձևի միջև թաքնված զգացմունքները: Միաժամանակ և համերգասրահ, և ժամանակակից արվեստի թանգարան լինելով՝ Rambalkoshe-ն երաժշտական մենեջմենթի կենտրոն է, ինչպես նաև արտիստներին ու երաժշտության սիրահարներին հոյակապ հուզումներ պարգևող լուսավոր կետ:



DZEN

Լսել պատկերը և տեսնել երաժշտությունը. DZEN-ն իրադարձություն է, որի ընթացքում ներկայացվում է ցուցահանդես և մի քանի երաժշտի համերգ՝ ներկաներին հնարավորություն տալով պատկերի միջոցով վիզուալիզացնել երաժշտությունը, ու, միաժամանակ, երաժշտության միջոցով տեսնել պատկերի՝ առաջին հայացքից թաքնված կողմերը:

HOMARD

Ի սկզբանե էր սենյակը, և այն սպիտակ պատերով էր: Եվ այդ պատերի ներքո գաղափարն էր՝ մտորելու ու երևակայելու համար իդեալական անկյուն ստեղծելու գաղափարը: Եվ ստեղծվեց մի նոր աշխարհ: Եվ այն լցվեց անգո էակներով: Եվ նրանք սկսեցին ապրել արտասովոր կյանքով: Եվ սահմանվեցին նոր օրենքներ:
Մտապատկերի հերոսները վաղուց դուրս են եկել ինքնաճանաչման սահմաններից, ապրում են ուրույն կյանքով, կապված են միմյանց հետ, փոփոխվում են իրարից անկախ ու հյուսում են սեփական էպոսն ու դիցարանը:
Յուրաքանչյուր հերոսի պատմությունն ավարտուն է, լիաժեք և սերտորեն կապված է մյուսների պատմությունների հետ: Նույն պատմությունը կարող է լինել մեկի սկիզբը, մյուսի ընթացքը, երրորդի ավարտը: Մեր տիեզերքի տարբեր ծայրերում ստեղծագործող տասնյակ երաժիշտներ, իմանալով այս նախագծի մասին, զգացել են իրենց հոգևոր կապն այս սենյակի հետ: Եվ դարձել են այս նորահայտ պատմության ելևէջները:
Այս սենյակում յուրաքանչյուր հերոս կունենա իր սեթը, որը հենց իրեն է նվիրված: Նորահայտ աշխարհի պատմությունը լիարժեք դարձնող մեղեդին, պատկերն ու տեքստը կօգնեն, որ ամեն այցելու կերտի երևակայական իրականության իր տարբերակը՝ ինքնուրույն որոշելով սյուռէպիկ պատմության սկիզբը, ընթացքն ու ավարտը:



CHAMBARKOSHE

Երբ ուզում ենք բոլորից կտրվել ու հանգստանալ քաղաքի աղմուկից հեռու ինչ-որ տեղ, մենք սովորաբար փնտրում ենք համախոհների, որոնք նույնն են ուզում. առաջին հայացքից՝ բոլորից կտրվելու, բայց համախոհների գտնելու այս նոնսենսն իրականում շատ բացատրելի և պարզ է: Դուք նույն բանն եք ուզում՝ որ ձեր հանգիստն ինչ-որ տուրիստական գործակալություն չկազմակերպի, որ ինչ-որ անհասկանալի մեկը չորոշի, թե ինչ երաժշտություն եք լսելու, որ ուտելիքն ու խմելիքը նույն անհետաքրքիր All Inclusive-ը չլինեն ու որ ոչ ոք չասի, թե ինչ կարելի է, իսկ ինչ՝ ոչ: Այլ կերպ ասած՝ փախչելով իրականությունից՝ ստեղծում ես քոնը, որի ընթացքում բազմաթիվ նոր հարցեր են առաջանում, բայց այստեղ այդ հարցերին պատասխանելու ու լուծելու հնարավորությունն ընձեռված է միայն քեզ:

CONCERPT

Մենք սովոր ենք էլեկտրոնային երաժշտությունն ասոցացնել թույլ լուսավորված ակումբների կամ ինդուստրիալ տարածքների հետ, ինչի համար բոլոր իրավունքներն ունենք՝ հաշվի առնելով, թե ոնց ու որտեղ է այն ստեղծվել: Բայց ժամանակի ընթացքում փոփոխությունները, որ ունեցել է այդ երաժշտությունը, և լեզուն, որով «խոսում են» հանդիսատեսի հետ, գալիս են ապացուցելու, որ այն վաղուց դուրս է եկել այդ տարածքներից և շատ ավելի հավակնոտ է, քան կարելի էր պատկերացնել: Վաղը, խոսելով այս երաժշտության մասին, մենք հասկանալու ենք, որ այն Բեթհովենի, Ռախմանինովի կամ Առվո Պառտի տրամաբանական շարունակությունն է:
Concerpt-ը, որը concept և concert բառերի միաձուլումից ստեղծված նախագիծ է, խնդիր ունի աշխարհի ամենահայտնի բեմերում կազմակերպելու այն կոմպոզիտորների համերգները, որոնց էլեկտրոնային գործիքներով ստեղծածը շատ ավելին է, քան էլեկտրոնային երաժշտությունն այն տեսքով, որով մարդիկ կարող են պատկերացնել:

a photo of Shushi, Artsakh, dated 1889.
At that time, the city was inhabited
exclusively by Armenians, with no
Azeris in sight. Incidentally,
the photo is older than Azerbaijan
by 29 years.

RE<OGNIZE
ARTSAKH





C.O.S.M.S.

Ինչքան տարբեր կարող է լինել երաժշտությունը, և ինչքան հեշտ ճանապարհով ենք մենք ամեն անգամ գնում, երբ այդ տարբերությունը փորձում ենք դասակարգել՝ ըստ ժանրերի, ռիթմերի կամ նույնիսկ ժամանակաշրջանների: Ինչքան իրականում կապված են երբևէ ցանկացածի կողմից ստեղծած բոլոր երաժշտությունները, և իրականում ինչքան ավելի հեշտ է դասակարգելու փոխարեն զգալ և վերապրել այդ կապը. C.O.S.M.S.-ը մի քանի օր տևողությամբ երաժշտական փառատոն է, որը չունի ոչ մի սահման, և որտեղ երաժշտությունը բոլորին կապող միակ էլեմենտն է իր բոլոր տարբերություններով ու նմանություններով:

ALAMEZON

Alamezon Residency-ն դասախոսությունների, workshop-երի, կինոդիտումների, համերգների, քննարկումների և այլ իրադարձությունների շարք է: Այն տևում է 3-6 ամիս և ամեն անգամ հավաքում նոր ռեզիդենտների: Այդ ընթացքում նրանք մասնակցում են դասախոսությունների ու workshop-երի տարբեր թեմաներով՝ երաժշտությունից մինչև քարագործություն, ճապոներենից՝ գեղագրություն: Հատուկ ռեզիդենտների համար մշակվում է ֆիլմերի փառատոն, իսկ breakfast session-ները, վինիլի օրերը, drink'n'draw-ն, մասնագիտական տարբեր թեմաներով քննարկումները հնարավորություն են տալիս ոչ միայն ծանոթանալու նոր մարդկանց հետ, այլև զրուցելու այնպիսի թեմաներից, որոնց ժամանակն առօրյայում սովորաբար չենք ունենում:

DÈNS

Երբ գնում ենք ինչ-որ իրադարձության, հաճախ նայում ենք նվագողների ցանկին ու ինչքան նրանք շատ լինեն, կամ բեմերի քանակը մեծ լինի, այնքան այդ իրադարձությունն ավելի գայթակղիչ կլինի: Բայց, հասնելով մեր ուզած սթեյջին ու արտիստին՝ մի ժամ հետո ափսոսում ենք, որ նրա նվագելու ժամանակը սպառվել է և էլ հնարավորություն չի լինի այդ հաճույքը երկարացնելու: Dénsն այդ ամենի հակառակն է՝ մի սթեյջ, մի արտիստ ու երաժշտություն, որը ներկաներին հնարավորություն է տալիս ձգելու հաճույքն ամբողջ գիշերվա ընթացքում:



RAMBALKOSHE EXHIBITS

Rambalkoshe Exhibits-ը, պահպանելով «իրադարձության» ձևաչափը, վիզուալ արվեստի գործերի մեկօրյա ցուցահանդեսների շարք է: Ինչո՞ւ միայն մեկ օր: Լինելով ժամանակակից արվեստի ջատագովը՝ Rambalkoshe-ն միշտ փնտրում է նոր գաղափարներ և դրանց ռեալիզացման ու վիզուալիզացիայի նոր ձևեր: Սա խաղի մի ձև է, որտեղ ձեզ տրվում է շատ քիչ ժամանակ, որպեսզի հասցնեք լինել այդ իրադարձության մի մասնիկը, զգալ ու ընկղմվել դրա մեջ:
Շատ հաճախ արվեստի գործերը թանգարանային կամ ցուցասրահային ընկալում ունեն: Ըստ Rambalkoshe-ի՝ այսպիսի ընկալումը երբեմն կեղծ արժեք է ձևավորում գործի շուրջ: Rambalkoshe-ում համոզված են՝ արվեստի գործը չունի որևէ օբյեկտիվ առանձին արժեք, այն ունի իմաստ միայն դիտողի և գործի երկխոսության դեպքում: Այսպիսով, էքսպոզիցիայի կառուցման ընթացքում առաջնային է ստեղծել միջավայր, որը կնպաստի դիտողի և արվեստի գործի հարաբերմանը:

/ Rambalkoshe

ՇՈՇԱՓԵԼԻ ՈՒՐՎԱԿԱՆ

2019 թվականի մայիսի 3-ին եղանակը փորձեց հարամել Ուրվական փառատոնի երկրորդ օրը. առավոտից տեղացող անձրևը տեղաց մինչև ուշ գիշեր ու ավարտվեց օրվա վերջ արտիստի վերջին ակորդի հետ: Բայց միևնույն է, արդեն այդ օրը Մանկական երկաթուղում հավաքված հանդիսատեսի համար պարզ էր՝ սա մի չտեսնված ու չլսված ծավալի իրադարձություն է Հայաստանի համար: Հաջորդ օրն արդեն չոր էր ու այդ միտքը միայն վերահաստատվեց ու ամրապնդվեց:

Զրուցել ենք Ուրվականի համակազմակերպիչ, Մոսկվայից Երևան տեղափոխված երաժիշտ, ճարտարապետ ու պրոդյուսեր Նաիրի Սիմոնյանի հետ այն մասին, թե ինչ դժվարություններ ու առավելություններ կան նմանատիպ միջոցառումները Երևանում կազմակերպելու մեջ:

ԷՎՈԼՅՈՒՑԻԱ

Ռուսական մամուլում Նաիրի Սիմոնյանին ներկայացնելու ամենակարճ ձևն այսպիսին է. Pompeya ինդի խմբի նախկին թմբկահար, այժմ՝ պրոդյուսեր, որը բաց է ցանկացած որակյալ երաժշտության առաջ: «Ջահել ժամանակ մարդ ավելի սկզբունքային է երաժշտական նախասիրությունների մեջ, դու քո համար ընտրում ես մի հերոսի, ամբողջ հոգով ու սրտով տրվում նրան, պաշտպանում մյուսներից ու հրաժարվում ընկալել մնացած ամեն ինչը: Հետո մեծանում ես, սիրտդ ավելի լայն ես բացում ու սկսում ավելի հանգիստ զննել մնացած հսկայական, անծայրածիր դաշտը»,– պատմում է Նաիրին, որը մի օր հենց այդպես եկավ դեպի էլեկտրոնային երաժշտությունը: Նրա սրտի դռան լայնացումը համընկավ այն փուլի հետ, երբ իր մոսկովյան տունն ավելի նման էր սքվոթի, որտեղ անընդհատ լռված էին երաժիշտներ, արվեստագետներ ու ուղղակի հավես դեմքեր: 2005 թվականի կողմերն էր:

Եվ ահա, Նաիրիի ընկերներից մեկը՝ մի շատ լուռ, հանգիստ տղա, պարբերաբար ականջին ականջակալն էր մոտեցնում ու ասում՝ հլը լսի՛: Այդպես նախկին թմբկահարի առաջ բացվում է դաբսթեփի մոգական աշխարհը. «Լսեցի ու էնպես ոգևորվեցի, որ մտածեցի՝ ինչու՞ չկազմակերպել մի բան սրա մասին: Էդ մյուզիքի մասին դեռ քչերը գիտեին, դրա համար մի մեծ մարտահրավեր էր, ո՞նց անել, որ մարդիկ գան ու լսեն: Բայց էդ պահից ես որպես պրոմոթեր արդեն հասկացա, որ ամենահետաքրքիրը սա է: Այդպես հայտնվեցի դաբստեփի գլոբալ առաջխաղացման ակունքներում, իրոք պատմական պահ էր»:

Շատ չանցած Նաիրի Սիմոնյանը դարձավ էլեկտրոնային երաժշտության միջոցառումների ու ամենահետաքրքիր ռեյվերի կազմակերպիչը Մոսկվայում: Երաժիշտը վերջնականապես վերածվեց պրոմոթերի: Այս վերափոխումն էլ ունի իր միանգամայն տրամաբանական ուղին. «Որքան հիշում եմ ինձ Լյուբերեցկի շրջանի գետնանցումներում իմ պանկ-խմբի հետ ելույթներից սկսած մինչև ինդի երաժշտության փուլն ու հետո մինչև տեխնո, միշտ, անխտիր, առանց բացառության բոլոր դեպքերում ես զուգահեռ աշխատում էի նաև բեմից դուրս: Ես էն մարդն էի, որը ոչ միայն կազմակերպում էր ամեն ինչ, այլև հաճույք էր ստանում դրանից: Օրինակ՝ մեքենան էի վարում, որովհետև միակն էի, որ վարորդական իրավունք ուներ: Վերջում, արդեն Pompeya-ից դուրս գալու պահին, ես երևի տասը տոկոսով թմբկահար էի, 90 տոկոսով մենեջեր: Ինձ անկեղծորեն դուր էր գալիս խորանալը նախահամերգային ամեն ինչի մեջ, հասկանալը, թե ոնց ա շարժվում էդ ամբողջ մեխանիզմը:»





Ուրվականն արդեն ունի սեփական լեյբլը, որն այս տարի կթողարկի առաջին ռելիզը՝ «A Collective Memoir»:





Մի խոսքով, շատ հոգեղեն

Ուրվականի ֆիրմային ոճը մշակել է Մագիյար Փահլեվանը, որը նախկինում համագործակցել է Նիկոլաս Ջաարի ու Other People լեյբլի հետ:

Ուրվական

Բայց մյուս կողմից, Ուրվականն էլ, դրանից մի քանի ամիս անց տեղի ունեցած Սինթպոզիումն էլ իրենց երաժշտական ծրագրում սահմանափակված չեն ժանրերով: Էլեկտրոնայինի հետ զուգահեռ այստեղ կան սաունդ-համարներ, ֆոլք, ամեն ինչը խառնած ամեն ինչի հետ: Ընդհանրապես, ըստ Նաիրիի, ժանրային սահմանափակումը 21-րդ դարում պարզապես անիմաստ է, այժմ նույնիսկ վիզուալն ու աուդիոն են իրար հետ ձեռք ձեռքի բռնած շարժվում, էլ ուր մնաց երաժշտական ժանրերն իրարից պոկ գան:

Ուրվականը երաժշտության, լույսի ու արվեստի համարժեք միավորում էր, ոչ թե պարզապես ռեյվ, կամ պարզապես ֆեստ, որտեղ կարևոր է մի քանի հայտնի կատարողների շարել իրար հետևից, ցանկալի է ամենալավ վաճառվողին՝ ամենավերջում: Ուրվականի լայանափն իրոք շլացուցիչ էր, ու այդպիսին կլիներ ոչ միայն Երևանի, այլ աշխարհի ցանկացած միջոցառման համար: Ուրիշ հարց, որ Երևանում քչերն էին գնում՝ ի սկզբանե իմանալով արտիստներին, շատ շատերի համար սա անհայտության մեջ մի նոր ձայն ու պատկեր բացահայտելու հնարավորություն էր: Նաիրին ասում է, որ հենց այդ տարբերակն է ամենահավեսը պրոմոթերական տեսանկյունից. «Իհարկե, կան տարիների ընթացքում ձեռք բերված ծանոթություններ արտիստների հետ, ու նրանց Հայաստան հրավիրելը մեր համար առանձնահատուկ պատիվ էր ու առանձնահատուկ մարտահրավեր: Իսկ եթե հաշվի առնենք՝ ինչ արագ ու հավեսով էին էդ բոլոր մարդիկ համաձայնվում, պարզ էր, որ իրենց համար էլ ինչ-որ նոր տեղի, նոր մարդկանց, նոր լսարանի բացահայտումը երևի ամենակարևոր թրիգերն էր էս պատմության մեջ»:

Բայց ռուսական մեդիաներին տված հարցազրույցներում Նաիրին պարբերաբար նշում է, որ ինդուստրիան դեռ այնքան բացեր ունի, որ դրանք առաջացնում են բարդություններ ու կազմակերպչական խնդիրներ: Դժվար է պատկերացնել, թե էդ ֆոնին ինչպես է նայվում Հայաստանը: Նաիրին բացատրում է շատ կոնկրետ. Հայաստանում դու գտնվում ես ցանկացած ինդուստրիայի սահմաններից դուրս: «Այստեղ այն աստիճանի չկա կայացած միջավայր, որ դու նաև չունես պարտավորություն հետևելու գրված ու չգրված օրենքների, դրանք ուղղակի չկան: Ուրեմն դու ազատ ես, բացարձակ ազատ: Անտեղյակ հանդիսատեսին կարելի է ներկայացնել և մեյնսթրիմ արտիստների, և անդերգրաունդային, և այդ ամենը ներկայացնել մի այնպիսի կոնցեպտով, որ Մոսկվայում երբևէ ռիսկ չէինք անի,– բացատրում է Նաիրին:– Հիշում եմ, առաջին Ուրվականի լայնափը մշակելիս թիմի հետ նստած ստեղ մտածում էինք՝ պատկերացնո՞ւմ եք, հիմա վերջապես կարող ենք բերել էն մարդկանց, ում միշտ երազել ենք, բայց ում համար չկար հարմար առիթ»:

Հիմա մյուս կարևոր հարցը: Հասկանալի է ստեղծագործական իմաստով, բայց չէ՞ որ նման միջոցառումների կազմակերպումը աշխատանք է: Եկամտի մասին, իհարկե, խոսք գնալ չի կարող: Բայց Նաիրին սրան նայում է փիլիսոփայորեն, ասում, որ հեռանկարում բոլորը գոհ կմնան: Իսկ առայժմ միանշանակ շահել է Հայաստանի տնտեսությունը. «Խոսենք կոնկրետ թվերով. 2019 թվին Հայաստան այցելած զբոսաշրջիկները միջինում ծախսում էին, եթե չեմ սխալվում, մոտավորապես 880 դոլար: Հատուկ Ուրվականի համար օնլայն տոմս գնելով արտերկրից վեր է կացել ու եկել 1800 հոգի: Հիմնականում էն մարդիկ, ովքեր մինչ այդ Հայաստանում չէին եղել: Ստացվեց, որ երեք օրանոց փառատոնը ավելի քան մեկուկես միլիոն դոլարի ներդրում արեց ՀՀ տնտեսության մեջ: Ահա թե ինչու են Հայաստանի համար էդքան կարևոր ստեղծագործական բարձրորակ միջոցառումները: Էլ չեմ ասում, որ փառատոնները նաև աշխարհաքաղաքական գործիք են: Մի խոսքով, շատ բան կա անելու այս ոլորտում, և խոսքը ոչ միայն Ուրվականի ու ոչ միայն երաժշտության մասին է:»

սինթպոզիումը ոգեշնչում է հայտնագործ

ՍԻՆԹՊՈԶԻՈՒՄ

Եթե Ուրվականը նորույթ էր բոլոր իմաստներով ու բոլորի համար, ապա Սինթպոզիումը նախքան Երևան տեղափոխվելն ուներ բավական երկար ու հարուստ պատմություն: Ամեն ինչ սկսվեց սինթեզատորների ու հարակից սարքերի հավաքածուից: Նաիրին ու համակիրները հավաքվում, ցուցադրում էին միմյանց սեփական նմուշները, ոմանք էլ բերում էին սեփական ձեռքի աշխատանքները: Այդպես հավաքները վերածվեցին լուրջ ինժեներական ցուցահանդեսների, որոնք, իհարկե, զուգակցվում էին երաժշտությամբ, վիզուալ էֆեկտներով ու քննարկումներով: Այդ ամենի արդյունքում Ռուսաստանում անգամներ աճեց տեղական արտադրողների թիվը, իսկ նրանց սարքերը հասան մինչև Depeche Mode-ի ու Chemical Brothers-ի ձայնագրման ստուդիաներ:

Եվ ահա, եղավ առիթ այդ սինթեզապաշտ շրջապատին բերելու Երևան, թեկուզ ավելի փոքր ֆորմատով, բայց փոխարենը տարածաշրջանային ծավալով: Չնայած սա դեռ միայն սկիզբն էր, բայց այս միջոցառման արդյունքներից էլ Նաիրին գոհ է. «Ո՞րն է Սինթպոզիումի առաքելությունը: Շատ պարզ՝ ոգեշնչել հայտնագործություններ անելու՝ ստեղծագործական, գիտատեխնիկական, կապ չունի, կարևորը՝ նոր բան հայտնագործել»:

2020 թվականի չեղարկված Ուրվականին իր մասնակցությունն էր հաստատել 120 արտիստ՝ 34 երկրից (նախկին ԽՍՀՄ, Ամերիկա, Եվրոպա):



ություններ անելու

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԲԵՄ

Մի քանի տարվա ընթացքում Նաիրին ու իր թիմը դարձան երևանյան նոր երաժշտության (Նաիրիի բնորոշումն է) բեմի կարևոր խաղացողները: Այնպես որ, հաշվի առնելով նրա փորձը և այստեղ, և Ռուսաստանում՝ հետաքրքիր է, թե ինչպես է գնահատում ոլորտը: Ասում է, որ առաջին Ուրվականի ժամանակ բավական բարդ էր լոկալ լայնափ կազմելը, թեպետ կազմակերպիչների համար սկզբունքային էր դրսի լավագույն դեմքերի հետ զուգորդել նաև մերոնց: «Դժվար էր գտնել երիտասարդ, խիզախ, անփույթ տղաների ու աղջիկների: Չենց այդպիսի մարդկանց մոտ կարելի է գտնել ճշմարտությունը»,– բացատրում է Նաիրին՝ հավելելով, որ այն ժամանակ հավաքեցին ում կարողացան ու լիքը ջահել երեխեք եկան որպես հանդիսատես ու տեսան մոտիկից, որ իրենց նման տղաներն ու աղջիկները չեն վախենում ստեղծագործել:

Չկայացած երկրորդ փառատոնի լոնգլիսթն արդեն անգամներ ավելի մեծ էր: Մյուս տարի էլ ավելի մեծ կլինի: «Պրոցեսը գնացել է, մարդիկ խորանում են, փորձում են: Ես, որպես պրոմոթեր, հավատում եմ մի բանի. քանի կա շարժ, զարգացում, անընդհատ զարգացում, կլինի նաև առաջընթաց: Առանձին արտիստներն ինձ քիչ են հետաքրքրում, ես կարևորում եմ ընդհանուր միջավայրը, ու այն հզորագույն առաջընթաց է ապրել»:

Այս առաջընթացում, ըստ Ուրվականի համահիմնադրի, մեծագույն ներդրում ունեն տեղացի պրոմոթերները: Նաիրին, իհարկե, ճանաչում է բոլորին. «Ես բաց չեմ թողնում ոչ մի նոր միջոցառում ու կարող եմ ասել, որ Պոլիգրաֆը, Ռամբալը, Տրիանգուլումը, Քիթչենը՝ բոլորը թույն աշխատանք են անում, ամեն մեկն ունի իր թեման, բոլորը խորացած են, ուշադրություն են դարձնում ամեն մանրուքի, աչքերը փայլում են: Էդ է կարևորը՝ սեփական գաղափարին ու տեսլականին հուսահատ նվիրումը»:

Իսկ ո՞րն է իր գաղափարը, որին Նաիրին ու իր թիմը նվիրվում են անվերապահորեն: Պատասխանը գալիս է հեռվից, էլեկտրոնային երաժշտության պատմական խորքերից. «Հին ռեյվերն ինչի՞ մասին էին: Փախուստի: Մեկը գործից էր փախչում՝ փողկապը վրայից հանելով մտնում դահլիճ, մյուսը տնից էր գնում, որ հանգստանար, երրորդը փախչում էր ոստիկաններից: Ու էդ բոլորը հայտնվում էին մի տեղում: Էլեկտրոնային երաժշտությունը միավորում էր: Հիմա արդեն չկա փախուստի տարրը, բայց մեկ է՝ կա միավորումը: Ու դա երաժշտության ամենամեծ հզորությունն է: Դա ենք փորձում բերել մեր բոլոր իվենթների միջոցով»:

Արտավազդ Եղիազարյան
Գևորգ Զապիկյան, Միխայել Նազարենկո, Սիրա Կաչաղինա, Գևորգ Հովհաննիսյան, Աննա Մկրտչյան

ALTERATION

Այս տարվա մայիսի 30-ից հունիսի 18-ը Երևանում անցկացվեց Alteration երաժշտության և արվեստի միջազգային փառատոնը: Էլեկտրոնային ուղղվածություն ունեցող, Հայաստանի համար աննախադեպ խոշոր միջոցառման գլխավոր հարթակն «Այրարատ» կինոթատրոնն էր (նույն ինքը՝ «Կինո Ռոսիան»): Փառատոնի օրերից մեկի ժամանակ ԵՐԵՎԱՆԻ թղթակիցը շրջել է տարածքում ու ծանոթացել այնտեղ տիրող նոր միջավայրի հետ:



Ոգեշնչել երիտասարդներին

Մայիսի 30-ին հավաքվում են ընկերներով, զույգերով, ավելի տխուր դեպքերում՝ լրիվ միայնակ ու զուգված-զարդարված ուղիղ համերգի դահլիճ: Հետն էլ տեղը տեղին ուրախանում, որովհետև Alteration երաժշտական փառատոնի մեկնարկը տալիս է տեխնո թագուհի Նինա Կրավիցը՝ չտեսնված ծավալուն փառատոնի առաջին հռչակավոր հեղլայները: Կազմակերպիչներն ասում են, որ այս ամենի գլխավոր նպատակներից մեկը հետպատերազմյան Հայաստանում երիտասարդների բարոյահոգեբանական վիճակի բարձրացումն է, որ պետք է «ոգեշնչել նրանց ապրելու, ստեղծագործելու, ստեղծելու հասարակական արժեքներ»: Ես էլ, որպես երևանյան ջահելության կարկառուն ներկայացուցիչ, որին պետք է ոգեշնչել, կարգին զուգվում-զարդարվում եմ ու ուղղությունս «Այրարատ», նույն ինքը «Կինո Ռոսիա»: Ճանապարհվում եմ մետրոյով և միայն իմ կանգառ հասնելիս մտաբերում, իհարկե ամոթով, որ հստակ չգիտեմ կինոթատրոնի շենքը (շատ կներեք, բայց այն դադարել է գործել իմ ծնվելուց տարիներ առաջ): Շուտով տնտղում եմ մոլի տարածքն ու հայտնվում լեգենդար կինոթատրոնի կախովի ծածկի տակ, որն ինչպես հետո համացանցից պարզեցի, 70-ականներին դեռ չլսված կայմաճոպանային ծածկ մոդեռնիստական լուծումն է: Աստիճաններով դեպի կինոթատրոնի մուտք եմ շտապում, որտեղից էլ սկսվում է համերգին սպասող մարդկանց հերթը: Ճիշտ և ճիշտ իմ նկարագրածի պես, երբ հավաքվածների դեմքից էլ կարդում ես, թե եկել են կարգին երաժշտություն լսելու, չնայած կարգինն էն խոսքը չէ՝ փառատոնի այդ օրվա ցուցակում հայկական ռոքն է՝ Լավ էլին, Կաթիլը, Ներման, Ռոզեն Թալը, իսկ հատուկ հյուրը բեյրութցի Գուրումիրանն է:

Տարածքը տնտղելու անհրաժեշտությունն ինձ հանեց երևանյան կարգին ջահելների շարքերից՝ զգաստացնելով, թե վերջիվերջո այստեղ եմ որպես ԵՐԵՎԱՆ ամսագրի լրագրող և նախևառաջ պետք է ավարտել հարցազրույցը փառատոնի կազմակերպիչներից մեկի՝ Ազոյան Հովհաննեսի հետ, հետո Գուրումիրանը, գարեջուրը և մնացած բաները:

Արդարության վերականգնում

Առաջին հարցը, որ տալիս եմ, կապված է տարածքի անվանման հետ: Խոսքի մեջ բոլորն այն գիտեն որպես «Ռոսիա», բայց Alteration-ին վերաբերող տեքստերում նշվում է «Այրարատը»: Որպեսզի կասկածներ չմնան, դահլիճի պատերից մեկին այդ բառով հսկայական գրաֆիտի է պատկերվել: Պարզվում է, որ սա պատմական արդարության վերականգնում է. երբ կինոթատրոնը դեռ նոր պիտի բացվեր, նախատեսվում էր այն կոչել հենց «Այրարատ» կամ «Նոյյան տապան»: Բայց վերջին պահին որոշում կայացվեց հաճոյանալու կայսրության կենտրոնին: Այդպես, կինո «Մոսկվայից» քիչ հեռու բացվեց կինո «Ռոսիան»:

Ինչևէ, անկախացումից հետո կինոթատրոնը պաշտոնապես անվանվեց «Այրարատ», բայց քանի որ պատերազմի տարիներին կինո գնացող առանձնապես չկար, մարդկանց հուշերում շենքը, որ արդեն ավելի շատ տոնավաճառ էր, քան մշակութային կենտրոն, այդպես էլ մնաց կինո «Ռոսիա»: Alteration-ով փորձ է արվում վերականգնել արդարությունը: Եվ այս առաջին քայլն իրոք տպավորիչ է:



Սենյակներում թաքնված արվեստ

Հենց երաժշտական բեմի կողքին էլ իմացա՝ գլխավոր փոփոխությունն այս դահլիճում եղել է երբեմնի կինոթատրոնի աթոռներից ազատվելը: Հատուկ փառատոնի համար հարմարեցված բարի սեղանիկին հենված մի պահ փորձեցի պատկերացնել՝ ինչպիսին էր այս դահլիճը, երբ հսկա կինոսրահ էր՝ 1600 նստատեղով:

«Ռոսիայի» շենքի՝ երբեմնի մշակութային կենտրոնի փայլը վերադարձնելու աշխատանքները սկսվել են դեռևս երկու տարի առաջ: Այժմ այդ մասին Հովհաննեսը պատմում է կինոթատրոնի հետնամասի սրահներից

մեկում, որը ներկայումս ծառայում է որպես սրճարան: Այստեղ հասնելու համար պետք է բարձրանալ դեպի վերև տանող աստիճաններով, որը կարող եք նկատել նախքան մեծ դահլիճ մտնելը: Ապա անցնել անմիջապես բեմին հարող սրահով, որտեղ ևս կարելի է կանգ առնել, մի բաժակ գարեջուր խմել և հետևել, թե ինչ է կատարվում առաջին հարկում: Սակայն ի տարբերություն այս սրահի՝ ներսում գտնվող սենյակները համեմատաբար ձայնամեկուսացված են, լուսավորությունը՝ կարմիր-նեոնային:

Տարածքը ժամանակակից մշակութային կենտրոնի վերածելու գաղափարն իրականացրել են հինգ ընկերներով՝ համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ: Հիմնական նպատակը ոչ միայն նոր շունչ հաղորդելն է եղել «Այրարատին», այլև հարթակ ստեղծելը՝ մշակութային տարբեր միջոցառումներ իրականացնելու համար և խթանել Երևանում մշակութային կյանքի զարգացումը: Այս մասին խոսելիս Հովհաննեսն հիշում է փառատոնի բացման առաջին օրը, երբ այս շենքն իր հարկի



տակ ընդունեց 1500 հոգու, ովքեր շրջում էին երբեմնի կինոթատրոնի տարածքով և ցնցված գրանցում կատարված փոփոխությունները:

Մենք անցնում ենք նեղ միջանցքով, որի պատերին մեծ ու փոքր չափերով տեղ են գտել հայ ժամանակակից նկարիչների աշխատանքները: Կինոթատրոնի երկրորդ և երրորդ հարկերում ներկայացված են շուրջ 40 աշխատանքներ և յուրաքանչյուրին անդրադառնալու համար հարկավոր է անցնել բոլոր սրահներով, քանի որ դրանք փակցված են ամբողջ տարածքում, անգամ միջանցքներում: Ներկայացված ցուցանմուշների ընտրությանը, ինչպես պատմում է Հովհաննեսը, իրենք չեն մասնակցել՝ միայն առաջարկել են և ընտրությունը թողել նկարիչներին:

Այս կանաչ կարմիր աշխարհը

Շուտով մենք անցնում ենք նեղ միջանցքով, Հովհաննեսը զուգահեռ բացում է դռներից մեկն ու հայտնվում կինոմեխանիկների սենյակում: Ահա այստեղից 1970-ականներին անջատվում էր մեծ կինոդահլիճի լուսավորությունը, կինոժապավենը հայտնվում էր պրոյեկտորի մեջ և լույսն ընկնում էր կինոէկրանին: Ու սկսվում էր կինոն:

Մենք առաջանում ենք կինոյի ցուցադրման սենյակից և անցնում հաջորդ սրահ, որի չորս պատերին էլ 70-ականների «Այրարատում» ցուցադրված

Alteration

Փառատոնի համարյա երեք շաբաթների ընթացքում խելքի բերված «Այրարատում» ելույթ ունեցավ 116 տեղացի և օտարերկրացի արվեստագետ ու երաժիշտ, այդ թվում էլեկտրոնային երաժշտության կարկառունները՝ տեխնո թագուհի Նինա Կրավիցը և կենդանի լեգենդ Ռիկարդո Վիյալոբոսը: Մյուսները թվային արտի գազաններ էին՝ ռուսական Sila Sveta և «Ceman» ստուդիաները, որոնք ներկայացան իրենց լուսային և վիզուալ նախագծերով: Ընդ որում, երաժշտությունն ամենատարբեր ուղղվածության էր. հայկական ռոք, փոփ, էքսպերիմենտալ («Դասական և էլեկտրո ֆյուժն» համերգը շատերի համար փառատոնի գլխավոր զարդն էր): Ընդհանուր առմամբ, փառատոնի հանդիսատեսի թիվը հասել է մոտ 2500-ի, այդ թվում՝ Ռուսաստանից, Վրաստանից, Ուկրաինայից և եվրոպական տարբեր երկրներից:



ֆիլմերի պաստառներն են: Այստեղ ինձ ներկայացնում են մի նորամուծություն, որի մասին երազել անգամ չէին կարող «Ռոսիայի» երբեմնի այցելուները. պաստառները կկենդանանան և հնարավորություն կունենաք տեղում դիտելու ֆիլմերը՝ շնորհիվ հատուկ QR կոդերի, որոնք ձեր հեռախոսներում կառաջարկեն ֆիլմերի յութուբյան տարբերակները: Իհարկե, եկել հասել էի՝ պետք էր փորձարկել: Եվ շուտով «Այրարատի» կինոէկրանից «Այս կանաչ կարմիր աշխարհը» ֆիլմը հայտնվում է իմ հեռախոսի էկրանին, սակայն դիտել դեռ կհասցնեի՝ պետք էր անցնել մյուս սրահներով:

Մեկը մյուսի հետևից բացվում և փակվում էին սրահների դռները՝ մինչ այդ ներքևում հայկական ռոքը խառնվում էր նեոնային լուսավորությանը և գարեջրով միմյանց ողջունելուն: Ես էլ երկրորդ հարկի բարում հետևում էի, թե ինչպես է պատրաստվում իմ անսովոր հյութը՝ սովորական ձմերուկով: Միանշանակ, երբ այստեղ այցելեք, քայլեք ուղիղ բաց սրահի բարը և խնդրեք ձեզ համար պատրաստեն նույն ձմերուկի հյութը, հետո անցեք նույն ճանապարհով, ինչ ես՝ արկածախնդրությամբ բացելով յուրաքանչյուր դուռ: Մենք դուրս ենք գալիս բարից՝ անցնելով նույն ճանապարհը դեպի սկիզբ՝ նեղ աստիճաններով դեպի մեծ դահլիճ, ուր կանաչ կարմիր մեծ աշխարհն է:

Շուշանիկ Փափազյան
Դավիթ Գալստյան / Alteration

Կոմպոզիտորներ

Սպենդարյանը, Առնո Բաբաջանյանն ու Էլվինա Մակարյանը դժվար պատկերացնեին, որ իրենցից հետո երաժշտությունն այդքան կփոփոխվի և կոմպոզիտոր կոչվելու համար պետք կլինի ունենալ համակարգիչ, իսկ բարձրագույն կրթությունն էլ պարտադիր չի լինի: Այսօրվա կոմպոզիտորները ստեղծում են իրենց երաժշտությունը, կառուցում իրենց բեմերը, դարձնում այդ ամենն ակումբային կյանքի մաս՝ թելադրելով նոր մշակույթ, ինչը Հայաստանում մի քանի տարի առաջ դժվար էր պատկերացնել: Առաջին հայացքից այդքան տարբեր հերոսներին կթվա, թե կապում է միայն երաժշտությունը, բայց ընթացքում պարզ դարձավ, որ նրանք ունեն ընդհանուր երազանքներ ապագայի, երկրի ու իրենց ստեղծածի հետ կապված:

Երազում եմ Բեռլինի Քլաբ դե Վիժանեյրում live նվագել մի օր:

Missteikk

Ինչպես ասում էր աստծո եղբայրը՝ Լենինը, սոցիալիզմը պետք է համաշխարհային հաղթանակ տանի, ես երազում եմ, որ սոցիալիզմը հաղթի ամբողջ աշխարհում:

Արեգ Առաքելյան

Քաղաքից դուրս մի տարածք կուզեի ունենալ, որտեղ և կապրեի, և կաշխատեի:

Կայ Խաչատրյան

Չեմ սիրում երազանքների մասին խոսել:

Vahgog

Երազանքների մասին ոնց սկսում եմ մտածել, միանգամից պրծնում եմ. էս իրականության մեջ ենք, կյանքը հենց իրենով նվեր է, էլ ինչ երազանք:

Արտյոմ Էվոյան

Կուզենայի, որ ազգությունները վերանային ու մարդիկ դադարեին իրենց որևէ ազգության հետ կապել, այլ սկսեին իրենց համարել երկիր մոլորակի բնակիչ:

Միսակ

Ես չունեմ երազանքներ:

Pupylike



Երազանքս՝ լինեմ հրաշալի ու ապրեմ հրաշքներով:

TeenageError

Միշտ կյանքիս երազանքն է վեգան դառնալը, որը երբեք չի ստացվում:

Melineh

Շատ մեծ երազանքներ չունեմ, ավելի շատ նպատակ. կուզենայի ունենալ նավ, որով կճանապարհորդեի իմ սիրելի մարդկանց հետ:

Node (Վարդան)

Ես կուզենայի հայտնվել տիեզերքում՝ որևէ այլ մոլորակում:

Անի

Երազում եմ ունենալ շատ հին կինոթատրոն, որտեղ շատ թույն կինոներ ցույց կտանք, թույն իվենթներ կանենք:

Liqers (Սոնա)

Երազում եմ, որ Հայաստանում արվեստագետներն ու առհասարակ բոլոր մարդիկ ավելի շատ համագործակցեն, քան մրցակցեն, ու սիրեն իրար մի փոքր ավելի շատ:

Վարդան Հարությունյան

Մերի Անդրասյան / Հերիֆ Մեդիա Գործարան

Սաք Բոհեմնոյի մասին

Երևանյան էլեկտրոնային երաժշտության կյանքի ամենապարմանալի երևույթներից է Բոհեմնոյը՝ գաղափարակից երաժիշտների ու երաժշտասերների համայնքը, որը կապմակերպում էր քաղաքի ամենաանդերգրաունդ միջոցառումները: Այնքան զարմանալի, որ հեքիաթի է նման:



Ի սկզբանե նրանք չորսն էին... չէ, վեցը... չէ, ութը... կամ տասը... երևի

Ի սկզբանե էր թարգմանիչ Մարգոն, որի դերը զգացվեց, երբ նա տարածքում այլևս չկար: Ի սկզբանե էր լուսանկարիչ Նարեկը, որը եղավ հեքիաթին հավատացողն ու հետո այն շարունակ փնտրողը: Ի սկզբանե էր Սակային, որի անունն Անի էր: Հետո եկան Սոնան, Մուրադն ու Արտակը, առանց որի հեքիաթը կդառնար բիզնես նախագիծ, կապրեր երկար, կլիներ շահութաբեր, բայց այդ մասին գրելու համար մեզ պիտի վճարեին: Մնացած կերպարներն էպիզոդիկ էին, գալիս էին ու անց կենում: Ամեն ինչ սկսվեց Դեմիրճյան փողոցի վրա բազմասենյակ մի տնից: Վարձակալեցին, համատեղ կենցաղի պայմանները քննարկեցին ու սկսեցին ապրել համերաշխ ընտանիքի պես:

Ռոկոկո վարագույրը որոշեց նավի անունը

Տանն ամեն ինչն ընդհանուր էր, կենցաղային իրերից մինչև հագուստ ու նույնիսկ, ասում են, գուլպաները: Ամենուր իրեր էին՝ ով ինչ թանկ ու կարևոր ապրանք ուներ, բերել էր՝ կիթառներ, նկարչական պարագաներ, արտ-օբյեկտներ ու տարատեսակ ինստալյացիաներ էին ամենուր:

Միևնույն ժամանակ, կար հստակ գիտակցում, որ այս մեծ աշխարհում ոչինչ մերը չի, բոլորս հյուր ենք ու պետք է հնարավորինս թեթևացնենք թե՛ միմյանց, թե՛ երկիր մոլորակի կյանքը: Վեճեր ու խնդիրներ, իհարկե ծագում էին, բայց արագ լուծում էին ստանում: Մեկը տան վարձն էր մի քիչ ավելի շատ տալիս, մյուսը մաքրության բեռն էր ավելի շատ իր վրա վերցնում: Ի դեպ, ունեին մաքրության օր, կար դերերի հստակ բաժանում, ու նաև բարեհամբույր ընդունում էին բոլորի բոլոր ընկերներին: Հյուրասենյակն իրոք հյուրերի սենյակ էր: Այստեղ հաճախ էին լինում հոգնաբեկ ճանապարհորդների քնապարկեր: Ավտոստոպով Հայաստան եկող տուրիստներն ինչ-որ հրաշքով գիտեին Դեմիրճյանի տան մասին ու պարտադիր չեքին էին լինում նրանց մոտ՝ իրենց հետ բերելով պրինտերով մայկաներ ու իմպրտնի քաղցրավենիք:

Միևնույն ժամանակ տան տերերից յուրաքանչյուրն էլ ուներ իր հետաքրքրությունը, այլ ընկերներ, ոմանք՝ նույնիսկ ստաբիլ աշխատանք: Մարգոն նույնիսկ իր առանձին սենյակն ուներ՝ վարդագույն պատերով, հնաոճ ջահերով, զարդանախշ հայելիով, ռոկոկո վարագույրներով ու կարմիր լամպերով: Ու նրա սենյակն էլ իր հերթին ուներ անուն՝ Բոհեմնոց՝ ի պատիվ ինտերիերի: Շատ շուտով ամբողջ տունը սկսեցին անվանել Բոհեմնոց: Հերթը թաղինն ու այնուհետ՝ քաղաքինն էր:

Մանիֆեստ

- *համախմբել համախոհներին*
- *ընդունել չընդունվածը*
- *ֆանդել սահմանները*
- *հարցականի դակ դնել կոմերցիան*
- *սպեղծել արվեստի կոմունիկացիա*
- *օգտագործել արվեստը որպես գործիք*
- *սպեղծել համաշխարհային կապեր*
- *սիրել յուրայիններին*
- *չլինել պեր ու հնապանդ*
- *չունենալ մշակական ոչինչ*
- *չդնել*

Բոհեմնոցն իր գործունեությունն իրականացնում է միզոյառումներից ստացված հասույթի միջոցով՝ մնալով կամավոր աղքատ։

Կոմֆորտի զոնայից դուրս հրաշքներ են

Հենց այդ ժամանակ էլ Արտակը, որը հեքիաթը հեքիաթ դարձնողն էր, որոշեց դուրս գալ կոմֆորտի զոնայից։ Հենց Արտակը նախաձեռնեց միասին որևէ գաղափար կյանքի կոչելու։ Քննարկեցին Կարապի լճում ձուկ բռնելու տարբերակը, հետո հիշեցին, որ ընդամենը մի հատ կարթ ունեն։ Ժամանակին Նարեկն արդյունաբերական մասշտաբների ձուկ բռնող էր Երևանյան լճի ջրերում։ Ու որոշեցին անել այն, ինչ կարող էին. միացնել լավ երաժշտություն ու ապահովել խաղաղ միջավայր։ Առաջին իվենթի համար ընտրվեց երևանյան ակումբների ամենայուզերֆրենդլին՝ Բիֆորը։ Ամեն ինչ հալած յուղի պես ընթացավ. Սոնան տոմսերով էր զբաղվում, Նարեկը լուսանկարում էր, մնացածն էլ փլեյլիստով ու ֆեյսբքնթրոլով էին զբաղվում։ Այս հեքիաթից է նաև Արթուրը՝ սոց. մեդիայի մարքեթինգով զբաղվող մի տղա, որը հետո դարձավ փեսա։ Բիֆորի միջոցառումից հետո Բոհեմնոցի գաղափարն ու նաև երաժշտական ճաշակը շատ ու շատ նոր մարդկանց հետաքրքրեց։ Դարձավ շարունակական, հասան Գյումրի ու Վանաձոր։ Մյուզիք նայթի ժամանակ մուտքի վճարը սիմվոլիկ էր, հաճախ ընդհանրապես չկար, հովանավոր չէին ներգրավում, գաղափարը հենց ազատ լինելն էր այս կապիտալիստական աշխարհում։ Անդերգրաունդ մյուզիքի, շատ կներեք, հանրահռչակումը առաջնային էր։ Իհարկե, կային մարդիկ, ովքեր այդպես էլ չհասկացան՝ ինչ է Բոհեմնոցն ու իվենթներից հետո ասացին՝ «լավ, պարզ է, դուք դիջեյներ եք»։



Մենք այդտեղ ապրել ենք, իսկ դա ամենակարևորն է

Այս հեքիաթն անդերգրաունդ կյանքի մասին էր: Բոհեմնոցն իր մյուզիքն առանց ավելորդ աղմուկի, գովազդի տարածում էր քաղաքի տարբեր ակումբներում: Էլեկտրոնային երաժշտությամբ հետաքրքրվողները հետևում էին նրանց, միանում: Միրզնոցի ու Բոհեմնոցի համատեղ իվենթները հատկապես մարդաշատ էին: Բեյսմենթում մարդիկ էին ուրիշ, առավել զգայական: Պոլիգրաֆի իվենթները միշտ սպառում էին բարի ամբողջ օրին ու սիրայթը: Գաղափարակից ափամերձ դիջեյ ընկերները կարող էին ինքնաառաջադրվել ու նվագել իրենց մյուզիքը: Գաղափարակից լինելն այդ ժամանակ բարդ չէր, նրանց միավորում էր նախևառաջ քաղաքական օրակարգը: Այո, այդ տարիներին բոլորն էին դեմ գործող իշխանություններին և այդ փաստը միավորում էր: 2016-ի վերջին սկսված հեքիաթն 2019-ի ապրիլին ավարտվեց:

Ավարտվեց, քանի որ ապրվեց: Ու հավանաբար, սպառեց իրեն: Բոհեմնոցի անդամները պայմանավորվել էին՝ եթե այդ տանը չապրեին, այլևս չէր լինի Բոհեմնոցը: Սկսեցին առանձնանալ, առանց դավադրության տեսության, առանց ափսոսանքի, ուղղակի բնականոն եկավ այն կետը, երբ մեծ ընտանիքի ամեն անդամը գնաց իր ճանապարհով:

Զարմանալիորեն զուգահեռ բոլորի կյանքում ավարտվեց Բոհեմնոցը: Նարեկը վարձեց սեփական տուն Կասկադում ու հիմա այն կիսում է ռումմեյթերի հետ՝ առանց ընդհանուր վեհ գաղափարներ փնտրելու:

Մնացյալին նույնպես կյանքը տարավ այլ ափեր: Ու հիմա երբեմնի խելահեղ ու անհավանական կյանքի մասին հիշելիս նրանք մեղմ ժպտում են ու ասում, որ ամենից շատ կարոտում են ընտանիքի այն զգացողությունը, այն կապվածությունն իրար հետ, որը կար քաղաքի ամենաազատ կետ Բոհեմնոցում. բոլորով քննարկել բոլորի խնդիրներն ու կիսել ուրախությունները, համատեղ որոշել տեսակավորել աղբն ու հետո տանջվել ձեթի շշերը լվանալով, հորդորել Մերիին քիչ սուրճ խմել, հիշել՝ ինչ վատ ֆեյս քընթրոլ էր Նարեկն ու ինչ լավ կազմակերպիչ Սոնան, հետհայաց գիտակցել, որ տան մաման, այնուամենայնիվ, Մարգոն էր, որովհետև նրա գործը չէր երևում, բայց առանց նրա կենցաղն անտանելի էր:

Բոհեմնոցը հիմա վերափոխվել է՝ ստանալով այլ նշանակություն: Կա ռադիո «Բոհեմնոցը», ժամանակ առ ժամանակ էլի քաղաքը լցվում է անդերգրաունդ հնչյուններով: Սակայն ինքնին Բոհեմնոցը եղել է այնքան, որքան եղել է բնական: Ոչ ոք չփորձեց արհեստականորեն երկարացնել նրա կյանքը: Ուղղակի էներգիան սպառվեց՝ վերածվելով հիշողությունների ու բարի ժպիտի: Բոհեմնոցը համայնք է, գաղափար, ապրելակերպ: Հարթակ, որի անդամները կապված են երաժշտական, գրական, հոգևոր և այլ հետաքրքրություններով: Ունենալով մեկ նպատակ՝ հանրայնացնել ընդհատակում, ընդհատակից դուրս տեղի ունեցող մշակութային զարգացումները:

Էլեն Բաբայան
Նարեկ Ալեքսանյան



Տեխնո ապստամբներ

Ինչու է էլեկտրոնային երաժշտությունն ավելին, քան պարզապես պարային ռիթմեր, իսկ ռեյվերը հատկապես ծաղկում են ծանր քաղաքական ու սոցիալական վիճակում գտնվող քաղաքներում: Բացատրում ենք երեք վառ օրինակով՝ Դեթրոյթ, Բեռլին, Լոնդոն:

«Մեր երաժշտությունը Փյունիկ թռչուն է, որը ծնվում է քայքայվող ինդուստրիալ պետության մոխիրից»

Խուան Աթքինզ

դիջեյ, տեխնոյի հիմնադիր հայրեր

«Այստեղ ես բուժում եմ իմ ցավերը»

Faithless

Նախաբան

արդի երաժշտության պատմությունը երկու բառով

Վերջին հարյուր տարվա ընթացքում առաջացած և աշխարհը գրաված երաժշտական ամենատարածված ոճերի պատմությունը կարելի է կարճ նկարագրել այսպես. նախ՝ աֆրոամերիկացի երաժիշտները հորինում են մի նոր երաժշտական ժանր, հետո այն դուրս է գալիս արվարձանների շրջանակներից և դառնում մեյնսթրիմը չընդունող երիտասարդ խռովարարների հիմնը՝ շոկի մեջ գցելով պահպանողական ավագ սերնդին: Վերջապես, այդ երաժշտությունը գտնում է համընդհանուր ընդունում որպես մշակութային արժեք, իսկ այն կատարողները դառնում են աստղեր, ստանում պետական պարգևներ և դասախոսություններ կարդում կոնսերվատորիաներում: Իսկ խռով երիտասարդները, որոնց համար սա արդեն մեյնսթրիմ է, սկսում են փնտրել մի նոր սաունդ, որը հավանաբար արդեն ծնվել է հերթական աղքատ արվարձանում:

Նման ճանապարհ անցել են արդի պոպուլյար երաժշտության ամենատարածված ժանրերը՝ ջազը, բլյուզը, ռոքը, ֆանքը, ռեգին, ռեփը: Նման ճանապարհ անցել է նաև էլեկտրոնային պարային երաժշտությունը, որի երկու ամենալայն տարածված ոճերը՝ տեխնոն և հաուսը, առաջացել են երկու ամերիկյան քաղաքների՝ Դեթրոյթի և Չիկագոյի սև համայնքներում, իսկ հետո արդեն իսկական ձայնային և մշակութային հեղափոխություն արել նախ Արևմտյան Եվրոպայում և ապա՝ ամբողջ աշխարհում:



Դեթրոյթ

լույսի շողք անհույս խավարում

Եվ ուրեմն, տեղափոխվենք ԱՄՆ, 80-ականների սկիզբ: Երկրում դեռ զգացվում են 70-ականների տնտեսական հուժկու ճգնաժամը, որի էպիկենտրոնն էր Դեթրոյթը՝ Նահանգների արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը, ինչպես նաև ամերիկյան ռոքի մայրաքաղաքներից մեկը: Ճգնաժամի հետևանքով այստեղ փակվեցին բազմաթիվ գործարաններ և հազարավոր մարդիկ մնացին առանց աշխատանքի: Ինչպես միշտ, ճգնաժամից ամենաշատը տուժեցին աղքատները և փոքրամասնությունները, տվյալ դեպքում՝ քաղաքի աֆրոամերիկացի բնակիչները, որոնք մինչև ճգնաժամն էլ այնպես չէ, որ փայլուն էին ապրում: Դեթրոյթը հիշեցնում էր պատերազմից ավերված մի քաղաք, փողոցներում իշխում էր հանցագործ աշխարհը, երիտասարդության շրջանում տարածվում են ծանր թմրանյութերը՝ հերոյինը և քրեքը: Դեթրոյթցի դիջեյ Ռոբերտ Հուդի բառերով՝ «դպրոցները փակվում էին և բացվում էին նոր բանտեր»:

Եվ ահա մի քանի աֆրոամերիկացի երիտասարդներ իրենց փրկությունը գտնում են երաժշտության մեջ: Նրանց սիրված գործիքն էր Roland TB-303 բաս-սինթեզատորը, որն արտադրող ֆիրմայի կողմից համարվում էր խիստ անհաջող, և այդ պատճառով խանութներում ամենաէժանն էր: Դրա օգնությամբ մի քանի երիտասարդներ ստանում են նոր հնչողություն, որը նրանք անվանում են «տեխնո»:

Ըստ լրագրող Մեթյու Քոլինի՝ նրանք ոգեշնչվել էին հայտնի սոցիոլոգ Էլվին Թոֆլերի «Ապագա Շոկը» գրքից, որում նա կանխատեսում էր, որ ապագայի երաժիշտները լինելու են «տեխնո-ապստամբներ» և օգտագործելու են էժան տեխնիկա՝ բարդ հնչողություն ստանալու համար: Անսպասելիորեն բոլորի համար այս նոր սաունդը դուրս է գալիս դեթրոյթյան արվարձանների նկուղներից և նվաճում աշխարհը: Դեթրոյթցի դիջեյները՝ Խուան Աթքինզը, Դերիք Մեյը, Քեվին Սոնդերսոնը, Ջեֆ Միլզը և ուրիշներ, հայտնի են դառնում սկզբից ԱՄՆ մյուս քաղաքներում, ապա՝ Եվրոպայում, իսկ հետո ամբողջ աշխարհում: Իրենց իսկ խոսքերով, դեթրոյթցի դիջեյները խիստ զարմացած էին, երբ սկսեցին ստանալ հրավերներ Բեռլինից և Եվրոպայի այլ քաղաքների ակումբներից:

Նրանց համար այս ամենը շատ ավելին էր, քան երաժշտությունը. սա հնարավորություն էր կտրվելու իրենց բազմաչարչար քաղաքի դաժան իրականությունից, խուսափելու այն ճանապարհից, որը տանում էր դեպի հանցագործություն և թմրանյութերից կախվածություն և ինչ-որ առումով գտնել նոր ինքնություն:

Իհարկե, այնպես չէ, որ երաժշտական նոր ոճն օգնեց լուծել քաղաքի բոլոր խնդիրները: Ավելին, շատ դիջեյներ, ում հրավիրում էին Եվրոպայի լավագույն ակումբներ, այդպես էլ քիչ հայտնի մնացին իրենց հայրենիքում: Բայց, այդ ամենով հանդերձ, տեխնոն ոչ միայն դարձավ լույսի շողք դեթրոյթյան դաժան իրականության մեջ, այլև սկիզբ դրեց մի շարժման, որը փոխեց ամբողջ աշխարհի երաժշտական դեմքը:

Բեռլին
վերածնունդ ռեյվի միջոցով

Եթե Դեթրոյթն ԱՄՆ-ում ճգնաժամից ամենատուժած քաղաքներից էր, ապա Կենտրոնական Եվրոպայում պատմությունից ամենաշատը տուժած քաղաքներից մեկը Բեռլինն էր: Այսօր էլ Բեռլինում ամեն քայլին հանդիպում ես դառը անցյալի հետքերին: Երկրորդ համաշխարհային արդյունքում Բեռլինը՝ գրեթե հիմնահատակ ավերված, բաժանվեց տերությունների միջև, իսկ քաղաքի սրտում վեր խոյացավ Բեռլինյան պատը: Երբ 89 թվականին Արևելյան Գերմանիայի տոտալիտար վարչակարգը տապալվեց, պատը քանդվեց և քաղաքը, ինչպես և ամբողջ Գերմանիան, վերամիավորվեց:

Բայց, ինչպես մենք՝ հետխորհրդային մարդիկ, լավ գիտենք՝ երկար սպասված ազատության համը հաճախ դառն է լինում: Նոր իրականությունն իր հետ բերեց գործազրկություն, աշխատանքի և սոցիալական երաշխիքների կորուստ, մի խոսքով, անորոշ ապագա: Տրավմատիկ տոտալիտար ժառանգության, անսպասելի ազատության և տնտեսական կոլապսի այս յուրօրինակ համադրումն էր, որ ծնունդ տվեց «Բեռլին» անունով ունիկալ մշակութային ֆենոմենին: Եվ այդ մշակութային վերելքի սրտում ռեյվն էր:

Սոցիալիզմի տապալումից հետո ո՛չ իշխանությունը, ո՛չ էլ բիզնեսը չգիտեին ինչ անել Արևելյան Բեռլինի փակված գործարանների դատարկ տարածքների հետ: Սկզբում լքված արդյունաբերական տարածքներում անդերգրաունդ ռեյվեր էին կազմակերպում, ապա նույն տեղերում բացվեցին առաջին ակումբները: Այդպես առաջացան Բեռլինի թերևս ամենալեգենդար երկու ակումբները՝ «Տրեզորը» և «Բերգհայնը», որոնք երկուսն էլ զբաղեցնում են նախկին էլեկտրակայանների շենքեր:

Աստիճանաբար այս ակումբների շուրջ ձևավորվում է մի ամբողջ մշակույթ: Ռեյվ գնալը դառնում է ոչ թե պարզապես ժամանակ անցկացնելու և ամենօրյա կենցաղից կտրվելու ձև, այլ ինքնաարտահայտման տարածություն, մշակութային և քաղաքական սթեյթմենթ: Ակումբներում և ռեյվերի ժամանակ ստեղծվում էր ազատության մի տարածք, որտեղ իշխում էր ազատ ինքնաարտահայտումը, տեղ չկար ատելության և դիսկրիմինացիայի համար: Այս ամենը սկսում է ձգել ոչ միայն բեռլինցիներին, այլև հազարավոր երիտասարդների ողջ Գերմանիայից ու Եվրոպայից: Բեռլինը դառնում է այն, ինչ Փարիզն էր քսաներորդ դարի սկզբին՝ արվեստների և ազատության մայրաքաղաք, Բեռլինում ապրելը՝ երազանք ազատամիտ և կրեատիվ երիտասարդության համար:



Իհարկե, այս պատմության մեջ ամեն ինչ չէ հարթ ու գեղեցիկ: Որքան զարգանում էր ռեյվշարժումը, այնքան ավելի էր այն կոմերցիալացվում: Այդ իմաստով, շատ բնորոշ է Բեռլինի Սիրո պարադի պատմությունը՝ միջոցառում, որը կարելի նկարագրել որպես անվճար ռեյվ Բեռլինի կենտրոնում: Այն սկսվում էր որպես ազատության բազմամարդ տոնակատարություն (1995-ի Սիրո պարադին մասնակցեց 280,000 մարդ), բայց մեծանալուն զուգընթաց այն սկսեց վերածվել կորպորատիվ փիառ-միջոցառման: Որպես բողոք Սիրո պարադի կոմերցիոն բնույթի դեմ՝ ավելի արմատական ռեյվերները սկսեցին իրենց միջոցառումը, որն անվանեցին Fuck parade (կթողնենք առանց թարգմանության): 2006-ին Սիրո պարադը տեղափոխվեց Գերմանիայի այլ քաղաքներ, իսկ 2010-ին միջոցառման ժամանակ տեղի ունեցավ դժբախտ պատահար, որին զոհ գնաց 21 մարդ, ինչից հետո այն փակվեց:

Բեռլինի տնտեսական խնդիրների հաղթահարման հետ սկսեցին վերանալ նաև ազատ տարածքները. պետությունը և բիզնեսը հիշեցին լքված գործարանների մասին և որոշեցին, որ դրանք կարելի է օգտագործել ավելի արդյունավետ, քան այնտեղ ռեյվեր կազմակերպելը: Արդյունքում շատ ակումբներ կորցրեցին իրենց նախկին տարածքները և ստիպված եղան տեղափոխվել կամ փակվել: Հետո հարվածեց համավարակը:

Եվ, այնուամենայնիվ, Բեռլինը շարունակում է մնալ ռեյվ մշակույթի ոչ-ֆորմալ մայրաքաղաքը: Բեռլինյան ակումբները դարձել են որակի ստանդարտ, իսկ բեռլինյան դիջեյները դարձել են ռեյվի դեսպաններն ամբողջ աշխարհում: Ռեյվը և ակումբները դարձել են բեռլինյան ինքնության կարևոր մի մասը, որով հպարտանում են անգամ այն բեռլինցիները, ովքեր երբևէ որևէ ռեյվ չեն այցելել:

Լոնդոն

ռեյվն ընդդեմ Թեթչերի կամ անդերգրաունդ ռեյվի պերճանքն ու թշվառությունը

80-ականներին Բրիտանիայում իշխում էր պահպանողական կուսակցությունը, որի առաջնորդ Մարգարեթ Թեթչերն աշխարհում շատերի կողմից համարվում էր հաջողված ղեկավարի կերպար՝ «Երկաթյա տիկին»: Բայց Բրիտանիայում նրա ժառանգությունը շատ ավելի հակասական է: Թեթչերի անցկացրած նեոլիբերալ բարեփոխումներից շահեցին Լոնդոնը և խոշոր բիզնեսը, բայց տուժեցին երկրի մարզերը և բազմահազար աշխատավորներ: Լուրջ խնդիր են նաև դառնում ծանր թմրանյութերը և ՄԻԱՎ-ի համաճարակը:

Եվ ահա այս մռայլ իրականություն են թափանցում ամերիկյան հաուսի և տեխնոյի առաջին սկավառակները: Իսկ այն բրիտանացի երիտասարդները, ովքեր ունեին հնարավորություն հանգստանալու իսպանական Իբիսա կղզում, այնտեղ մասնակցում են ռեյվերի, սկսում են մտածել, որ լավ կլիներ նման բան լիներ նաև իրենց հայրենիքում:

Առաջին ռեյվերը փոքր էին, այնտեղ չկար անգամ բեմ և նորմալ տեխնիկա, ամեն ինչ տեղի էր ունենում այսպես կոչված սաունդ-սիսթեմի շնորհիվ՝ բեռնատար ավտոմեքենա, որին ամրացված են մեծ դինամիկներ: Բայց շուտով ռեյվերին արդեն մասնակցում էին տասնյակ հազարներ, ինչպես օրինակ Քասլ Մորթոն Քոմմոնի հայտնի իվենթը, որին ներկա էր տարբեր հաշվարկներով քսանից քառասուն հազար մարդ: Կառավարությունը չգիտեր, թե ինչ անել այս նոր շարժման հետ: Այն հակակառավարական չէր, ռեյվերները պարզապես չէին նկատում կառավարությանը, ստեղծում էին մի նոր, այլընտրանքային իրականություն, որտեղ թեթչերիզմը պարզապես տեղ չուներ: Ռեյվերի ժամանակ տիրում էր համերաշխության մթնոլորտ, մասնակիցներն ապշահար պատմում էին, որ ֆուտբոլային ֆանատները գրկախառնվում էին հակառակորդ թիմերի ֆանատների հետ, իսկ սպիտակ բանվորական թաղամասերի բնակիչները՝ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

Բայց մարդիկ սովորաբար վախենում են նրանից, ինչը չեն հասկանում: Բացի այդ, մամուլը հենց սկզբից չսիրեց ռեյվ շարժումը: Որոշ ռեյվերի ժամանակ հանցագործ տարրերի և թմրամիջոցների հետ կապված միջադեպերն առիթ դարձան, որ ԶԼՄ-ները խոսեն ռեյվի մասին որպես «թմրամոլների երաժշտություն»: Այս կարծրատիպը սկսեց լայնորեն տարածվել, առավել ևս, որ սկսնակ ունկնդիրի համար այդ երաժշտությունը կարող է թվալ այնքան տարօրինակ, որ «սա լսելու համար պետք է մի բանի տակ լինես»: Այս միտքն ինքնին վիրավորական է էլեկտրոնային երաժշտության սիրահարների և այդ ոճով ստեղծագործող արվեստագետների համար, սակայն, այդ կարծրատիպը, ցավոք, բավական կենսունակ է:

Իրենց հերթին, բրիտանական անդերգրաունդ ռեյվերի կազմակերպիչներն էլ միշտ չէ, որ կարողանում էին լավ կազմակերպել միջոցառումների անվտանգությունը և ռեյվերի վայրեր սկսեցին թափանցել քրեական տարրեր, ինչը բերում էր անախորժությունների և անգամ ողբերգական միջադեպերի: Արդյունքում, երբ կառավարությունը որոշեց պատժամիջոցներ ընդունել ռեյվերի դեմ և ընդունվեց համապատասխան օրենքը, դրանք լայն հասարակության կողմից ծափահարություններով ընդունվեցին: Շարժումը սկսեց տեղափոխվել գիշերային ակումբներ, որտեղ իրավիճակն ավելի վերահսկելի էր թե՛ պրոմոութերների, թե՛ պետական մարմինների համար:

Այս ամենը դաս դարձավ և՛ կառավարությունների, և՛ ռեյվ-մշակույթի կրողների համար ոչ միայն Բրիտանիայում, այլև ամբողջ աշխարհում: Մի կողմից, կառավարություններն աստիճանաբար սկսեցին գիտակցել, որ պետք չէ այս կամ այն երաժշտական ոճն ասոցացնել արգելված նյութերի հետ և պայքարել այդ ոճի դեմ, այլ պետք է վերացնել այն սոցիալական պատճառները, որոնք բերում են թմրամիջոցներից կախվածությանը, կախվածություն ունեցող մարդկանց էլ օգնել հաղթահարել այն: Մյուս կողմից, ռեյվերի կազմակերպիչները սկսեցին ավելի պատասխանատու մոտենալ իրենց միջոցառումների անվտանգությանը, համագործակցել պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ, որպեսզի բացառվեն հանցագործությունները և թմրանյութերի հետ կապված միջադեպերը:



Վերջաբանի փոխարեն

դիջեյը նաև հոգեթերապևտ է

Եվ այսպես, ռեյվը ծաղկում է հատկապես այնտեղ, որտեղ կան ծանր պատմական ժառանգություն, տնտեսական դժվարություններ, այնտեղ որտեղ երիտասարդությունն ունի բազում խնդիրներ, իսկ կառավարությունը և լայն հասարակությունը միշտ չէ, որ պատրաստ են հասկանալ և օգնել երիտասարդներին:

Այս առումով, գուցե պատահական չէ, որ այսօր ամենադինամիկ զարգացող ռեյվ-շարժումը հենց մեր տարածաշրջանում է՝ հետխորհրդային երկրներում: Կիևը, Թբիլիսին և Մոսկվան մեր օրերի ռեյվի համաշխարհային կենտրոններ են համարվում, այստեղ ստեղծված որոշ պրոյեկտներ ճանաչված են ամբողջ ռեյվ-աշխարհում: Թափ է հավաքում ռեյվ-շարժումը մեզ մոտ, և, կարծում եմ, մի քանի տարվա հարց է, որ Երևանն իր արժանի տեղը զբաղեցնի էլեկտրոնային երաժշտության համաշխարհային քարտեզի վրա: Այստեղ էլ միմյանց հանդիպում են ծանր պատմական ժառանգությունը, նոր գտնված ազատությունն ու սոցիալ-տնտեսական դժվարությունները: Եվ, իհարկե, այստեղ էլ կան լքված գործարաններ և չօգտագործվող տարածքներ:

Հին ռեյվերները հաճախ ասում են, որ ռեյվը պարզապես ուրախ ժամանակ անցկացնելու ձև չէ, այլ հոգևոր փորձառություն: Եթե կուզեք՝ հոգեթերապիայի մի ձև, երբ դու ինքդ ես և՛ պացիենտը, և՛ բժիշկը, իսկ երաժշտությունը և պարը՝ թերապիան: Պատկերացրու, որ պարում ես մութ սրահում կամ աստղազարդ երկնքի ներքո և տեխնոյի հզոր բիթը խլացնում է աշխարհի աղմուկը: Չկա ոչինչ և ոչ ոք բացի քեզնից և երաժշտության բիթից, և դու կարող ես վերջապես մնալ միայնակ ինքդ քեզ հետ, զրուցել ինքդ քեզ հետ, հասկանալ, թե ինչն է քեզ տանջում և ինչու: Իսկ երբ դու հասկանում, գիտակցում և ընդունում ես քո ցավերը և վախերը, պարի ռիթմով շարժվող քո մարմինը, ուզես թե չուզես ազատվում է այդ ամենից: Իսկ երբ լույսը բացվի և դու հոգնած, բայց երջանիկ վերադառնաս տուն, դու արդեն մի քիչ ուրիշ մարդ կլինես՝ մի փոքր ավելի հանդարտ, մի փոքր ավելի բարի, մի փոքր ավելի ազատ:

Միխայել Զոլյան

Audiovision փառատոն ՆՓԱԿ-ում, 2004 թ.

2000 թվականին համադրող Եվա Խաչատրյանին հրավիրեցին Նորարար փորձառական արվեստի կենտրոն՝ իրականացնելու ավանգարդ երաժշտության հետ կապված ծրագրեր: Դրանք ներառում էին ինչպես ակադեմիական երաժշտություն, այնպես էլ ռոք, կարևորը էքսպերիմենտալ տարրի գոյությունն էր: 2003-ին հերթը հասավ նաև էլեկտրոնային պարային երաժշտությանը: Եվա Խաչատրյանը կապվեց Կասկադ ակումբի հիմնադիր Սմբատ Սիրաղեղյանի հետ, պարզեց, թե ովքեր են ժամանակի ամենաակտիվ դիջեյ-պրոդյուսերները և հրավիրեց նրանց ՆՓԱԿ-ում կենդանի համերգ կազմակերպելու: Փառատոնի լայնափն այսպիսին էր. X-Phobos, Docheads, Spectrum, DJ Barkhudar:

Փորձը հաջողվեց, և մեկ տարի անց էլեկտրոնային երաժշտությունն արդեն ընդգրկվեց ավելի խոշոր՝ համակարգչային արվեստի Audiovision փառատոնի շրջանակում: Այնտեղ արդեն նկարիչներն ու երաժիշտները զուգահեռ կենդանի ստեղծագործում էին՝ փոխազդելով մեկը մյուսի վրա:

Այդ տարիներից ի վեր էլեկտրոնային երաժշտությունն այս կամ այն կերպ առկա էր Եվա Խաչատրյանի համադրած գրեթե բոլոր ցուցահանդեսների ու փառատոնների բացումներին:

Հասմիկ Բարխուդարյան
ՆՓԱԿ

evnmag.com

կարդայեք առցանց

The Main
Design Store

@TheMainDesignStore

/

TheMain.am

/

Մհեր Մկրտչյան 10
(Միրզոյան գրադարան,
առաջին հարկ)